



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 115 2020

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 14.11.2020թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Մավալը՝ 5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի տնօրենը՝
ՀՀ գլխավոր դատախազությունում 3

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գևորգ Բաղդասարյան, Գոհար Ադոնց Մասնավոր հետապնդման գործերով անչափահաս տուժողների շահերի
պաշտպանության հիմնահարցը 4

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նանե Մելքոնյան Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը ՀՀ քրեական դատավարությունում:
Որոշ հիմնախնդիրներ 12
Զորայր Հարությունյան Ձերբակալված և կալանավորված անձանց հաղորդակցության ազատությունը և դրա
սահմանափակման հիմնախնդիրը 21
Ջոն Հայրապետյան, Աննա Խաչատրյան Գենետիկական ֆոտոռոբոտների կիրառումը օպերատիվ-
հետախուզական գործունեությունում 28

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սուրեն Քրմոյան, Շուշանիկ Ղուկասյան Էլեկտրոնային գործիքների ներդրումը՝ հանրագրի ինստիտուտի
խթանման համատեքստում 36
Լիլիթ Սուքիասյան Ընտրական իրավունքի սահմանափակումը իրավաբանական պատասխանատվության
համատեքստում 41
Մարտին Մանուկյան Պառլամենտարիզմը պատմության մեջ. Եվրոպական փորձը (շարունակություն) 46
Айк Цатурян Постоянные комиссии парламента как особые субъекты парламентского контроля 53

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Արմենակյան «Մայրցամաքային Եվրոպայի ընդհանուր իրավունքի կայացման հիմնական փուլերը» 57

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մարգարիտա Ղազարյան «Վարչական ակտ» եզրույթի իրավահամեմատական վերլուծությունը՝ հայրենական և
միջազգային իրավական համակարգերի համատեքստում 68

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 71

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում
տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 80

ԵԱՀԿ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՏՆՕՐԵՆԸ՝ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրեն Ինգիբյոր Սոլրուն Գիսլադոտիրիի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին կրկին ՀՀ դատախազություն այցելելու կապակցությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ ձևավորված հարաբերությունների ներկայիս մակարդակը և համա-



գործակցության հարուստ փորձը, որը նոր նախաձեռնությունների, համատեղ ծրագրերի իրականացման կարևոր նախապայման է հանդիսանում: Արթուր Դավթյանը նշել է, որ տիկին Գիսլադոտիրիի նախորդ այցից հետո անցած 2 տարվա ընթացքում Հայաստանում արմատական զարգացումներ են տեղի ունեցել դատաիրավական ոլորտի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ինստիտուցիոնալ, օրենսդրական և կազմակերպական բարեփոխումների իրականացման ուղղությամբ, որտեղ միջազգային գործընկեր կազմակերպությունների, այդ թվում նաև ԵԱՀԿ-ի աջակցությունը կարևոր նշանակություն է ունեցել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ տնօրենն իր գոհունակությունն է հայտնել ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության համա-

կարգերի կատարելագործմանն ուղղված համագործակցության նախագծերում ՀՀ դատախազության ներգրավվածության և այն շարունակելու դրսևորվող պատրաստակամության կապակցությամբ: Նա նշել է, որ առկա են նոր հնարավորություններ հատկապես դատախազության կարողությունների զարգացմանը նպաստելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական հիմքերի և իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության բարձրացման, այս համատեքստում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ եռակողմ ձևաչափով գործակցությամբ դատախազների վերապատրաստման ծրագրերի իրականացման հնարավորությունները:

ՀՀ գլխավոր դատախազը շեշտել է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը ապահովում է բավարար հնարավորություններ և կառուցակարգեր ազգային, կրոնական, ռասսայական խտրականության և ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների դեմ պայքարում, սակայն հանցավորության դեմ պայքարի գործիքակազմի և իրավական մտքի զարգացմանը զուգահեռ մշտապես արդիական է դատախազների մասնագիտական հմտությունների կատարելագործման, նոր գիտելիքների ձեռքբերման խնդիրը:

Քննարկվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից Արևելյան գործընկերության 6 երկրներում իրականացվող դատախազությունների կարիքների գնահատման ծրագրի ընթացքին, դատախազների գործառույթային անկախության ամրապնդմանը վերաբերող հարցեր:

Երկկողմ պատրաստակամություն է հայտնվել առավել ինտենսիվ դարձնել շփումները և տեղեկատվության փոխանակման գործընթացները:

ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Երևան քաղաքի դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԳՈՀԱՐ ԱԴՈՆՑ

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն
վարչական շրջանների դատախազության դատախազ

ՄԱՍՆԱՎՈՐ ՇԵՏԱՊԵՂՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒ

Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ կամ վերջիններիս մասնակցությամբ քրեական գործերով վարույթի՝ սովորական վարույթից տարբերվող իրավակարգավորումները պայմանավորված են նրանց տարիքային, և հետևաբար՝ ֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, մշակույթային, կրթական զարգացման առանձնահատկություններով: Այս հանրահայտ ու անվիճելի ձևակերպմանը կարելի է հանդիպել անչափահասների հանցավորության վիճակի և նրանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ վարույթի գրեթե յուրաքանչյուր ուսումնասիրության առաջին տողերում: Այն իսկապես բավարար հիմնավորում է քրեական դատավարության անչափահաս մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանելու և դրանք շարունակաբար կատարելագործելու համար:

Անչափահասներին բնութագրող վերը նշված հատկանիշները հրամայական են ոչ միայն նրանց մեղսագրվող, այլև նրանց նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկություններ սահմանելու և դրանց պատշաճ իրավակարգավորման համար: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը, սակայն, վկայում է, որ գիտական հետաքրքրություն են ներկայացնում, ուսումնասիրված ու վերլուծված են և կատարելագործման միտումներ են դրսևորում առավելապես անչափահաս կասկածյալների և մեղադրյալների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցերը: Իսկ անչափահաս տուժողների իրավունքների երաշխավորման մի շարք հարցեր

մինչ օրս թերկարգավորված են: Դրանցից հատկապես գործնական կարևորություն է ներկայացնում մասնավոր հետապնդման գործերով անչափահաս տուժողների շահերի պաշտպանության հարցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածների դրույթները ենթադրում են, որ մասնավոր հետապնդման գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի, իսկ վճռաբեկ դատարանի իրավունքին համապատասխան՝ դիմողի բողոքի հիման վրա¹, և կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Այս իրավակարգավորմանը համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, որպես քրեական հետապնդումը և քրեական վարույթը բացառող հանգամանքներ, նախատեսում են մասնավոր հետապնդման գործերով դիմողի բողոքի բացակայությունը և մեղադրյալի հետ տուժողի հաշտությունը:

Անդրադառնալով վարույթը բացառող այս հանգամանքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Աշոտ Բաբայանի* վերաբերյալ քրեական գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «հանցանք կատարած անձի համար հաշտությունը հանցանքի կատարման մեջ իրեն մեղավոր ճանաչելն է, այդ արարքի համար զղջալը, ավստոսանք հայտնելը, իսկ տուժողի համար՝ հանցանք կատարած անձին ներելը: Բացի այդ, հաշտությունը ենթադրում է տուժողի և ենթադրյալ հանցագործի կամավոր և փոխադարձ համաձայնություն միմյանց հետ հաշտվելու վերաբերյալ: Այսինքն՝ հաշտությունը պետք է լինի ինչպես գործողու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Արմեն Աբրահամյանի վերաբերյալ ՎԲ-73/08 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ. դեկտեմբերի 26-ի որոշում, կետ 11:

թյուն, այնպես էլ փոխադարձ գործողությունների արդյունք:

Հաշտության կամավոր բնույթը ենթադրում է հաշտվելու վերաբերյալ կողմերի ինքնուրույն և ազատ կամահայտնություն: Հաշտության փոխադարձ բնույթը նշանակում է, որ կողմերից երկուսն էլ պետք է հայտարարեն հաշտության մասին:

Հաշտության կամավոր և փոխադարձ բնույթի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող որոշում կայացնել հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ: Այլ կերպ՝ հաշտությունը երկու կողմերի փոխադարձ կամահայտնությունն է, այն երբեք չի կարող կրել միակողմանի բնույթ, և եթե տուժողը ցանկություն է հայտնում հաշտվելու, իսկ հանցանք կատարած անձը դրա դեմ առարկում է, կամ հակառակը, ապա հաշտության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու իրավական հիմքը բացակայում է: Նույն կերպ, հաշտությունը կամավոր և փոխադարձ չի կարող համարվել, հետևաբար՝ այդ հիմքով քրեական գործի վարույթը չի կարող դադարեցվել, եթե հաշտությունը հետևանք է տուժողի նկատմամբ հանցանք կատարած անձի գործադրած ոչ իրավաչափ ներգործության²»:

Ինչպես ակնհայտ է սույն մեկնաբանությունից, մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի և անձի նկատմամբ քրեական հետապնդման պայմանը տուժողի նախաձեռնությունն է, կամքն ու հայեցողությունն իր նկատմամբ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որի հիմքում այդ անձին չներելու վերջինիս ազատ գիտակցումն է: Նշվածը համապատասխանաբար կազմում է վարույթը բացառող երկու հանգամանքների՝ դիմողի բողոքի բացակայության և մեղադրյալի կամ կասկածյալի հետ տուժողի հաշտության բովանդակությունը: Առաջին դեպքում հանցագործությունից տուժած անձը, գիտակցելով իր նկատմամբ կատարված արարքի բնույթը, էությունը, որոշում

է չնախաձեռնել քրեական վարույթ կամ հետապնդում դրա կապակցությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ արդեն իսկ սկսված քրեական վարույթի կամ հետապնդման պայմաններում նույն ազատ կամքով որոշում է չպահանջել դրա շարունակություն: Քրեական հետապնդումը բացառող այս հանգամանքների էությունից ուղղակիորեն է բխում, որ դրանց հիմքում ոչ թե քրեական վարույթ կամ հետապնդում սկսելու տուժողի նախաձեռնության մեխանիկական բացակայությունն է կամ այն դադարեցնելու մասին ձևական դիրքորոշումը, այլ իր հանդեպ կատարված արարքի էության, դրա բնույթի և հետևանքների գիտակցման վրա հիմնված ազատ հայեցողությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը մասնավոր հետապնդման գործերով վարույթ սկսելու և այն շարունակելու հիմնական պայմանի վերաբերյալ կանոնից նախատեսում է մեկ բացառություն՝ կապված ընտանիքում բռնության դեպքերի հետ՝ չկարգավորված թողնելով այն դեպքերը, երբ անձը այլ դեպքերում որևէ պատճառով ինքնուրույն քրեական վարույթ չի կարող նախաձեռնել, այն է՝ չի կարող արտահայտել իր նկատմամբ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու վերաբերյալ իր կամքը: Այդ պատճառներից մեկը տուժողի տարիքային առանձնահատկություններն են:

Բանն այն է, որ տուժողը, մանկահասակությամբ պայմանավորված, կարող է առհասարակ չգիտակցել իր նկատմամբ հանցագործություն կատարված լինելու հանգամանքը, դրա բնույթը կամ ունակ չլինել արտահայտել իր կամքը հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ, առանձին դեպքերում, այդ կապակցությամբ անչափահասի դիրքորոշումը կարող է չհամապատասխանել վերը քննարկված չափանիշներին: Բոլոր այս դեպքերում հանցագործությունից տուժած անչափահասների շահերի պաշտպանությունը վտանգված է:

Անդրադառնալով այս խնդրին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, *Արմեն Աբրահամյանի* վերա-

² Աշոտ Բաբայանի վերաբերյալ ԵԱՔԴ/0157/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 13-ի որոշում, կետ 18:

բերյալ քրեական գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի որոշմամբ անդրադառնալով մասնավոր մեղադրանքի գործերով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց շրջանակին և այդ համատեքստում հստակեցնելով «դիմող» և «տուժող» հասկացությունների հարաբերակցությունը, նշել է, որ «մասնավոր հետապնդման գործերով «դիմող» դիտում է այն անձանց, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:

Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձն, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով³»:

Մեջբերված իրավամեկնաբանության երկիմաստությունը պատճառ է դարձել անչափահասների նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի և այդպիսի պահանջի բացակայության դեպքում վարույթի հետագա ընթացքի վերաբերյալ դատական տարբեր մոտեցումների: Բանն այն է, որ դրանում մի կողմից արձանագրվում է անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչների՝ մասնավոր մեղադրանքի գործերով դիմող հանդիսանալու, այսինքն՝ նրանց փո-

խարեն հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին պահանջ ներկայացնելու իրավունքը՝ այդ կերպ հիմք տալով մեկնաբանության, որ անչափահաս օրինական ներկայացուցիչ ծնողի բողոքի առկայությունը բավարար պայման է նրա նկատմամբ կատարված այդ խումբ հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթ նախաձեռնելու համար, մյուս կողմից փաստելով, որ եթե անձն անօգնական վիճակի կամ այլ պատճառով իր իրավունքները չի կարող պաշտպանել, ուրեմն նրա նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ վարույթը պետք է իրականացվի հանրային հետապնդման ընդհանուր կարգով: Արդյունքում, կարելի է բերել օրինակներ, երբ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչի բողոքի բացակայությունը կամ հետագայում մեղադրյալի հետ նրա հաշտությունը հիմք է դարձել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար⁴: Դրան հակառակ՝ դատական պրակտիկան մի շարք դեպքերում տուժողի օրինական ներկայացուցչի բողոքի բացակայությունը կամ հետագայում նրա հաշտությունը հիմք չի համարել քրեական հետապնդումը և վարույթը բացառելու համար⁵:

Առաջին մոտեցման հիմքում այն մեկնաբանությունն է, որ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչը վերջինիս փոխարեն իրացնում է նրա բոլոր, այդ թվում՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ բողոք ներկայացնելու և նրա հետ հաշտվելու դատավարական իրավունքները: Այս մոտեցման գործնական տարածմանը նպաստում է նաև Վճռաբեկ դատարանի մեջբերված իրավական դիրքորոշումը:

Անդրադառնալով նշված մեկնաբանությանը՝ փաստենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ տուժողի օրինական ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները սահմանող 77-րդ հոդվածը որևէ ուղղակի

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

³ ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԲ-73/08 քրեական գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի որոշում, կետ 13:

⁴ Տե՛ս Արթուր Հարությունյանի վերաբերյալ ԵԴ/0243/01/19 քրեական գործով Երևանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. հոկտեմբերի 11-ի որոշումը:

⁵ Տե՛ս Ռոման Օհանյանի վերաբերյալ ԵԴ/0548/01/19 քրեական գործով Երևանի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. հոկտեմբերի 29-ի դատավճիռը:

դրույթ չի պարունակում անչափահաս տուժողի փոխարեն նրա նկատմամբ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջ ներկայացնելու և կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտվելու նրա օրինական ներկայացուցչի իրավունքի մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրանց իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրանց անձից»:

Քննարկվող հարցին այս կամ այն կերպ առնչվող՝ տուժողի օրինական ներկայացուցչի կարգավիճակը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանել է տարբերակված իրավակարգավորումներով՝ կախված նրանից, թե վերջինս անգործունակ, թե սահմանափակ գործունակ անչափահաս տուժողի է ներկայացնում: Արդյունքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ որպես ընդհանուր կանոն, անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչին իր կողմից ներկայացվող անձից անբաժանելի իրավունքները, այդ թվում՝ նրա նկատմամբ հանցանք կատարած անձին ներելու կամ չներելու և համապատասխանաբար, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար բողոք ներկայացնելու կամ այն հետ վերցնելու կամ նրա հետ հաշտվելու իրավունք չունի: Անգործունակ տուժողի օրինական ներկայացուցիչը, ինչպես ուղղակիորեն է նշվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ մասում, իրավունք չունի հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը, հաշտվել տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ, հետ վերցնել դատավարության՝ իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը: Ավելին, նույն հոդվածի 5-րդ մասում ընդգծված է, որ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցչին իրավունք չունի կատարել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի շահերին հակասող որևէ գործողություն:

Ինչ վերաբերում է սահմանափակ գործունակ տուժողի օրինական ներկայացուցչին, ապա վերջինս, օժտված է բացառապես իր նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը հետ վերցնելու, կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու, իր շահերի պաշտպանության համար ներկայացված բողոքը հետ վերցնելու վերաբերյալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ մասնակցի մտադրության մասին իմանալու և այդ որոշումներին համաձայնվելու կամ չհամաձայնվելու իրավունք՝ առանց դրանց վրա ազդելու որևէ հնարավորության:

Տեղին է նկատել, որ տուժողի օրինական ներկայացուցչի իրավունքների վերոնշյալ քննարկումը ոչ միայն չի լուծում դիտարկվող հիմնահարցը, այլ ավելի է խորացնում այն՝ անգործունակ և սահմանափակ գործունակ տուժողների օրինական ներկայացուցիչների քրեադատավարական լիազորությունների սահմաններ գծելով քրեադատավարական գործունակության, անգործունակության կամ սահմանափակ գործունակության վերաբերյալ իրավակարգավորումների բացակայության պայմաններում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, չսահմանելով քրեադատավարական գործունակության սկիզբը, դրա սահմանափակման հիմքն ու ընթացակարգերը, իրավակիրառողին մեխանիկորեն տեղափոխում է քաղաքացիաիրավական գործունակության վերաբերյալ կարգավորումների դաշտ այն դեպքում, երբ դրանք քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու, քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու նրա հնարավորությունն են սահմանում: Քաղաքացիական և քրեադատավարական իրավունքների բովանդակության ու նշանակության անհերքելի տարբերությունները թույլ չեն տալիս այդ կարգավորումները կիրառելի համարել քրեական դատավարությունում:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, հաշտվելու իրավունքը համարելով անձից անբաժանելի, տուժողի օրինական ներկայացուցչի կամ որևէ այլ անձի համար չի նախատեսում անչափահասի նկատմամբ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործություն կատարած անձի դեմ բողոք չներկայաց-

ներու կամ նրա հետ հաշտվելու հնարավորություն: Հետևաբար, մասնավոր մեղադրանքի գործերով քրեական հետապնդումից հրաժարվելն այն հիմքով, որ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցիչը բողոք չի ներկայացրել հանցանք կատարած անձի դեմ կամ հաշտվել է նրա հետ, օրինական չէ:

Գործող իրավակարգավորումների պայմաններում առկա երկրորդ մոտեցման հիմքում անչափահաս տուժողի տարիքային անօգնականության գաղափարն է, որի հիման վրա, իրացնելով Վճռաբեկ դատարանի մեջբերված իրավական դիրքորոշման երկրորդ մասը, այն է՝ եթե անձն իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, ապա քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի ընդհանուր կարգով, անչափահաս տուժողի նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ գործերը քննվում են հանրային մեղադրանքի կարգով: Ավելի պարզ՝ իր նկատմամբ կատարված արարքի էությունը, բնույթը, դրա համար այն կատարած անձին ներելու, նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար բողոք ներկայացնելու իր իրավունքը, դրա իրացման հետևանքները չգիտակցելու կամ դրանք տարիքի պատճառով իրացնել չկարողանալու իրավիճակում օբյեկտիվորեն առաջ է գալիս տուժողի շահերի պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ գործադրելու անհրաժեշտություն, իսկ որպես այդպիսի մեխանիզմ՝ կարող է հանդես գալ հանրային հետապնդման վարույթը:

Ինչ վերաբերում է անչափահաս տուժողի փոխարեն նրա նկատմամբ հանցանք կատարած անձի հետ հաշտվելու նրա օրինական ներկայացուցչի իրավունքի բացակայությանը, ապա այն հայեցակարգային հարց է և պայմանավորված է իր նկատմամբ կատարված հանցագործության համար ներելու իրավունքի անբաժանելիությամբ: Բացառապես անձը կարող է որոշել՝ ներել, թե չներել իր նկատմամբ հանցանք կատարած անձին, հետևաբար անչափահաս օրինական ներկայացուցչին այդպիսի բացարձակ իրավունք վերապահելը վերջինիս իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխիք լինել չի կարող:

Քննարկվող մոտեցման գլխավոր խնդիրը տարիքային անօգնականության գաղափարի օրենսդրական ամրագրման բացակայությունն է, որը բացարձակ գնահատողականություն ենթադրելով երեխայի լավագույն շահի դիտարկման հիմքում, առնվազն չի կարող ապահովել միասնական իրավակիրառ պրակտիկա: Ավելի պարզ՝ երեխայի տարիքային անօգնականության գաղափարի, երեխայի լավագույն շահի գնահատման չափանիշների օրենսդրական ամրագրման բացակայությունը հանգեցնում է նրան, որ տուժողի անօգնականության մասին ցանկացած քննարկում միասնական հետևության է հանգեցնում բացառապես այն դեպքերում, երբ տուժողը մանկահասակ է: Այնինչ, ավելի բարձր տարիքի անչափահաս տուժողի զարգացման մակարդակը ևս կարող է չհամապատասխանել քրեական վարույթ նախաձեռնելու հարցի բարդությանը և մեղադրյալի հետ վերջինիս հաշտությունը կարող է չբավարարել այդ դատավարական գործոնի վերը քննարկված չափանիշներին:

Առկա խնդիրը լուծելու և իրավակիրառ պրակտիկան հնարավորինս միասնականացնելու նպատակով՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2016թ. դեկտեմբերի 16-ի նիստում ընդունված որոշմամբ, որի կատարումն ապահովվում է ՀՀ գլխավոր դատախազի 2017 թ. հունվարի 31-ի թիվ 13 հրամանով, հանձնարարվել է 14 տարին չլրացած երեխայի նկատմամբ կատարված հանցանքի կապակցությամբ վարույթն իրականացնել հանրային մեղադրանքի կարգով, և ինչպես տուժողի, այնպես էլ նրա օրինական ներկայացուցչի հետ կասկածյալի կամ մեղադրյալի հաշտությունը հիմք չհամարել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի նկատմամբ անզգույշ հանցանքը կատարվել է նրա ծնողի կողմից և նման հաշտությունը բխում է երեխայի լավագույն շահերից:

ՀՀ սահմանադրական դատարանը, քննարկելով անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչի՝ տուժողի փոխարեն բողոք ներկայացնելու, այն հետ վերցնելու և մեղադրյալի հետ հաշտվելու իրավունքների բացակայություն՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը, ըստ էության համաձայ-

նում է, որ տասնչորս տարին չլրացած անձի տարիքը և հասունության մակարդակը չեն համապատասխանում կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը: Բացի այդ, ՀՀ սահմանադրական դատարանն առաջ է քաշում անչափահաս տուժողի շահերի լրացուցիչ երաշխավորման անհրաժեշտության մասին վկայող ևս մի վիճակ, երբ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում հենց փոքրահասակի ծնողն է, իսկ որպես օրինական ներկայացուցիչ հանդես է գալիս փոքրահասակի մյուս ծնողը: Նման իրավիճակում ծնողների միջև հնարավոր հաշտությունը՝ կախված տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից, կարող է բխել կամ չբխել երեխայի լավագույն շահերից:

ՀՀ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրության 37-րդ հոդվածի դրույթները, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունված և 1990 թվականի սեպտեմբերի 2-ին ուժի մեջ մտած՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, առաջ է քաշել մասնավոր մեղադրանքի գործերով անչափահաս տուժողի շահերի պաշտպանության հիմնական երկու չափանիշներ.

1. Անչափահաս տուժողի լավելու իրավունք: Անչափահաս տուժողն իրեն վերաբերող գործընթացներում պետք է լաված լինի և այն չպետք է պայմանավորվի նրա տարիքով: Անչափահաս տուժողի լավելու իրավունքն, իհարկե, չի կարող ձևական լինել, հետևաբար, վերջինս պետք է իրավունք ունենա, որպեսզի իր կարծիքը հաշվի առնվի վարույթն իրականացնող մարմնի կողմից:

2. Երեխայի լավագույն շահ: Երեխային վերաբերող ցանկացած, այդ թվում՝ քրեական վարույթին վերաբերող հարցեր լուծելիս պետք է հիմք ընդունել երեխայի լավագույն շահը և տարբեր շահերի առկայության ու դրանց միջև հակասության դեպքում առաջնահերթություն և առավելություն տալ երեխայի շահին: Սահմանադրական դատարանն ուղղակիորեն է արձանագրում, որ երեխայի լավագույն շահի գնահատման պարտականությունը վարույթն իրականացնող մարմնին է վերապահված:

Վերոգրյալը վկայում է, որ անչափահասի նկատմամբ կատարված՝ մասնավոր հետապնդ-

ման ենթակա հանցագործության վերաբերյալ վարույթը հանրային կամ մասնավոր կարգով իրականացնելու հարցը լուծելիս գլխավոր չափանիշը երեխայի լավագույն շահն է: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի՝ կոնկրետ դեպքում անչափահասի նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ վարույթը մասնավոր, թե՛ հանրային կարգով իրականացնելը, այն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, թե՛ չենթարկելն է բխում երեխայի լավագույն շահից: Թեև երեխայի տարիքը կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ հանգամանքը գնահատելիս, ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն ուղղակիորեն է շեշտում հենց տասնչորս տարին չլրացած անձանց տարիքի անհամապատասխանությունը կասկածյալի, մեղադրյալի հետ հաշտվելու վերաբերյալ հարցի բարդությանը, սակայն այն չի կարող միակ չափանիշը լինել երեխայի լավագույն շահը որոշելու հարցում: Դեռ ավելին, ՀՀ Սահմանադրությունը հստակ նախատեսում է երեխայի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը, որը նաև նշանակում է, որ վերջինս իրավունք ունի դիրքորոշում հայտնել քրեական դատավարության յուրաքանչյուր փուլում, մասնավորապես այն հարցերով, որոնք վերաբերում են իրեն: Այլ կերպ ասած՝ մի շարք դեպքերում 14 տարին չլրացած անչափահասն, իրացնելով իր լավելու իրավունքը, կարող է արտահայտել իր հստակ կամքը, որը գործի մյուս հանգամանքների համատեքստում կարող է ենթադրել, որ վերջինիս լավագույն շահից է բխում հենց հաշտության հիմքով հանցանք կատարած անձին պատասխանատվությունից ազատելը:

Մեջբերված իրավակիրառ դատական պրակտիկան, սակայն, վկայում է, որ առկա իրավակարգավորումների և իրավամեկնաբանությունների բազմազանության և դրանցում հայեցակարգային տարբերությունների պատճառով վերը նշված երկու չափանիշները գործնականում իրացված չեն կամ իրացված են խիստ տարբերակված: Այս հանգամանքը ոչ միայն չլուծված է թողնում քննարկված տեսագործական խնդիրը, այլև վտանգում է անչափահաս տուժողների ու նրանց նկատմամբ հանցանք կատարած անձանց իրավունքներն ու օ-

րինական շահերը: Առկա խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել տարիքային անօգնականության գաղափարը, դրա տարիքային սահմանները՝ նախատեսելով այդ դեպքերում անչափահասների նկատմամբ կատարված մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունների դեպքերով անկախ նրանց կողմից բողոք ներկայացնելուց դատախազի կողմից վարույթը հանրային մեղադրանքի կարգով սկսելու և շարունակելու իրավասություն: Մասնավոր մեղադրանքից հանրային մեղադրանքի անցման հարցը լուծելիս որպես չափանիշ պետք է սահմանել «երեխայի լավագույն շահը»: Այլ կերպ ասած՝ անկախ անչափահաս տուժողի կողմից քրեական հայց հարուցելուց՝ դատախազն իրավասու պետք է լինի մասնավոր հետապնդման ենթակա հանցագործություններով նախաձեռնել քրեական վարույթ, եթե անչափահասն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու պատճառով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը և եթե դա բխում է նրա լավագույն շահից: Այս դեպքում քրեական վարույթը պետք է իրականացվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կամ դատական իրավունքում սահմանել «երեխայի լավագույն շահի» չափորոշիչները, որպես այդպիսիք դիտարկելով, ի թիվ այլնի՝

- երեխայի տարիքը,
- երեխայի կամքը, դրա բովանդակության և այն արտահայտելու եղանակի առանձնահատկությունները, գիտակցված լինելու աստիճանը, ծնողի կամ շրջապատի կողմից երեխայի կամքի վրա ազդելու հնարավորությունը,
- երեխայի օրինական ներկայացուցչի, ծնողի դիրքորոշումը,
- երեխայի նկատմամբ կատարված հանցանքի բնույթը, հանրային վտանգավորության աստիճանը, դրա հետևանքները՝ հանցագործությամբ պատճառված կոնկրետ վնասը, դրա չեզոքացման, այսինքն՝ վնասի ամբողջական վերա-

կանգնման հնարավորությունը, դրա համար անհրաժեշտ միջոցները,

- հանցագործությամբ պատճառված վնասի հնարավոր հետագա, երկրորդային կամ ածանցյալ հետևանքների հնարավորությունը (օրինակ՝ առողջությանը պատճառված վնասի դեպքում՝ հետագայում հնարավոր բարդությունների առաջացման հնարավորությունը, անչափահասի կողմից այդ բարդությունների առաջացման հնարավորության գիտակցումը),
- հանցանք կատարած անձի վարքագիծը, վերջինիս կողմից պատճառված վնասի հատուցմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը,
- հանցանք կատարած անձի և անչափահաս տուժողի միջև գոյություն ունեցող կապը (ազգակցական, ընկերական), նրանց միջև հարաբերությունները հանցագործությունից առաջ և դրանից հետո,
- անկախ տուժողի կամքից հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավոր ազդեցությունը նրանց հարաբերությունների վրա և այլն:

Վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում միջոցներ պետք է ձեռնարկի վերը նշված հանգամանքները պարզելու ուղղությամբ: Նկատի ունենալով, որ իր նկատմամբ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ բողոքելու, բողոքից հրաժարվելու կամ մեղադրյալի, կասկածյալի հետ հաշտվելու վերաբերյալ անչափահաս տուժողի իրական կամքը, այն արտահայտելու ունակությունը, դրա բովանդակության առանձնահատկությունները, գիտակցված լինելու աստիճանը, ծնողի կամ այլ անձանց կողմից դրա վրա ազդեցության հնարավորությունը և վերը նշված մյուս հանգամանքները պարզելու և գնահատելու համար կարող են պահանջվել գիտության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի այդ նպատակով կարող է նշանակվել նաև դատահոգեբանական փորձաքննություն: Համակցության մեջ գնահատման ենթակա նշված հանգամանքները ճշգրիտ պարզելու լրջագույն երաշխիք կա-

րող է լինել նաև անչափահասի հարցաքննությունը, որի շրջանակներում վերջինիս հարցադրումներ են կատարվելու նշված հանգամանքների շուրջ, հոգեբանի մասնակցությամբ կատարելու պարտադիր պահանջ սահմանելը:

Ներկայացված լուծումները բավարար երաշխիք կարող են լինել վեր հանված խնդիրները չեզոքացնելու և հանցագործությունից տուժած անչափահասների ու նրանց նկատմամբ հանցանք կատարած անձանց իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու համար: Թեև այդ

լուծումները ներկայացված են հենց անչափահասների շահերի պաշտպանության առանձնահատկությունների հաշվառմամբ, սակայն դրանք ընդհանուր ուղենիշ կարող են լինել ընդհանրապես քրեական վարույթում անօգնական տուժողների շահերի պաշտպանությունը երաշխավորելու համար՝ ընդհանուր անօգնականության գաղափարի ամրագրման և այդ անձանց նկատմամբ կատարված հանցագործության վերաբերյալ վարույթն անկախ նրանց կամքից հանրային կարգով իրականացնելու հնարավորություն ամրագրելու միջոցով:



ՆԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ,
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱՊԱՐԵՑՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Քրեադատավարական հարկադրանքի միջոցները քրեական դատավարության սուբյեկտների ոչ իրավաչափ գործողությունների հարկադրական խափանման ու նախազգուշացմանն ուղղված օրենքով նախատեսված այն միջոցներն են, որոնք քրեադատավարական ոլորտում կիրառվում են դրա համար լիազորված պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից համապատասխան հիմքերի առկայության դեպքում և կարգով, դատավարական բոլոր երաշխիքների պահպանմամբ և նպատակ են հետապնդում ապահովել քրեական դատավարության խնդիրների իրականացումը¹: Ստացվում է, որ դատավարական հարկադրանքի միջոցները կիրառվում են միայն օրենքով սահմանված կարգով և ուղղված են քրեական դատավարության ընդհանուր խնդիրների լուծմանը:

Դատավարական հարկադրանքի միջոց է նաև պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը²:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ) 152-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի

քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:

Վերը նշված ձևակերպումից հետևում է, որ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կիրառվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում.

(ա) միայն կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, (բ) միայն հանրային ծառայողի նկատմամբ, (գ) պետք է բավարար հիմքեր լինեն ենթադրելու, որ պաշտոնում մնալով տվյալ անձը կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, կզբաղվի հանցավոր գործունեությամբ (այս հիմքերի առկայության մասին կարող են վկայել կասկածյալի կամ մեղադրյալի կողմից գործի համար նշանակություն ունեցող փաստաթղթերի ոչնչացման փորձը, ստուգումներ կամ դատահաշվապահական փորձաքննություն անցկացնելուն խոչընդոտելը, իր ծառայական ենթակայության տակ գտնվող տուժողներին, վկաներին, ինչպես նաև կասկածյալներին կամ մեղադրյալներին ցուցմունք տալուց հրաժարվելուն կամ սուտ ցուցմունք տալուն հարկադրելը և այլն)³, (դ) միայն դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշմամբ:

Ինչպես երևում է վերոշարադրյալից, պայմաններից մեկն այն է, որ պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման դեպքում մեղադրյալը (կասկածյալը) պետք է հանրային

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Գ.Ս.Ղազինյանի խմբ., Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 342:
² Մեր կարծիքով՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում բառակապակցությունը տեղին չէ գործածված գործող օրենսգրքում, քանի որ դադարեցումը չի կարող ժամանակավոր լինել: Ճիշտ կլինի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում բառակապակցության փոխարեն օգտագործել «պաշտոնավարման կասեցում» տարբերակը: Նշենք, որ այս տեսանկյունից ողջունելի է ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում օգտագործված «պաշտոնավարման կասեցում» անվանումը:
³ Տե՛ս նույն տեղում, էջ 383-384:

ծառայող լինի: Ընդ որում՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման հարցը պետք է քննարկվի, եթե հանրային ծառայության մեջ գտնվող մեղադրյալը (կասկածյալը) կատարել է այնպիսի հանցագործություն, որն առնչվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությանը կամ քրեական վարույթով տուժողները կամ վկաները գտնվում են հանրային ծառայող հանդիսացող մեղադրյալի հետ ծառայողական ենթակայության հարաբերություններում կամ հանրային ծառայության մեջ գտնվող մեղադրյալը (կասկածյալը), օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, կարող է խոչընդոտել փորձաքննությունների և այլ քննչական գործողությունների կատարմանը⁴:

Հարկ է նշել, որ «Հանրային ծառայություն» և «հանրային ծառայող» հասկացությունները տրված են «Հանրային ծառայության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք): Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Պետական ծառայությունն ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահ-

մանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվում է հանրային ծառայող⁵:

Հաջորդ պայմանը համապատասխան հիմքերի առկայությունն է, որոնցից խնդրահարույց է հատկապես մեղադրյալի (կասկածյալի)՝ հանցավոր գործունեությամբ զբաղվելու հիմքը: Մեր կարծիքով՝ այս հիմքն ուղղակիորեն առնչվում է անմեղության կանխավարկածի հետ: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Նշենք, որ «անմեղության կանխավարկածի սկզբունքը կարևոր երաշխիք է անձի անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար: Այն սերտորեն առնչվում է քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառման հետ, քանի որ դրանք կիրառվում են այն անձի նկատմամբ, որն, ըստ օրենքի, անմեղ է»⁶: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քանի դեռ չի հաստատվել հանցավոր գործունեություն իրականացնելու հանգամանքը՝ չենք կարող քննարկել այն հարցը, որ մեղադրյալը (կասկածյալը) հետագայում էլ կշարունակի զբաղվել այդպիսի հանցավոր գործունեությամբ: Հետևաբար կարծում ենք, որ այս հիմքը հակասում է անմեղության կանխավարկածին:

Ինչպես նշվեց, գործող օրենսդրության համաձայն՝ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կիրառում է դատախազը կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչը: Մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս հարկադրանքի միջոցի կիրառող սուբյեկտերի շրջանակը տարբեր է: Մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՌԴ ՔԴՕ) համաձայն՝ քննիչը հետաքննության մարմնի ղեկավարի համաձայնությամբ, ինչպես նաև հետաքննիչը՝ դատախազի համա-

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Մաս 1, Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, էջ 552:

⁵ Տե՛ս Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք, ՀՕ-206-Ն, ՀՀՊՏ 2018.03.29/24 (1382), 23.03.2018թ.-ի

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Գ.Ս.Ղազինյանի խմբ., Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 162:

ծայնությամբ, միջնորդություն են հարուցում դատարան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ պաշտոնավարման ժամանակավոր կասեցում կիրառելու նպատակով, ընդ որում՝ դատարանը նման միջնորդությունը քննարկում է ստանալու պահից 48 ժամվա ընթացքում: Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Բելառուսի ՔԴՕ) համաձայն՝ դատախազը, նրա տեղակալը կամ Բելառուսի Հանրապետության Քննչական կոմիտեի նախագահը, Բելառուսի Հանրապետության Պետական անվտանգության կոմիտեի նախագահը կամ նրա պարտականությունները կատարող անձը, ինչպես նաև քննիչը՝ դատախազի կամ նրա տեղակալի համաձայնությամբ, կամ դատարանն իրավունք ունի կիրառել պաշտոնավարման ժամանակավոր կասեցում կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ: 2015 թվականին ուժի մեջ մտած Ղազախստանի Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Ղազախստանի ՔԴՕ) համաձայն՝ այդպիսի իրավասությամբ օժտված է միայն դատարանը: Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, որը համարվում է Եվրոպայի ամենահին օրենսգրքերից մեկը, ևս ամրագրված է, որ նման իրավասություն ունեցող մարմինը դատարանն է:

Տեսական գրականության մեջ առաջարկվում է մոտեցում, որ անձի սահմանադրական իրավունքների սահմանափակումը պետք է լինի դատական վերահսկողության օբյեկտ: Այսինքն՝ նախնական դատական վերահսկողության պետք է ենթարկվեն անձի որոշ սահմանադրական իրավունքների սահմանափակմանն առնչվող հարցերը: Այս դիտանկյունից պետք է նշել, որ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման դեպքում սահմանափակվում է անձի՝ Սահմանադրությամբ և կոնվենցիաներով երաշխավորված աշխատանքի և գործունեության տեսակն ընտրելու իրավունքը, և նշված իրավունքի սահմանափակումը դատարանի վերահսկողության շրջանակներում իրականացնելը, մեր կարծիքով, ճիշտ է: Այդ կապակ-

ցությամբ հարկ է վկայակոչել ՀՀ Վճռաբեկ դատարանի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) Լ. Զարյանի գործով որոշմամբ արտահայտված դիրքորոշումներն առ այն, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների և որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը, սակայն, դատախազական հսկողության համեմատ ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին պայմանավորում են վերահսկողության օբյեկտի, վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի) ընդունվող որոշումների և դրանց իրավական նշանակության տարբերությունները (...)»⁷:

Ինչպես նշվեց, պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը սահմանափակում է անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ազատ ընտրության, աշխատելու և դրա դիմաց համապատասխան վարձատրություն ստանալու իրավունքները: Մեր խորին համոզմամբ՝ նշված իրավունքների սահմանափակումները պետք է կիրառվեն դատական վերահսկողության շրջանակներում: Դատական վերահսկողությունը, ինչպես նշում է Վճռաբեկ դատարանը, դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրակացման երաշխիքներից մեկն է ինչպես դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովման, այնպես էլ վերոնշյալ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման տեսանկյունից⁸:

Գործող օրենսգրքի 278-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը քննում է անձի հիմ-

⁷ Տե՛ս Լաուրա Գարեգինի Զարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը:

⁸ Տե՛ս Դավիթ Վարոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՇԴ/0005/11/14 որոշման 22-րդ կետը:

նական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները: ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը, որտեղ գետեղված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ամրագրել է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: Կարծում ենք՝ այս պայմաններում օրենսդրության մեջ պետք է կատարվի փոփոխություն, և ամրագրում ստանա այն նորմը, որ քննիչը՝ դատախազի համաձայնությամբ, ինչպես նաև դատախազը իրավունք ունեն միջնորդել դատարան, որպեսզի կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում:

Այս առումով ընդդիմախոսները հնարավոր է բարձրաձայնեն այն հարցը, որ այդպիսիով կծանրաբեռնվեն դատարանները: Նշենք, որ մեր հարցումների արդյունքում ստացված տվյալները վկայում են այն մասին, որ տարեկան կտրվածքով պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մի քանի որոշում է կայացվում: Մասնավորապես՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում կայացվել է 4 որոշում, որից մեկի կիրառմանը դատախազը համաձայնություն չի տվել: Կարծում ենք՝ մեր ներկայացրած փաստարկները վկայում են այն մասին, որ դատարանին նման իրավասություն վերապահելը ծանրաբեռնվածություն չի առաջացնի: Դեռ ավելին՝ դատական երաշխիքը կնպաստի անձի հիմնական իրավունքների և ազատությունների առավել բարձր պաշտպանվածությանը:

Պետք է արձանագրել, որ այս հարցի վերաբերյալ բավականաչափ հետաքրքիր կարգավորումներ առկա են Նախագծի շրջանակներում: Նախագծի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայող հանդիսացող մեղադրյալի պաշտոնավարությունը իրավասու մարմնի որոշմամբ կարող է կասեցվել, եթե

բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնավարումը շարունակելով նա կխոչընդոտի վարույթի ընթացքին, ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ: Նախագծի 122-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում Նախագծի 115-րդ հոդվածի 4-րդ մասի 3-8-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցները կարող է կիրառել՝

1. քննիչը՝ մինչև մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին դատախազին հանձնելը,
2. հսկող դատախազը՝ մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին քննիչից ստանալու պահից մինչև այն դատարան հանձնելը,
3. դատարանը՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությունը լուծելիս:

Նախագծում նշվում է նաև, որ «115-րդ հոդվածի 4-րդ մասի 3-4-րդ կետերով (գրավ, պաշտոնավարման կասեցում) նախատեսված այլընտրանքային միջոցները քննիչը կարող է կիրառել բացառապես հսկող դատախազի համաձայնությամբ»:

Նախագծի կարգավորումների պարագայում նկատում ենք, որ պաշտոնավարման կասեցումը կիրառվում է միայն հանրային ծառայության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ⁹:

Բացի այդ, Նախագծով նշված խափանման միջոցը կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտներն են քննիչը՝ հսկող դատախազի համաձայնությամբ, հսկող դատախազը և դատարանը: Ընդ որում՝ քննիչը նման իրավասություն ունի մինչև մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ միասին դատախազին հանձնելը, իսկ հսկող դատախազը՝ մեղադրական եզրակացությունը քրեական գործի հետ

⁹ Վերոնշյալ հարցի կապակցությամբ Նախագծի մոտեցումը հետևյալն է. անձի տեսանկյունից որևիցե տարբերություն չկա՝ իրեն ինչ էս անվանում՝ կասկածյալ, թե մեղադրյալ, պետք է ելնել անձի փաստացի վիճակից: Տվյալ անձը պետության անունից մեղադրվում է պաշտոնապես հանցանք կատարելու մեջ: Երբ պետությունը անձին մեղադրում է հանցանք կատարելու մեջ, տվյալ անձը ստանում է պաշտպանություն, որն անհրաժեշտ է տվյալ մեղադրանքից պաշտպանվելու համար: Քանի որ «կասկածանք» և «մեղադրանք» հասկացությունների մեջ բովանդակային առումով տարբերություն չկա (շեմերի մասին է խոսքը), դրա համար Նախագծում փորձ է արվել խուսափել նման ձևակերպությունից, ուստի Նախագիծը հրաժարվել է «կասկածյալ» սուբյեկտից և միասնական դատավարական կարգավիճակ սահմանել քրեական հետապնդման ենթարկված անձի համար:

միասին քննիչից ստանալու պահից մինչև այն դատարան հանձնելը: Ինչ վերաբերում է դատարանի իրավասությանը, ապա նշենք, որ այն նորոյթ է ՀՀ քրեական օրենսդրության շրջանակներում: Նախագծի իրավակարգավորումների համաձայն՝ դատարանը այս խափանման միջոցը կարող է կիրառել այն դեպքում, երբ միջնորդություն է ներկայացվում դատարան կալանքի, տնային կալանքի կամ վարչական հսկողության կիրառման, սակայն դատարանը, ի տարբերություն գործող օրենսգրքի, միջնորդությունը մերժելու կամ ամբողջությամբ բավարարելու մասին որոշումներ ընդունելուց բացի, կարող է իր իրավասության շրջանակներում միջնորդությունը մասնակի բավարարել, երբ հանգի այն հետևության, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելը հնարավոր է առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ կամ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել միջնորդված խափանման միջոցի՝ առավել մեղմ պայմաններով կիրառմամբ (կալանքի կամ տնային կալանքի առավել կարճ ժամկետով, վարչական հսկողության առավել բարենպաստ պայմաններով: Բացի այդ, Նախագիծը դատարանին հնարավորություն է ընձեռում խափանման միջոցի ժամկետի երկարացման հարցը քննարկելիս ևս որոշում կայացնել այն մասնակի բավարարելու մասին: Բերենք պրակտիկ օրինակ: Քննիչը միջնորդում է դատարան, որ անձի նկատմամբ կիրառվի կալանքը որպես խափանման միջոց, սակայն դատարանը, օգտվելով իր իրավասությունից, մասնակի է բավարարում միջնորդությունը՝ կալանքի փոխարեն կիրառելով, օրինակ, այլընտրանքային խափանման միջոցներից պաշտոնավարման կասեցումը կամ երկու խափանման միջոց՝ գրավ և պաշտոնավարման կասեցում: Խափանման միջոցի ժամկետի երկարացման դեպքում ևս դատարանն իրավասու է կիրառել այլընտրանքային խափանման միջոցներ, եթե հանգի այն համոզման, որ խափանման միջոցի ժամկետը երկարացնելու փոխարեն մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խա-

փանման միջոցների համակցության կիրառմամբ: Մեր կարծիքով՝ Նախագծի նման կարգավորումն իրավաչափ չէ: Մասնավորապես՝ դատարանը երբեք չպետք է դառնա, այսպես ասած, «քննիչ» և մատնաշի՝ որ խափանման միջոցը կարող է կիրառվել անձի նկատմամբ: Դատարանն իրավասու է քննարկել և սահմանափակվել բացառապես իրեն ներկայացված միջնորդության սահմաններով: Քննիչի բացառիկ իրավասությունն է որոշել, թե՞ որ խափանման միջոցը ընտրի, դատարանը կիրառողի դեր է կատարում, այսինքն՝ քննիչի ու դատարանի գործառույթները չպետք է նույնանան:

Հարկ է նշել նաև, որ Նախագիծն ուղղակիորեն ամրագրում է, որ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը ենթակա է դատական բողոքարկման: Ընդ որում՝ մինչդատական (վարույթային) ակտերի դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան՝ միայն իրավասու դատախազին բողոքարկելու և նրա կողմից չբավարարվելու դեպքում: Իսկ վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում բողոքարկումն իրականացվում է Նախագծի՝ «Հատուկ վերանայումը» 48-րդ գլխի շրջանակներում:

Գործնականում հնարավոր են նաև իրավիճակներ, երբ մինչդատական վարույթի ընթացքում դատախազը կամ նրա համաձայնությամբ՝ քննիչը չկիրառի նշված հարկադրանքի միջոցը, սակայն դատական վարույթի ընթացքում ծագի նման հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտություն¹⁰: Այս առնչությամբ հատկանշական է, որ 2015 թվականին ուժի մեջ մտած Ղազախստանի ՔԴՕ-ում նշվում է, որ դատարանը պաշտոնավարման կասեցում կարող է կիրառել ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, այնպես էլ դատաքննության ընթացքում, ընդ որում՝ կիրառվում է ինչպես մեղադրյալի ու կասկածյալի, այնպես էլ ամբաստանյալի նկատմամբ: Նախագծի կարգավորումների՝ «Նախնական դատախազի վերտառությամբ 42-րդ գլխի շրջանակներում դատարանը, ի թիվս այլ հարցերի, քննարկման առարկա է դարձնում նաև մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը: Վերը նշված դրույթների վերլուծու-

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1, Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, էջ 552:

թյունից ստացվում է, որ Նախագծի կարգավորումների պայմաններում պաշտոնավարման կասեցումը դատարանը կարող է կիրառել ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ դատական քննության ընթացքում:

Անձի պաշտպանության իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր ենք համարում քննարկել այն հարցը, թե արդյոք պետք է ժամկետ նախատեսել պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման դեպքում: Այս հարցի առնչությամբ Ռ. Գ. Բիկմիևը նշում է, որ դատարանի որոշման հիման վրա պաշտոնավարման ժամանակավոր կասեցման դեպքում պետք է մատնանշվի կասեցման ժամկետ¹¹: Օրինակ՝ նման ժամկետ նշվում է Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Ուկրաինայի ՔԴՕ): Վերջինիս համաձայն՝ պաշտոնավարման կասեցումը կիրառվում է ոչ պակաս, քան 2 ամիս ժամկետով, որը կարող է երկարացվել դատախազի միջնորդությամբ: Ըստ Օ. Վ. Բալանդյուկի՝ նման ժամկետ նախատեսելը հաստատվում է այն հանգամանքով, որ պաշտոնավարման ժամանակավոր կասեցումն իր էությանը սահմանափակում է անձի՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու սահմանադրական իրավունքը, հետևաբար պետք է հստակ ժամկետ որոշել այս դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման համար՝ հնարավորություն ընձեռելով հետագայում այն երկարացնել¹²: Համամիտ լինելով վերը նշված դիրքորոշումներին՝ կարծում ենք, որ նման կարգավորումն արդարացված է անձի պաշտպանության իրավունքի տեսանկյունից, և մեր օրենսդրության մեջ այն ամրագրելը խրախուսելի է:

Օրենսգրքում առկա թերություններից զատ՝ այս դատավարական հարկադրանքի միջոցի օրենսդրական կարգավորման հարթությունում առկա են բացեր, որոնք կքննարկենք սույն հոդվածի շրջանակներում: Բացերից մեկն այն է, որ առկախ է մնում այն հարցը, թե պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման պարագայում պահպանում է արդյոք հանրային ծառայողն իր աշխատավարձը, և եթե այո, ապա որ-

քան պետք է լինի այն: Սկզբից ևեթ նշենք, որ որոշ սուբյեկտների պարագայում այս հարցը իր կարգավորումն ստացել է առանձին օրենքների շրջանակներում, որի մասին կխոսենք ստորև: ԱԴՀ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ հարցի առավել հետաքրքրական կարգավորումներն առկա են Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի քրեական դատավարության օրենսգրքերում: Այսպես՝ Բելառուսի ՔԴՕ-ի 131-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պաշտոնավարման ժամանակավոր կասեցման դեպքում կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի ստանալ ամենամսյա պետական նպաստ, եթե չի զբաղվում այլ վճարովի գործունեությամբ: 2015 թվականին ուժի մեջ մտած Ղազախստանի ՔԴՕ-ի 158-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ պաշտոնավարման կասեցման դեպքում կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալն իրավունք ունեն ստանալ ամենամսյա պետական նպաստ նվազագույն աշխատավարձից ոչ պակաս չափով, եթե նրանք չեն կարող աշխատել այլ պաշտոնում կամ ընդունվել այլ աշխատանքի՝ իրենցից անկախ պատճառներով: ՌԴ ՔԴՕ-ի 114-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնավարման ժամանակավոր կասեցման դեպքում կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի ստանալ ամենամսյա նպաստ, որը վճարվում է նույն օրենսգրքի 131 հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին համապատասխան, այն է՝ ՌԴ-ում բնակչության կենսապահովման համար նախատեսված նվազագույն չափով: Կարծում ենք՝ մեր օրենսդրության մեջ առկա այս բացը պետք է լրացնել՝ ամրագրելով դրույթ առ այն, որ մեղադրյալը կամ կասկածյալը պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման դեպքում իրավունք ունի ստանալ ամենամսյա պետական նպաստ՝ նվազագույն աշխատավարձից ոչ պակաս չափով, եթե չի կարող աշխատել այլ պաշտոնում կամ ընդունվել այլ աշխատանքի՝ իրենցից անկախ պատճառներով:

Ինչ վերաբերում է առանձին սուբյեկտների լիազորությունների կասեցմանը, նշենք, որ դատավորի, դատախազի, ոստիկանության ծա-

¹¹ Տե՛ս **Бикмиев Р. Г.** Временное отстранение от должности подозреваемого или обвиняемого в уголовном судопроизводстве дисс. на соискание ученой степени канд. юрид. наук, Казань 2015, էջ 221:

¹² Տե՛ս **Баландюк О.В.** Временное отстранение от должности: вопросы исполнения в уголовном процессе, дата размещения статьи: 16.02.2017:

ռայոդի, ազգային անվտանգության մարմինների ծառայոդի, մաքսային ծառայոդի, հարկադիր կատարոդի, փրկարար ծառայության ծառայոդի լիազորությունները կասեցվում են օրենքի ուժով¹³: Այս սուբյեկտների աշխատավարձի հետ կապված հարաբերությունները ևս կարգավորվում են համանուն օրենքներով: Այսպես՝ «Դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 165-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու կապակցությամբ դատավորի լիազորությունները կասեցվում են Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ մինչև քրեական գործով վարույթի ավարտը: Դատավորի լիազորությունները կասեցնելու ընթացքում դատավորն ստանում է հատուցում՝ որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող¹⁴: Վերոգրյալից բխում է, որ դատավորը ստանում է ամբողջ աշխատավարձն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում գտնվել է քրեական հետապնդման մեջ:

«Դատախազության մասին» օրենքի համաձայն՝ դատախազի լիազորությունները կասեցվում են դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում՝ մինչև համապատասխան վերջնական որոշման ընդունումը: Դատախազների լիազորությունները կասեցվում են գլխավոր դատախազի հրամանով: Ինչ վերաբերում է աշխատավարձի հետ կապված հարցին, ապա օրենքը նշում է, որ դատախազի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է¹⁵:

«Ոստիկանությունում ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» մասին օրենքներ-

ում ևս նշվում է, թե որ դեպքերում են կասեցվում լիազորությունները: Ինչ վերաբերում է այս սուբյեկտների աշխատավարձի հետ կապված հարցերին, ապա նշենք, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» և «Փրկարար ծառայության մասին» օրենքներում նշվում է, որ աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում¹⁶: «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի համաձայն՝ հարկադիր կատարողին աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում¹⁷: Կարծում ենք՝ արդարացի չէ օրենսդրի այն մոտեցումը, որ աշխատավարձի վճարումը կապվում է միայն գործի՝ արդարացնող հիմքի ավարտի հետ: Մեր խորին համոզմամբ՝ ոչ միայն արդարացնող հիմքի, այլև ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու պարագայում աշխատավարձը պետք է տրամադրել, որովհետև այդ ընթացքում մեղադրյալը համարվում է անմեղ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե ինչպես է հատուցվում նշված հարկադրանքի միջոցի անօրինական կիրառման հետևանքով պատճառված վնասը: ՀՀ ՔԴՕ-ի 63-րդ և 65-րդ հոդվածի համաձայն՝ կասկածյալը, մեղադրյալը իրավունք ունեն ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով անօրինական պատճառված վնասի հատուցում: ՀՀ ՔԴՕ-ի 66-րդ հոդվածի համաձայն՝ արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մա-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹³ Ուշագրավ է այն փաստը, որ ՌԴ ՔԴՕ-ի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ պաշտոնավարման կասեցում կիրառվում է ՌԴ նախագահի որոշմամբ՝ ՌԴ Գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա, այն էլ, երբ վերոնշյալ անձինք մեղադրվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ:

¹⁴ Տե՛ս ՀՀ Դատական օրենսգիրք, ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368), 07.02.2018թ.-ի:

¹⁵ Տե՛ս Դատախազության մասին ՀՀ օրենք, ՀՕ-198-Ն ՀՀՊՏ 2017. 12. 13/74 (1349), 17. 11. 2017թ.-ի:

¹⁶ Տե՛ս Ոստիկանությունում ծառայության մասին ՀՀ օրենք, ՀՕ-401-Ն, ՀՀՊՏ 2002.08.08/32(207) 03.07.2002թ.-ի, Փրկարար ծառայության մասին ՀՀ օրենք, ՀՕ-171-Ն, ՀՀՊՏ 2005.08.24/54(426) 08.07.2005թ.-ի:

¹⁷ Տե՛ս Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին ՀՀ օրենք, ՀՕ-40-Ն, ՀՀՊՏ 2004.03.31/18 (317) 18.02.2004թ.-ի:

սով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ: Մեր կարծիքով, ինչպես աշխատավարձը, այնպես էլ վնասի հատուցումը պետք է տրվի ոչ միայն 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով (ռեաբիլիտացիոն հիմքեր), այլև նույն հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով (ոչ ռեաբիլիտացիոն հիմքեր) նախատեսված հիմքերի առկայության դեպքում: Նշենք, որ գործող օրենսդրության պայմաններում վնասի հետ կապված հարցերը լուծվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով¹⁸:

Հաջորդ հարցը, որին անդրադարձ ենք կատարել սույն հոդվածի շրջանակներում, այս հարկադրանքի միջոցի ընթացակարգն է:

Գործող օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումն ուղարկվում է նրա աշխատավայրի վարչակազմի ղեկավարին, որն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին: Այս առումով պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման համար կիրառվող ընթացակարգը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի: Առաջինը սովորական ընթացակարգն է, այն է՝ դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշման կայացման փուլն է, երկրորդը՝ հատուկ, որը նախատեսում է, որ այդ որոշումն ուղարկվում է հանրային ծառայող հանդիսացող պաշտոնատար անձի աշխատակազմի ղեկավարին: Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումը կատարված է, եթե վարչակազմի ղեկավարը, հիմք ընդունելով դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու որոշումը, գերատեսչական հրամանով կասեցնում է մեղադրյալի (կասկածյալի) պաշտոնավարությունը: Վարչակազմի ղեկավարը ձեռնարկված միջոցառումների մասին տեղյակ է պահում որոշումը կայացրած մարմնին կամ անձին¹⁹:

Գործող օրենսգրքը կարգավորում է միայն այն դեպքը, երբ կասկածյալը կամ մեղադրյալը ունի վերադաս, որը աշխատավայրի վարչակազմի ղեկավարն է, մինչդեռ կարգավորված չեն այն դեպքերը, թե ում է ուղարկվելու պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումը, եթե հանրային ծառայողը զբաղեցնում է այնպիսի պաշտոն, որին հավակնողները նշանակվում կամ ընտրվում են: Մեր բարձրաձայնած հարցի պատասխանը Նախագծում որոշակի կարգավորում է ստացել: Այսպես՝ Նախագծի 126-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի պաշտոնավարման կասեցման մասին որոշումն ուղարկվում է նրա անմիջական վերադասին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ նրան նշանակող պաշտոնատար անձին, ով որոշումը ստանալուց հետո անհապաղ պարտավոր է կատարել այն և դրա մասին գրավոր տեղյակ պահել որոշումը կայացրած մարմնին կամ անձին: Ինչ վերաբերում է հանրային ծառայող հանդիսացող այն պաշտոնատար անձանց, ինչպիսիք են ավագանիները և պատգամավորները, որոնք ընտրվում են ժողովրդի կողմից, նրանց նկատմամբ չի կարող կիրառվել պաշտոնավարման կասեցումը, որովհետև նրանք վերադաս չունեն: Այսպիսի պայմաններում առաջ է գալիս նրանց լիազորությունները դադարեցնելու հարցը: Ուստի առաջարկում ենք՝ օրենսդրության մեջ ավելացնել դրույթ, որ ընտրված պաշտոնատար անձանց դեպքում պետք է դիմել նրանց լիազորությունները դադարեցնող մարմնին: Նախագծում նշվում է նաև, որ խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշումը անհապաղ հանձնվում է խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին, իսկ դրա պատճենն այն անձին, ում նկատմամբ կիրառվում է խափանման միջոցը: Այսինքն՝ ոչ միայն կիրառման, այլև վերացման որոշումը, այն էլ՝ անհապաղ, պետք է ուղարկվի համապատասխան մարմնին:

Ինչ վերաբերում է այս հարկադրանքի մի-

¹⁸ Համեմատականի համար նշենք, որ մի շարք երկրներում տրվում է ոչ միայն վնասի հատուցում, այլև անձը վերականգնում է աշխատանքային և այլ իրավունքները: Այս առնչությամբ ուշագրավ էր հատկապես Ղազախստանի ՔԴՕ-ն, որտեղ նշվում է, որ տրվում է ոչ միայն նյութական ու բարոյական վնասի հատուցում, այլև անձը վերականգնում է աշխատանքային, կենսաթոշակ ստանալու, բնակարանային և այլ իրավունքները:

¹⁹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1, Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, էջ 552-553:

ջոցի վերացմանը, նշենք, որ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման ինչպես կիրառման, այնպես էլ վերացման որոշումները կայացնելիս արդյոք քննիչը պետք է ստանա դատախազի համաձայնությունը: Գործող օրենսգրքի համաձայն՝ այն վերացվում է դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Ի տարբերություն գործող օրենսդրության՝ Նախագծի 117-րդ հոդվածի համաձայն՝ եթե խափանման միջոցի գործողության ընթացքում փոխվել կամ վերացել են դրա իրավաչափության պայմանները, վարույթն իրականացնող մարմինն իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին: Նախագծի վկայակոչված դրույթի վերլուծությունից եզրակացնում ենք, որ այս խափանման միջոցը ինչպես կիրառելիս, այնպես էլ վերացնելիս անհրաժեշտ է դատախազի համաձայնությունը: Կարծում ենք՝ նման մոտեցումն արդարացված է: Վերջինս հիմնավորում ենք այն հանգամանքով, որ նշված նորմը օրենսդրի կամքը բացահայտելու իրավամեկնաբանողական հնարքի տեսանկյունից վերլուծելիս հանգում ենք այն հետևության, որ նշված դրույթը սահմանելիս օրենսդրի կամքն է եղել այն, որ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումը կայացնելիս դատախազի համաձայնությունն ի սկզբանե լինի, ուստի տրամանաբական է, որ այն վերացնելիս ևս դատախազի համաձայնությունը պետք է լինի, քանզի դատախազի գործառույթն այս պարագայում ոչ թե հարկադրանքի միջոցի կիրառման և վերացման օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնելն է, այլ ավելի լայն շրջանակ ընդգրկող գործառույթ, այն է՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելը: Նշված գործառույթի առնչությամբ Ս. Ա. Դիլբանդյանը նշում է. «Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությանը բնորոշ է համակողմանիությունը, ըստ որի, դատախազն արձագանքում է օրենքի ցանկացած խախտման, այլ ոչ

թե միայն նրանց, որոնք այս կամ այն կերպ շոշափում են քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այդպիսի համակողմանիության շնորհիվ նախնական քննության փուլում դատախազական հսկողությունը հանդիսանում է օրինականության ապահովման երաշխիք և հնարավորություն է ստեղծվում ժամանակին կասեցնելու քննիչի կողմից իր դատավարական ինքնուրույնության չարաշահման դեպքերը»²⁰: Հետևաբար կարծում ենք, որ հարկադրանքի միջոցը վերացնելիս ևս քննիչը պետք է ստանա դատախազի համաձայնությունը, որովհետև հնարավոր են իրավիճակներ, երբ քննիչը նշված հարկադրանքի միջոցը վերացնելու որոշում կայացնի, սակայն դատախազը հանգի այն հետևության, որ շարունակում են առկա լինել պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման հիմքերը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե փաստացի ինչպես պետք է իրականացվի վերահսկողությունը, նշենք, որ պետք է որոշակի մեխանիզմներ մշակել, որ այս գործընթացը պրակտիկայում արդյունավետ իրականանա: Որոշումը կայացնող մարմնի կամ աշխատակազմի ղեկավարի վրա նման պարտականություն դնելը, կարծում ենք, ողջամիտ է, քանի որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ մեղադրյալի կամ կասկածյալի պաշտոնավարումը կասեցված է, բայց նա փաստացի շարունակում է իրականացնել իր գործունեությունը:

Ամփոփելով վերոշարադրյալը, որը վերաբերում էր պաշտոնավարության ժամականավոր դադարեցման օրենսդրական թերությունների և բացերի լուսաբանմանը՝ հույս ունենք, որ սույն հոդվածի շրջանակներում բարձրաձայնած հարցերի լուծմանն ուղղված առաջարկները հաշվի կառնվեն, և օրենսդրական մակարդակում կկատարվեն համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև կավելացվեն դրույթներ, որոնք կնպաստեն օրենսդրության կատարելագործմանը՝ այդպիսով նաև անձի պաշտպանության իրավունքի առավել արդյունավետ և պատշաճ իրականացմանը:

²⁰ Տե՛ս Դիլբանդյան Ս. Ա., Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011, էջ 268:

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան իրավ.գիտ.թեկնածու

ՁԵՐԲԱԿԱԿԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՃԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՉՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Սահմանադրական ազատությունների և իրավունքների սահմանափակումները, դրանց ընթացակարգերը և դատավարական երաշխիքները մշտապես եղել են գիտական հանրության ուշադրության կենտրոնում: Առավել բարձր ուշադրության են արժանի այդ նույն ազատությունների և իրավունքների սահմանափակումները և դրանց ընթացակարգերը այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հասարակության խոցելի խմբերի ներկայացուցիչներին, ինչպիսիք են օրինակ՝ ձերբակալված և կալանավորված անձինք:

Ազատության և իրավունքի սահմանափակման տեսանկյունից թերևս ամենաքիչ ուսումնասիրվածը՝ հաղորդակցման ազատությունն ու գաղտնիության իրավունքն են:

Փոփոխված Սահմանադրությունը, նպատակ ունենալով ընդգծել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունքի կարևորությունը, այն կարգավորել է առանձին հոդվածով¹:

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով սահմանվել է հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը որպես մարդու հիմնական ազատություն և իրավունք: Հիշյալ իրավադրույթի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով:

Ձերբակալված և կալանավորված անձանց համար հաղորդակցության ազատությունը ունի իրացման երեք հիմնական եղանակ, որոնք են՝ տեսակցություններ ունենալու իրավունքը՝ մերձավոր ազգականների, փաստաբանի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ (ուղղակի կապ արտաքին աշխարհի հետ), հեռախոսային խոսակցություններ վարելու իրավունքը (ուղղակի կապ արտաքին աշխարհի հետ տեխնիկական սարքավորումների միջոցով) և հաղորդակցումը նույն փակ հաստատությունում պահվող այլ անձանց հետ:

Հաղորդակցության ազատության ներկայացված բոլոր երեք դրսևորումները առանձին-առանձին կամ բոլորը միասին կարող են սահմանափակվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ համապատասխան հիմնարկի վարչակազմի կողմից, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) համապատասխան իրավադրույթներով նախատեսված կարգով:

2019 թվականի փետրվարի 5-ին ՀՀ սահմանադրական դատարանը քննության առնե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան / Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. – Եր.: Տիգրան Մեծ, 2016: Էջ 53:

լով Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի և 98-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշմամբ հաստատված ներքին կանոնակարգի 231-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը, ի թիվս այլնի դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով պատժախուց տեղափոխելու ձևով տույժի միջոցի կիրառման փաստի ուժով ինքնին սահմանափակում է կալանավորված անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության և հաղորդակցության ազատության իրավունքները, ճանաչվել է Սահմանադրության 31-րդ, 33-րդ և 78-րդ հոդվածներին հակասող²:

Հիշյալ որոշման 5.5-րդ կետում մասնավորապես նշվում է՝

«(...) Անդամ պետություններին ուղղված «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը, ընդունված 2006 թվականի հունվարի 11-ին, սահմանում է, որ բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ նամակով, հեռախոսով կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ: Հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների և մշտադիտարկման, որն անհրաժեշտ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, հանցա-

գործության կանխարգելման, հանցագործությունից տուժածներին պաշտպանելու համար, սակայն նման սահմանափակումները, ներառյալ դատական մարմինների որոշումներով նախատեսված սահմանափակումները, ամեն պարագայում չպետք է բացառեն շփումների նվազագույն մակարդակը:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանություններում նշվում է, որ ազատության իրավունքից զրկումը չպետք է հանգեցնի այն ենթադրությանը, որ բանտարկյալները մեխանիկորեն զրկվում են իրենց քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներից նույնպես: Այն դեպքում, երբ այդ իրավունքների սահմանափակումն անխուսափելի է ազատությունից զրկվելիս, ապա հետագա սահմանափակումները պետք է լինեն հնարավորինս քիչ, սահմանված լինեն օրենքով և կիրառվեն միայն այն ժամանակ, երբ էական նշանակություն ունեն բանտում կարգուկանոնի, ապահովության և անվտանգության համար: Եվրոպայի խորհրդի Խոշորանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) 2011 թվականի թիվ 26 Ընդհանուր զեկույցի 61-րդ կետի (բ) ենթակետի համաձայն՝ այն դատապարտյալները, որոնց նկատմամբ կիրառվել է մենախուց տեղափոխելն իբրև կարգապահական տույժի միջոց, **երբեք չպետք է ամբողջությամբ զրկվեն իրենց ընտանիքի հետ կապից**, և այդ կապի յուրաքանչյուր սահմանափակում պետք է կիրառվի միայն այն դեպքերում, **երբ խախտումը վերաբերում է նման կապին**: Չեկույցում նշված է, որ մեկուսացումն էլ ավելի է խստացնում առանց այդ էլ խիստ սահմանափակված իրավունքները: Լրացուցիչ սահմանափակումները պայմանավորված չեն ազատագրկման փաստով, հետևաբար պետք է պատճառաբանվեն առանձին: (...)»:

Ուշագրավ է սակայն այն հանգամանքը, որ մինչ օրս սահմանադրական վերահսկողության տիրույթում չեն հայտնվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի

² Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1442.pdf> (04.08.2019թ.)

3-րդ մասով, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և նույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից հաղորդակցության ազատության սահմանափակման ընթակարգերը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ օրենսգրք) 137-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Ներքինության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանն իրավասու են քննչական մեկուսարանի վարչակազմին տալ ցուցումներ՝ մեկ քրեական գործով, ինչպես նաև իրար հետ կապված մի քանի քրեական գործերով մեղադրյալներին միմյանցից անջատ պահելու, կալանավորված այլ անձանց հետ մեղադրյալի հաղորդակցվելը կանխելու վերաբերյալ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ցուցումներ, որոնք չեն հակասում կալանավորվածներին պահելու՝ օրենքով սահմանված ռեժիմին: Տրված ցուցումները պարտադիր են քննչական մեկուսարանի վարչակազմի համար»:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝

« (...)

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

(...):»:

Համաձայն օրենքի 17-րդ հոդվածի՝

« (...)

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել

քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

(...):»:

Պետք է նշել, որ թե իրավակիրառ պրակտիկայում, թե գիտավերլուծական գրականությունում գերակայում է այն դիրքորոշումը, որ դատական վերահսկողության առարկա կարող է հանդիսանալ միայն հաղորդակցության գաղտնիության իրավունքի, այլ ոչ ընդհանրապես հաղորդակցության ազատության սահմանափակումը:

Այսպես, Վ. Պողոսյանը և Ն. Սարգսյանը մասնավորապես նշում են. Ինչպես 2005 թվականի խմբագրության Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասը, այնպես էլ փոփոխված Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասը հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման հնարավորությունը նախատեսել է միայն դատարանի որոշմամբ, եթե առկա են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ խոսքը միայն հաղորդակցության գաղտնիության, այլ ոչ թե ազատության սահմանափակման մասին է³:

ՀՀ սահմանադրական դատարանը ամփոփելով վերը հիշատակված որոշման մեջ տեղ գտած վերլուծությունները, արդարացիորեն նշել է. «Սահմանադրական դատարանը փաստում է, որ կալանավորված անձի կամ դատապարտյալի գործընթացում բնորոշվում է նրա սոցիալական մեկուսացմամբ, շրջապատող միջավայրի ազդեցության նվազեցմամբ և առօրյա կյանքի գրեթե բոլոր ասպեկտների նկատմամբ վերահսկողության կորստով, ինչն անխուսափելիորեն բացասական է ազդում պարտախցում գործող անձի հոգեկան վիճակի վրա: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պարտախուց տեղափոխված անձանց նկատմամբ կիրառվող արգելքները պետք է անմիջական կապ ունենան կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից թույլ տրված խախտման հետ, և նրանց հիմնական իրա-

³ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան / Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. – Եր.: Տիգրան Մեծ, 2016: Էջ 53:

վունքների և ազատությունների սահմանափակումները պետք է ողջամտորեն անհրաժեշտ լինեն իրավաչափ նպատակին հասնելու համար»⁴:

ՀՀ սահմանադրական դատարանի ներկայացված դիրքորոշումը վկայում է այն մասին, որ այս բարձր ատյանը խորապես մտահոգված է հաղորդակցության ազատության, դրա բոլոր ենթատեսակներով հանդերձ, սահմանափակումների օրենսդրական թերի կարգավորված լինելու հանգամանքով: Ավելին, որոշման մեջ տեղ գտած միջազգային կառույցների կողմից ընդունված բանաձևերի, խորհրդատվությունների բովանդակությունը վկայություն է այն մասին, որ միջազգային ատյանները ևս անհանգստացած են անձնական ազատության իրավունքի սահմանափակում կրող մարդկանց այլ իրավունքների և ազատությունների սահմանափակումների պրակտիկայով:

Այս առումով հարկ է նշել նաև, որ նախորդ պարբերությամբ շարադրված և տարբեր ատյանների կողմից արտահայտվող անհանգստությունը հիմնականում վերաբերում է արդեն քրեական պատասխանատվության կանչված մարդկանց, ով կրում է օրինական ուժի մեջ մտած դատավճռով սահմանված պատիժը: Գտնում ենք, որ ձերբակալված և կալանավորված անձանց հանդեպ նույնաբովանդակ անհանգստությունը պետք է էլ ավելի բարձր լինի, նկատի ունենալով այն պարզ ճշմարտությունը, որ անձնական ազատության իրավունքի սահմանափակում կրող այս անձինք հնարավոր է անմեղ են և հնարավոր է արդարացվեն: Այսինքն, տվյալ պարագայում անհրաժեշտ է այս անձանց իրավունքների ու ազատությունների յուրաքանչյուր սահմանափակման դեպքում դրսևորել առավել զգոնություն, խուսափելով նրանց իրավունքների և ազատությունների լրացուցիչ սահմանափակումների կիրառումից, այդպիսիք կիրառելով միայն խիստ անհրաժեշտության և հիմնավորվածության դեպքում:

Կարծում ենք, որ ներկայիս հայաստանյան օրենսդրությունը ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների ու ազատությունների, մասնավորապես՝ հաղորդակցության ազատության սահմանափակումների

վերաբերյալ բավարար երաշխիքներ չի պարունակում: Հաճախ, այս ազատության սահմանափակումների ընթացակարգերը չեն համապատասխանում անգամ իրավական որոշակիության համաիրավական սահմանադրական սկզբունքին:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Մեջբերված սահմանադրական կարգավորումը գտնվում է ուղղակի անհամապատասխանության մեջ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ իրավադրույթների հետ:

Սահմանադրական մեջբերված կարգավորման և օրենքի ու օրենսգրքի հիշյալ իրավադրույթների համադրությունից ողջամտորեն առաջանում է հետևյալ հարցը. Արդյո՞ք հաղորդակցության հիմնական ազատությունը սահմանափակելիս «քննության շահերից ելնելով» ձևակերպումը բավարար չափով որոշակի է (նշված ձևակերպման պայմաններում ազատությունը կրողների մոտ առկա է արդյո՞ք ողջամիտ հնարավորություն դրսևորելու համապատասխան վարքագիծ):

ՀՀ սահմանադրական դատարանը իր թիվ ՍԴՈ-1270 որոշման մեջ անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին մասնավորապես նշել է.

«Իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք

⁴ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1442.pdf> (04.08.2019թ.)

որոշումներում (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»⁵:

Իրավական որոշակիության սկզբունքը բխում է իրավական պետության սկզբունքից և պահանջում է այնպիսի օրենք, որի փաստակազմը և իրավական հետևանքը բովանդակային տեսանկյունից այնքան որոշակի լինեն, որ հնարավորություն տան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը դրսևորելու համապատասխան վարքագիծ⁶:

Այս առումով պետք է նշել, որ «քննության շահերից ելնելով» ձևակերպումը իրավահարաբերությունների մասնակիցների համար ոչ միայն չի պարունակում բավարար որոշակիություն, այլ ընդհակառակը բացառում է վերջիններիս կողմից իրենց վարքագծի հետևանքները կանխատեսելու որևէ հնարավորություն: Քննարկվող ձևակերպումը ըստ էության հնարավորություն է ընձեռում վարույթն իրականացնող մարմնին բացարձակ հնարավորություն սահմանափակելու անձի ազատությունը:

Հատկանշական է, որ ԱՄՆ իրավակիրառ պրակտիկայում անազատության մեջ պահվող անձանց իրավունքների սահմանափակումների հիմնավորման վերաբերյալ առկա է մի քանի զուգահեռ գործող չափանիշ: Առավել լայն տարածում ստացածներից մեկը ամրագրվել էր ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից ԱՄՆ Սահմանադրությամբ երաշխավորված տեղեկատվության ազատությանը վերաբերող Թյուրների գործով և համանուն կոչվում է «Թյուրների թեստ»: Թեսթը կայանում է նրանում, որ իրավունքի սահմանափակման վերաբերյալ պետք է առաջ քաշվի չորս հիմնական հարց, որոնք

պետք է գտնեն իրենց պատասխանները: Դրանցից երկուսը կարևորելով իրավունքի սահմանափակման նպատակը, վերաբերում են դրա ծավալին, տեսակին, այլընտրանքի առկայությանը⁷: Ուղղակիորեն նշվում է որ համապատասխան իրավական հիմքերի ու իրավաչափ նպատակների առկայության պայմաններում տեղեկատվության ազատությունը, որը իր բովանդակությամբ ներառում է նաև հաղորդակցության ազատությանը համահունչ իրավունք, կարող է սահմանափակվել, սակայն այդ սահմանափակումները չպետք է լինեն ավելի քան պահանջվում է համապատասխան իրավաչափ նպատակն իրագործելու համար:

ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից մեկ այլ գործով⁸ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ անազատության մեջ պահվող անձինք կրում են ամերիկյան սահմանադրաիրավական իմաստով տեղեկատվության ազատության մեջ ներառվող բոլոր իրավունքները, այնքանով որքանով դա հնարավոր է անազատության մեջ գտնվելու պայմաններում: Տվյալ գործով կայացված որոշմամբ հիմնավորված էր ճանաչվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպումների վերաբերյալ սահմանափակումները, նկատի ունենալով այն, որ առկա էր լիարժեք այլընտրանք՝ գրավոր հաղորդակցությունը:

Շարադրվածը վկայում է այն պարզ իրողության մասին, որ այն դեպքերում, երբ հաղորդակցության ազատության սահմանափակումը չի հետապնդում կոնկրետ ձևակերպված իրավաչափ նպատակ և չունի համապատասխան իրավական հիմնավորում, ապա տվյալ դեպքերում սահմանափակումը միանշանակ պետք է գնահատվի որպես կամայական և հակաիրավական: Միևնույն ժամանակ, միանշանակ է, որ նմանօրինակ պահանջների պահպանումը հայաստանյան իրավակիրառ պրակտիկայում հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ շարադրված պահանջների պահպանումը ուղղակի նախատեսված լինի իրավահա-

⁵ Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1270.pdf> (04.08.2019թ.)

⁶ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան / Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. – Եր.: Տիգրան Մեծ, 2016: Էջ 82:

⁷ Տե՛ս Turner v. Safley 482 U.S. 78 (1987).

⁸ Տե՛ս Pell v. Procunier 417 U.S. 817, 818 (1974).

րաբերությունները կարգավորող իրավական ակտերում:

Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության քննիչի վարույթում գտնվող քրեական գործով որոշում էր կայացվել, որով մեղադրյալ կալանավոր Ա.Ա.՝ ի հեռախոսային խոսակցությունները, նամակագրությունը և հեռահաղորդակցման այլ եղանակները, ինչպես նաև տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ արգելվել էր: Միայն դատական բողոքարկման արդյունքում նշանակված դատական նիստի ընթացքում քննիչը պարզաբանեց, որ քննության շահը տվյալ դեպքում հանդիսացել է այն, որ ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը մասնակցել են ՀՀ տարածքից դուրս գտնվող հանցակիցներ, իսկ հաղորդակցության ազատության սահմանափակված չլինելու պայմաններում Ա.Ա-ն կարող էր կապ հաստատել նրանց հետ նպաստելով նրանց թաքնվելուն և/կամ քրեական գործով ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվության ոչնչացմանը: Համապատասխան նպատակը միանշանակ իրավաչափ է և առկա են համապատասխան հիմքերը ենթադրելու, որ տվյալ անձը կարող է կատարել կանխատեսվող գործողությունները: Բայց չէ՞ ի՞նչ այս դեպքում կարելի էր նույն իրավաչափ նպատակին հասնել օրինակ՝ առանց վերջինիս նամակագրություն վարելու իրավունքի ամբողջական սահմանափակման, չէ՞ ի՞նչ կարելի էր թույլ տալ, որ անձը շարունակի իր մերձավոր ազգականների հետ կապ պաշտպանել օրինակ նամակագրություն վարելու միջոցով, որը միաժամանակ կարող էր վերահսկվել համապատասխան քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից:

Վերը շարադրվածից ելնելով կարելի է հանգել այն միանշանակ եզրակացության, որ օրենքի վերը վկայակոչված իրավական կարգավորումները անրաժեշտ է ենթարկել վերախմբագրման, համապատասխանեցման իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին:

Անհրաժեշտ է հստակ ամրագրել այն, որ համապատասխան որոշումների կայացումը պետք է ունենա հստակ իրավական հիմքեր,

ինչպիսիք կարող են հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով թվարկված խափանման միջոց կիրառելու հիմքերից՝ մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու (քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու եղանակով), քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու և դատարանի դատավճռի կատարմանը խոչընդոտելու հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայության դեպքում:

Ընդ որում, կարծում ենք, որ հաղորդակցության ազատության սահմանափակման համար որպես հիշյալ հիմքերի առկայության հաստատում պետք է դիտարկվի խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին դատարանի որոշմամբ արձանագրված լինելը, ինչը կազատի վարույթն իրականացնող մարմնին համապատասխան որոշման լրացուցիչ պատճառաբանումից և հիմնավորումից, թույլ տալով՝ որոշման մեջ ուղղակի հղում կատարել դատարանի համապատասխան որոշմանը: Միևնույն ժամանակ, այն դեպքերում երբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման մեջ որպես հիմք նշված լինի միայն քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը, ապա այս դեպքերում կալանավորված անձի հաղորդակցության ազատության սահմանափակումը կդառնա անհնարին:

Նկատի ունենալով այն, որ համապատասխան հիմքերը կարող են ծագել համապատասխան անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուց հետո, այս դեպքերում տվյալ հիմքերի առկայությունը պետք է լրացուցիչ փաստարկվի վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավոր անձի հաղորդակցության ազատությունը սահմանափակելու մասին համապատասխան որոշման պատճառաբանական մասում: Ինչպես նաև կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցելու դեպքում, նախաքննական մարմինը պարտավոր է դատարանին ներկայացնել նոր ի հայտ եկած փաստական տվյալները, որոնք հիմնավորում են համապա-

տասխան հիմքերի առկայությունը: Նույնանման պատճառաբանություններ պարունակող որոշում պետք է կայացվի նաև այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվում է ձերբակալված անձի հաղորդակցության ազատության սահմանափակմանը վերաբերող վերոհիշյալ որոշումը: Ընդ որում, տվյալ որոշման կայացումը չպետք է ամբողջությամբ սահմանափակի անձի հաղորդակցության ազատությունը: Հաղորդակցու-

թյան ազատության ամբողջական սահմանափակումը պետք է լինի ծայրահեղ միջոց:

Ելնելով վերը շարադրվածից, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենքի համապատասխան հոդվածներում կատարել վերոհիշյալ լրացումներն ու փոփոխությունները, լուծելով օրենքի ու օրենսգրքի քննարկվող իրավակարգավորումների որոշակիության խնդիրը:



ՋՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի Ֆրանսիական Համալսարանի դասախոս,
իրավագիտության թեկնածու

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Ֆրանսիական Համալսարանի ուսանող

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՖՈՏՈՌՈՐՈՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՊԵՐԱՏԻՎ-ՇԵՏԱՆՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գենետիկական ֆոտոռոբոտը կազմվում է ըստ գենետիկական տվյալների՝ ձեռքբերված դեպքի վայրից կամ տուժողի մարմնից: Հայտնաբերված հետքը դրվում է հատուկ կրիչի՝ մեջ, որից հետո սարքը հետքից առանձնացնում է ԴՆԹ-ն² (հնարավոր է առանձնացնել ցանկացած կենսաբանական նյութից) և կազմում հանցագործության մեջ կասկածվող անձի արտաքին տվյալների վիճակագրական հավանականության աղյուսակ՝ ելնելով ԴՆԹ կոդավորման վերլուծությունից: Այս միջոցի ինքնատիպությունը կայանում է նրանում, որ այն ապահովում է ԴՆԹ-ի կանխատեսելի օգտագործումն ու կասկածյալի մորֆոլոգիական պրոֆիլը զարգացնելու հնարավորությունը՝ ի տարբերություն հետքերի ավանդական օգտագործման, որի դեպքում համեմատվում է դեպքի վայրում հայտնաբերված նմուշը³ տվյալների բազայում գտնվող գենետիկական բնութագրի հետ:

Այս եղանակով հնարավոր է որոշել մարդու ֆիզիկական (արտաքին հատկանիշներ) և ֆիզիոլոգիական (հյուսվածքների, օրգանների, բջիջների ֆունկցիաների, դրանցում ընթացող գործընթացների առանձնահատկություններ) մի շարք հատկանիշներ. սեռը, մաշկի գույնը, աչքերի գույնը, մազերի գույնը, ձևը, ծնոտի լայնությունը, գանգոսկրի ծավալը, կենսաբանական տարիքը, կանաչախեցիների բացվածքը,

միջոցառումները, կզակի և այտերի վրա նշանների, ծաղկասպիերի առկայությունը, քթի, շուրթերի ձևը, աչքերի շուրջ ուկորների ձևը: Բացի նշված հատկանիշներից, ԴՆԹ-ն պարունակում է նաև անձի գենետիկական հիվանդությունների, դրանց հետևանքով առաջացած մուտացիաների և խառնվածքի՝ հոգեկան-էմոցիոնալ բնութագրի մասին տվյալներ⁴ (սանգվինիկ, ֆլեգմատիկ, մելանխոլիկ, խոլերիկ). կան ԴՆԹ-ի բաժիններ, որոնք պատասխանատու են ագրեսիայի և հանցագործության որևէ տեսակի հակվածության համար:

Երկրների մեծ մասում, որտեղ օգտագործվում է այս տեխնիկան, հիմնականում որոշվում է սեռը, կենսաբանական տարիքը, մազերի, աչքերի, մաշկի գույնը և կենսաաշխարհագրական ծագումը: Մնացած հատկանիշների որոշումը դեռևս փորձարկվել է Բորդոյի բժշկա-իրավական արյունաբանական լաբորատորիայում⁵:

Աշխատանքի նպատակը կայանում է պարզել գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման անհրաժեշտությունն ու թույլատրելիությունը՝ հաշվի առնելով հանցագործությունների բացահայտման և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման նպատակների հարաբերակցությունը: Այս առումով

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Կրիչն արտադրվել է ամերիկյան VisiGen ընկերության կողմից 2012 թվականին:
² Դեզօքսիռիբոնուկլեինաթթուն (ԴՆԹ) բոլոր կենդանի օրգանիզմների և որոշ վիրուսների զարգացման և կենսագործունեության գենետիկական հրահանգները պարունակող նուկլեինաթթու է: Դատաբժշկության մեջ ԴՆԹ-ն կիրառվում է դեպքի վայրում գտնված արյան, սերմնահեղուկի, մաշկի, քթի և մազի հետքերի մեջ պարունակվող ԴՆԹ-ի և մեղադրյալի ԴՆԹ-ի հետ համապատասխանության միջոցով մեղադրյալին նույնականացնելու նպատակով:
³ Մեթոդն անվանվել է նրա հեղինակի՝ ոստիկան Էդմոնդ Լոկարդի անունով, ըստ որի՝ հանցագործություն կատարած անձը թողնում է իր հետքերը դեպքի վայրում, իսկ դեպքի վայրի հետքերը նրա վրա են հայտնվում: Levy, A. (2008). La police scientifique - La technologie de pointe au service des enquêteurs, էջ 25, Փարիզ:
⁴ Տե՛ս О применении специалистом технических средств в исследовании материалов уголовного дела, Я. Д. Ревенко, 2010, էջ 3:
⁵ Տե՛ս՝ https://www.lemonde.fr/societe/visuel/2014/12/18/le-portrait-robot-genetique-arrive-en-france_4541590_3224.html (վերջին այցելություն՝ 06.11.2019թ.)

ընդունում ենք այն ելակետը, որ գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման դեպքում պետք է առաջնորդվել «չեզոք նույնականացման» սկզբունքով, որի իմաստը հանցագործությունների բացահայտումն է՝ պահպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները:

Այս առումով ԴՆԹ հիմքով գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման անհրաժեշտությունը և թույլատրելիությունը պարզելու համար պետք է այն դիտարկել հետևյալ ասպեկտերով.

- 1) կիրառությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համատեքստում (միջազգային փաստաթղթեր, ներպետական օրենսդրություն),
- 2) գործնական կիրառության առանձնահատկությունները,
- 3) տարբեր երկրներում գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման հետ կապված նորմատիվ բազա,
- 4) գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման հիմքը ՀՀ օրենսդրությունում:

Հարկ ենք համարում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համատեքստում այս տեխնիկայի կիրառման անդրադառալ իրավական և էթիկական տեսանկյուններից միաժամանակ: Որպես գենետիկական ֆոտոռոբոտների օգտագործման անհրաժեշտության հիմնական հակափաստարկ բերվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 8-րդ հոդվածը (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք): Այս գաղափարի կողմնակիցները գտնում են, որ այդ արդյունավետությունը չպետք է լինի իրավունքների և հիմնարար ազատությունների հաշվին, հակառակ դեպքում ասիմետրիա է առաջանում նպատակի և այդ նպատակին հասնելու համար ընտրված միջոցների համաչափության միջև: Սակայն պետք է արձանագրել, որ հենց նույն հոդվածի երկրորդ մասը, չնայած որ արգելում է պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքների իրականացմանը, բայց միևնույն ժամանակ սահմանում է բացառությունների մի շարք, որում տեղ է գտել նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման նպատակով սահմանափակումը:

Հակափաստարկի էությունը հետևյալն է. ԴՆԹ-ն կազմված է անձի ֆիզիկական և ֆի-

զիոլոգիական հատկանիշների մասին գաղտնի տեղեկատվություն պարունակող գեներից, որոնք օգտագործվում են գենետիկական ֆոտոռոբոտը կազմելիս, իսկ դա անձի մասնավոր կյանքի մի մասն է կազմում: Գենետիկական ֆոտոռոբոտների օգտագործման անհրաժեշտության հակափաստարկ կարող էր համարվել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը, որը սահմանում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Սակայն այս դեպքում ևս նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է բացառություն՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով սահմանափակումը:

Մեկ այլ իրավական և էթիկական տեսանկյան համաձայն՝ սրանով չի խախտվում անձի մասնավոր կյանքը հարգելու սկզբունքը, քանի որ այն ֆիզիկական հատկանիշները (աչքերի, մաշկի գույնը, դեմքը), որոնք անհրաժեշտ են ֆոտոռոբոտը կազմելու համար, բոլորի համար տեսանելի են: Խնդիրն առաջանում է մարդու էթիկական ծագման, հիվանդությունների կամ հիվանդությունների հետ կապված մուտացիաների դեպքերում: Այլ հարց է, թե ինչ երաշխիքներ պետք է ապահովվեն այս տվյալները ստանալու և սահմանափակ օգտագործելու համար:

Եվրոպայի խորհուրդն իր՝ քրեական գործերի հետաքննության ներքո դեզօքսիռիբոնուկլեական թթվի վերլուծության արդյունքների օգտագործման մասին թիվ R(92)1 հանձնարարության (ընդունվել է 1992 թվականի փետրվարի 10-ին) 3-րդ հոդվածում նշում է. «ԴՆԹ վերլուծության համար վերցված նմուշները և հանցագործությունների բացահայտման ու պատասխանատվության ենթարկելու նպատակով վերլուծության արդյունքում ստացված տեղեկատվությունը չեն կարող օգտագործվել այլ նպատակների համար (օրինակ՝ կրոնավորման, եվգենիկայի նպատակներով)», ինչը երաշխիք կհանդիսանա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից՝ անձի գենետիկական տվյալներն օգտագործելիս (միայն ֆիզիկական հատկանիշների դեպքում)՝ գործել՝ ելնելով նրա անձնական կյանքը հարգելու իրավունքից: Հենց այս սկզբունքի պահպանման պարագայում տվյալ մարմինը

հնարավորություն չի ունենա դուրս գալու «չեզոք նույնականացման» շրջանակներից: Պետք է հաշվի առնել նաև, որ գենետիկական նույնականացումը և դատական բժշկությունը ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմյանց⁶, և համապատասխան իրավական մեխանիզմների դեպքում գենետիկական նույնականացումից ստացված տվյալները քրեական դատավարությունում ևս ապացույցի տեսակ կարող են դիտարկվել:

Հայաստանի Հանրապետությունում գենետիկական ֆոտոռոբոտների գործարկման դեպքում կիրառելի են այն նորմերը, որոնք ապահովում են մարդու անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդված, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներ): Ըստ 2015 թվականի մայիսի 18-ին ընդունված «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ *ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը*: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (3-րդ հոդվածի առաջին մասի 12-15 կետերով) առանձնացնում է անձնական տվյալների 4 տեսակ՝ անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական անձնական տվյալներ, հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, հանրամատչելի անձնական տվյալներ:

Գենետիկական ֆոտոռոբոտի ստեղծման դեպքում մենք, բացառությամբ հանրամատչելի անձնական տվյալների, առնչվում ենք բոլոր կատեգորիաների հետ: Ըստ այդմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նյութական բազա կարող է հանդիսանալ գենետիկական ֆոտոռոբոտների կիրառման դեպքում անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության և ապահով-

ման համար: Հիշյալ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե՝ տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը...»: ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ:

Քանի որ տվյալ դեպքում գենետիկական տվյալները վերցվում են դեպքի վայրից⁷ կամ տուժողից, այստեղ կարող է բացակայել անձի համաձայնությունը՝ իրեն վերաբերող տվյալների մշակման հարցում: Բացի այդ նույն նորմը ամրագրում է, որ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի (որպիսին տվյալ դեպքում հանդիսանում է հանցագործությունների բացահայտումը) առկայության դեպքում անձնական տվյալների մշակումը կատարվում է առանց այդ անձի համաձայնության:

Հարկ ենք համարում անդրադառնալ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի կողմից ձևավորված ոլորտների տեսությամբ⁸ և պարզաբանել, թե գենետիկական ֆոտոռոբոտների կիրառման դեպքում անհրաժեշտ տեղեկատվության օգտագործումը որքանով է խախտում անձի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը, և այս տեսանկյունից արդյո՞ք կազմված ֆոտոռոբոտը կարելի է դիտարկել որպես թույլատրելի ապացույց:

Ըստ այս տեսության՝ ընդհանուր անհատականության իրավունքում տարբերակում են նախ ներքին (անհատական ինքնություն) ոլորտ և արտաքին (սոցիալական ինքնություն) ոլորտ: Ներքին ոլորտի ներսում տարբերակվում է սկզբունքորեն անձեռնմխելի ինտիմ ոլորտը և մասնավոր կամ գաղտնի ոլորտը՝ իր տարբեր դրսևորումներով: Սրանցից առաջինը առանձնահատուկ և բացարձակ պաշտպանության տակ է գտնվում և ենթակա չէ իշխանու-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

⁶ Տե՛ս Современная криминалистика: проблемы, тенденции, перспективы, Московский Государственный Университет имени М.В. Ломоносова, Մոսկվա, 2015, էջ 90:
⁷ Տե՛ս Использование специальных познаний в процессе расследования серийных убийств: первоначальный этап расследования, Горбулинская Ирина Николаевна; Քարնաուլ, 2007թ., էջ 15:
⁸ Տե՛ս Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում, Գ. Հովհաննիսյան, Ա. Ղամբարյան, Ա. Սարգսյան; Երևան 2017, էջ 24-28:

թյան ներգործությանը անգամ հանրային գերակա շահերի առկայության դեպքում: Այն ներառում է մասնավոր գրառումները, ընտանեկան նեղ հարաբերությունները և սեռական կյանքը: Ի տարբերություն անձեռնմխելի ոլորտի, մասնավոր կամ գաղտնի ոլորտի նկատմամբ միջամտությունները թույլատրելի են միայն հանուն հասարակության գերակա շահերի և համաչափության սկզբունքի խստիվ պահպանմամբ: Այս ոլորտը ընդգրկում է մի շարք իրավունքներ և հատկանիշներ, այդ թվում նաև հիմնական իրավունքի սուբյեկտի արտաքին տեսքը: Ինչպես տեսնում ենք գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման դեպքում առնչվում ենք առավելապես արտաքին տեսքին վերաբերող տվյալների հետ, որոնք մասնավոր կամ գաղտնի ոլորտի մասն են կազմում, հետևաբար հանուն հասարակության գերակա շահի՝ այն է հանցագործությունների բացահայտումը և կանխումը, պետությունն օժտված է որոշակի սահմանափակ միջամտության իրավունքներով:

Գենետիկական ֆոտոռոբոտի առանձնահատկություններին պետք է անդրադառնալ՝ ԴՆԹ տվյալների բազաների և սովորական ֆոտոռոբոտների հետ համեմատական վերլուծություն անելով:

ԴՆԹ տվյալների ազգային բազաները հնարավորություն են տալիս համեմատական հետազոտման համար վերցված կենսաբանական ծագման նմուշների և հաշվառման մեջ գտնվող նմուշների համեմատական հետազոտում կատարելով համապատասխան մարմնին տրամադրել որոնվող անձի տվյալները՝ նպաստելով հանցագործի անձի բացահայտմանը: ԴՆԹ տվյալների բազաները տարբեր երկրներում կամ հաշվառվում են ամբողջ բնակչության գենետիկական տվյալները, կամ բացառապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման համար դատապարտ-

ված անձանց գենետիկական տվյալները, կամ հանցագործության բոլոր տեսակների համար դատապարտված անձանց տվյալները: Հնարավոր են դեպքեր, երբ ԴՆԹ տվյալների բազան չպարունակի որոնվող անձի տվյալները և անհնար դարձնի նրա բացահայտումը⁹: Ըստ «Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի՝ ՀՀ-ում ներդրվելու է միայն ծանր, առանձնապես ծանր և սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման նպատակով: Բացի այդ տվյալների բազայում առկա ԴՆԹ նմուշները օրենքով սահմանված որոշակի ժամանակահատված պահվելուց հետո ոչնչացվում են, ինչը նվազեցնում է տվյալների բազայի օգտագործման հնարավորությունը նմանատիպ հանցագործություններ բացահայտելու նպատակով:

Սովորական ֆոտոռոբոտների հետ համեմատելիս՝ պետք է անդրադառնալ սուբյեկտիվ գործոնին: Հանցագործության ականատեսների (վկանների) կողմից անձի արտաքին տվյալների նկարագրության հիման վրա անձի ֆոտոռոբոտը կազմելիս պետք է հաշվի առնել, որ նկարագրությունը կարող է կատարվել սխալ՝ շահադիտական նպատակներից ելնելով: Այս դեպքում մեծ է ռիսկը, որ հետագայում հանցագործություն կատարելու մեջ կարող է կասկածվել բոլորովին այլ անձ: Բացի դրանից «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «անձնական տվյալների մշակումն իրականացվում է սուբյեկտների նվազագույն ներգրավման սկզբունքով»: Նշվածից կարող ենք հետևություն անել, որ այս սկզբունքի պահպանման դեպքում անձնական տվյալների մշակման միջոցով ձեռքբերված ապացույցներն ավելի արժեքավոր են և օբյեկտիվ¹⁰: Իսկ գենետիկական ֆոտոռոբոտի ստեղծման ժամանակ պահպանվում է այս սկզբունքը՝ ապահովելով

⁹ Օրինակ՝ Ֆրանսիայում Ոստիկանության գիտական ազգային ինստիտուտի (INPS) մասնագետները 6-8 շաբաթվա ընթացքում կազմում են գենետիկական ֆոտոռոբոտը, որի արժեքը կազմում է 580 եվրո, որն էլ փոխհատուցվում է Արդարադատության նախարարության կողմից: Սակայն գենետիկական ֆոտոռոբոտի օգնությանն են դիմում միայն այն ժամանակ, երբ դեպքի վայրից կամ տուժողից վերցված հետքերի ԴՆԹ չի համապատասխանում FNAEG-ի ոչ մի տվյալի հետ:

¹⁰ Տե՛ս Աktуальные проблемы уголовного и уголовно-процессуального права, криминалистики: сборник научных статей студентов магистратуры Северо-Западного института Университета имени О.Е. Кутафина, Судебные Ошибки И Днк Как Гарантии Вины, Пуляева Анна Викторовна, Члпнqдш, 2018, էջ 263;

օրյեկտիվությունը: Բացի այդ շատ են հանցագործությունները, որտեղ վկաները բացակայում են:

Գենետիկական ֆոտոռոբոտի կիրառման պրակտիկան, դրա ընթացքում առաջացող խնդիրները պարզաբանելու համար պետք է անդրադարձ կատարել այն երկրներին, որտեղ այդ ֆոտոռոբոտի օգտագործումը այս կամ այն չափով կիրառելի գործունեություն է նախնական քննության փուլում ընթացքում:

Ֆրանսիա: Ներկայումս ֆրանսիական օրենսդրության մեջ գենետիկական ֆոտոռոբոտի ստեղծման մեթոդի վերաբերյալ որևէ դրույթ չկա, սակայն դեպքի վայրից հայտնաբերված հետքերի գենետիկական հիմքով որոշվող անհայտ կասկածյալի՝ տվյալների վերլուծության վերաբերյալ դրույթներ է պարունակում քաղաքացիական օրենսգիրքը (16-11¹¹) և քրեական դատավարության օրենսգիրքը՝ (706-54, 706-55, 706-56) ԴՆԹ-ի վերլուծության ազգային ռեգիստրում ԴՆԹ բնութագրերի մասին:

Քաղաքացիական օրենսգրքի 16-11 հոդվածը ամրագրում է. «անձի նույնականացումը գենետիկական նմուշների (կենսաբանական նյութից) օգնությամբ կարող է կատարվել. 1) նախական քննության փուլում կատարվող, ինչպես նաև դատական քննության ժամանակ նշանակված քննչական գործողությունների դեպքում, 2) բժշկական կամ գիտական հետազոտությունների նպատակով, 3) անհայտ ճանաչված կամ մահացած անձանց նույնականացման դեպքում, 4) ռազմական գործողությունների կամ պատերազմի ժամանակ զոհված անձանաչելի կամ դժվար ճանաչելի անձանց (կոմբատանտ, քաղաքացիական բնակիչ, զինծառայող) նույնականացման դեպքում»:

Նիդեռլանդներ: Նիդեռլանդներն այն միակ եվրոպական պետությունն է, որն իր իրավական համակարգում ամրագրում է գենետիկական ֆոտոռոբոտների կիրառման պրակտիկան: 2003 թվականին Նիդեռլանդների քրեական դատավարության օրենսգրքի փոփոխու-

թյունները թույլ տվեցին արտաքին մորֆոլոգիական տվյալների որոշումը հետաքննության ընթացքում: Կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ օրենսդիրը առանձնացրել է 2 սահմանափակում. 1) այդ տվյալների վերլուծությունը պետք է նպաստի գործի քննությանը, 2) մասնավոր կյանքը հարգելու իրավունքը երաշխավորելու նպատակով՝ ուսումնասիրված գենետիկական հատկությունները պետք է բացառապես վերաբերեն միայն արտաքին մորֆոլոգիական հատկանիշներին և վերցված լինեն անձանոթ հետքից¹²:

Գերմանիա: Առաջին օրինագիծը ներկայացվել է 2017 թվականի փետրվարի 3-ին Baden-Wurtemberg հողի խորհրդարանի առջև¹³, որը նախատեսում էր անհայտ ԴՆԹ-ի հետքի վերլուծությամբ որոշ արտաքին հատկանիշների ձեռքբերում և հավաքում միայն քրեական հետաքննության համատեքստում: Իրականացված հետազոտության հիման վրա՝ օրենսդիրը ճանաչել է այդ հատկանիշներից որոշների բացահայտման հուսալիության կանխավարկածը: Օրենքի նախագծում նշվում է, որ այն բավականին կիեշտացնի լուծելու կասկածյալի նույնականացման խնդիրը: Ստացված տվյալները պետք է ներկայացվեն վիճակագրական հավանականության սանդղակի ձևով, և ոչ մի դեպքում դիմանկարի:

Դաշնային մակարդակով ներկայացված օրենքի նախագիծը ևս թույլատրում է գենետիկական ֆոտոռոբոտների օգտագործումը¹⁴: Դաշնային օրենքը հիմնականում ընդգրկում է նույն կարգավորումները, ինչ Baden-Wurtemberg-ի օրինագիծը: Այն ունենալու է միևնույն իրավական ուժը, ինչ վկայությունը:

2018 թվականի մայիսին Բավարիայի խորհրդարանը Գերմանիայում առաջին անգամ ընդունեց օրենք՝ ըստ որի ոստիկանությանը թույլատրվել է դեպքի վայրից հայտնաբերված ԴՆԹ նմուշների հիման վրա կազմել անձի ֆոտոռոբոտը, որը կարտացույլի աչքերի, մազերի, մաշկի գույնը, ռասսայական և էթնի-

¹¹ Stn LoI n°2016-731 du 3 juin 2016 - art. 116 - NOR: JUSD1532276L

¹² Stn Le Proces Penal A L'epreuve De La Genetique, Elsa Supiot; 2017; էջ 75 <http://www.njb.nl/wetgeving/staatsbladen/import/dna-onderzoek-naar-uiteindelijk-waarneembare.3117.lynkx>

¹³ Stn <https://www.baden-wuerttemberg.de/de/service/presse/pressemitteilung/pid/gesetzesinitiative-zur-erweiterung-der-dna-analyse/> (վերջին այցելություն՝ 06.11.2019թ.)

¹⁴ Stn Entwurf eines Gesetzes zur Erweiterung des Umfangs der Untersuchungen von DNA-fähigem Material.

կական պատկանելիությունը, ինչպես նաև կորոշվի հանցագործի սեռը¹⁵:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ: ԱՄՆ-ում դաշնային մակարդակով չկա որևէ օրենք, որը նախատեսում է գենետիկական ֆոտոռոբոտների կիրառումը: Ինդիանա¹⁶ և Վյոմինգ¹⁷ նահանգներում օրենսդրությունն արգելում է ազգային ԴՆԹ-ի ֆայլերում պահպանված գենետիկական տվյալների օգտագործումը մորֆոլոգիական առանձնահատկությունների կամ հիվանդությունների մասին տեղեկություններ ստանալու նպատակով: Ռոդ Այլենդի¹⁸ օրենսդրությունը նախատեսում է, որ հավաքված նմուշները և պահպանվող հետքերը չեն կարող օգտագործվել ֆիզիկական բնութագրեր բացահայտելու նպատակով: Վերմոնտի¹⁹ օրենսդրությունը, առանց անդրադառնալու մորֆոլոգիական հատկանիշներին, պարզապես արգելում է ցանկացած վերլուծություն, որը թույլ կտա պարզել հիվանդություններ, գենետիկական անոմալիաներ, որն ընդհանուր առմամբ չեն ներառում ֆիզիկական հատկանիշներ: Պետք է ընդգծել, որ այս արգելող դրույթները վերաբերում են հիմնականում գենետիկական բնութագրեր պարունակող տվյալների բազային: Պրոֆեսոր Մուրֆին նշում է, որ այս նորմատիվ կարգավորումները վերաբերում են հայտնի մարդկանցից ստացված ԴՆԹ պրոֆիլներին, այնինչ գենետիկական ֆոտոռոբոտի համար անհրաժեշտ հետքը համարվում է հանցագործության վայրում կամ տուժողի վրա թողնված լքված նյութ (abandoned material)²⁰: Օրենքի լռությունը մի շարք նահանգներում հնարավորություն է տալիս կիրառելու այս միջոցը: Այսպիսին է իրավիճակը Տեխասում և Նյու Յորքում, որտեղ կասկածյալի ֆիզիկական հատկանիշները բացահայտելու նպատակով անհայտ հետքի վերլուծության ինստիտուտը զարգանում է:

Անգլիա²¹: Անգլիայում գենետիկական ֆոտոռոբոտը օգտագործվում է հիմնականում սառը դեպքերի համար (cold cases՝ չբացահայտված հանցագործություններ, որոնց վարույթը կասեցվել կամ զետեղվել է արխիվում (սառեցված)՝ հանցագործություն կատարած անձին բացահայտելու անհնարիության պատճառով): Ոստիկանությունն այս միջոցից օգտվում է բացահայտելու համար կասկածյալի աշխարհագրական ծագման մասին տեղեկություններ՝ նույնականացումը հեշտացնելու նպատակով:

Ռուսաստանի Դաշնություն: «Գենոմի պետական գրանցման» մասին ՌԴ օրենքի²² 1-ին հոդվածի 1-ին մասում մասնավորապես ասվում է՝

«Գենոմի պետական գրանցումը պետական մարմինների և հաստատությունների կողմից իրականացվող գործունեություն է՝ ուղղված կենսաբանական նյութի ստացմանը, հաշվառմանը, պահպանմանը, փոխանցմանը, ոչնչացմանը և գենոմային տեղեկատվության մշակմանը»:

Մարդու իրավունքների պահպանման և երաշխավորման նպատակով օրենքը սահմանում է գենոմի գրանցման երկու հիմնական սկզբունք՝ 1) գենոմի պետական գրանցումը կատարվում է մարդու և քաղաքացու համընդհանուր ճանաչված իրավունքների և ազատությունների համաձայն՝ օրինականության, հումանիտարության, գաղտնիության, կամավորության և պարտադրման համադրությամբ, 2) գենոմի պետական գրանցումը չպետք է վտանգավոր լինի մարդու կյանքի և առողջության համար կամ նվաստացնի իր պատիվն ու արժանապատվությունը: ՌԴ-ում գրանցման տեսակները երկուսն են՝ կամավոր և պարտադիր: Պարտադիր են՝ 1) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու հա-

¹⁵ Տե՛ս <https://medium.com/hightech-plus> (վերջին այցելություն՝ 06.11.2019թ.)

¹⁶ Տե՛ս Collection of information for certain purposes prohibited՝ article 10-13-6-16 <http://www.in.gov/isp/labs/files/Biology%20Databasing%20Test%20Method%20Version%2011%2001-01-18.pdf> (վերջին այցելություն՝ 06.11.2019թ.)

¹⁷ Տե՛ս Access to database; information authorized to be stored՝ article 7-19-404 <https://law.justia.com/codes/wyoming/2010/Title7/chapter19.html> (վերջին այցելություն՝ 06.11.2019թ.)

¹⁸ Տե՛ս Rhode Island Stat. Ann. § 12-1.5-10 (2007).

¹⁹ Տե՛ս Vermont Stat. Ann. Tit. 20, § 1937 (2008).

²⁰ Տե՛ս E. MURPHY, Inside the cell, NationBooks, 2015, pp. 220 et s..

²¹ Տե՛ս Le Proces Penal A L'epreuve De La Genetique, Elsa Supiot; Juin 2017, p. 84

²² Տե՛ս <https://rg.ru/2008/12/09/genom-registracia-dok.html>; Актуальные проблемы организации и использования экспертно-криминалистических учетов органов внутренних дел, пути их решения, В.Х. Каримов, 2014, էջ 3:

մար դատապարտված և ազատազրկման դատապարտված անձանց, ինչպես նաև անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ հանցագործությունների բոլոր կատեգորիաները, 2) անհայտ անձինք, որոնց կենսաբանական նյութը ստացվել է քննչական գործողությունների ընթացքում, 3) անհայտ դիակները:

Այսպիսի կարգավորումը թույլ է տալիս տվյալների բազան ծառայեցնել հետևյալ նպատակներին՝ հանցագործությունների կանխարգելում, բացահայտում, հանցագործություն կատարած անձանց նույնականացում, ՌԴ տարածքում անհայտ կորածների, բնակվող կամ ժամանակավորապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հայտնաբերում, այն անձի նույնականացումը, որի մարմինը չի հայտնաբերվել այլ միջոցներով, փնտրվող անձանց ընտանեկան հարաբերությունների հաստատումը: Կարևոր է հասկանալ, թե ում է պատկանում այս տեղեկատվության օգտագործման իրավունքը (օրենքի 15-րդ հոդված), որպեսզի չարաշահումների առիթ չանդիսանա այդ լիազորությունը: Գենմի տեղեկատվության օգտագործման իրավունքը հասանելի է դատարաններին, նախաքննական մարմիններին, հետաքննական մարմիններին և հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին (1-ին մաս): Օտարերկրյա պետությունների շահերի համար գենոմային տեղեկատվության օգտագործումը իրականացվում է Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերին համապատասխան (2-րդ մաս):

Ինչպես տեսնում ենք, ռուսական օրենսդրությունը ևս շարժվել է այն ճանապարհով, որ նախատեսել է այն անհրաժեշտ պայմանը, ըստ որի՝ հստակ պետք է ամրագրվի լիազորությունն իրականացնող մարմինը:

Այսպիսով, ամփոփելով նշվածը, գտնում ենք, որ գենետիկական ֆոտոռոբոտների կիրառումը օպերատիվ-հետախուզական գործունեությունում կապահովի քրեական գործի

- 1) օբյեկտիվություն,
 - 2) արդյունավետություն,
 - 3) ժամանակի և միջոցների խնայողություն,
 - 4) իրական հանցագործի բացահայտում:
- Բացի այդ, հարկ ենք համարում նշել նաև,

որ գենետիկական ֆոտոռոբոտների կիրառումը արգելված չէ իրավական ակտերով, սակայն, այնուամենայնիվ կարծում ենք, որ նպատակահարմար է գենետիկական ֆոտոռոբոտի մասին համապատասխան օրենսդրական դրույթներ սահմանվեն «Օպերատիվ- հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում: Նման կարգավորումների նախատեսումը կապահովի գենետիկական ֆոտոռոբոտների կազման դրա հետ առնչվող այլ հարցերի հստակ և որոշակի կանոնակարգումը, ինչն իր հերթին թույլ կտա վարույթ իրականացնող մարմիններին օգտագործել այդ նյութերը հանցագործությունների բացահայտման ընթացքում:

Ի սկզբանե կողմ լինելով նաև առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառման նախատեսմանը, գտնում ենք, որ գործող «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը այսօր էլ հնարավորություն է նախատեսում գենետիկական ֆոտոռոբոտների կիրառման համար: Մասնավորապես հիշյալ օրենքը որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում սահմանում է անձի նույնացումը: Իսկ 23-րդ հոդվածը նշում է. «անձի նույնացումը օպերատիվ-հետախուզական նպատակներով նրա ինքնությունը պարզելն է արտաքին նշանների, մատնահետքերի և քրեագիտական այլ հետքերի հիման վրա»: Քանի որ գենետիկական ֆոտոռոբոտը ստեղծվում է դեպքի վայրից կամ տուժողի մարմնից հայտնաբերված հետքերից առանձնացված ԴՆԹ-ի հիման վրա, սույն օրենքի իմաստով այն կարող է համարվել անձի նույնացման եղանակ՝ որպես քրեագիտական այլ հետք:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում է տեխնիկական միջոցների կիրառման կարգը. «օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը լիազոր պետական մարմնի ներկայացմամբ հաստատում է ՀՀ կառավարությունը: Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացու-

մը սույն օրենքով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից»:

Այսինքն գենետիկական ֆոտոռոբոտի ստեղծման համար անհրաժեշտ սարքը և նրա կրիչը՝ որպես «հատուկ տեխնիկական և այլ միջոց» պետք է ընդգրկվեն կառավարության կողմից հաստավող ցանկում:

Հիշյալ օրենքով սահմանվող օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները՝ օրինականությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը և գերակայությունը, գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցությունը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահությունը, օպերատիվ-հետախուզական գործունեության բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը գենետիկական ֆոտոռոբոտների օգտագործման պարագայում կարող են հանդիսանալ կարևորագույն երաշխիքներ մարդու իրավունքների պահպանման տեսանկյունից:

Բացի այդ սույն օրենքով սահմանվում է, թե որ տեղեկություններն են համարվում պետական գաղտնիք. այդպիսիք են օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման մասին տեղեկությունները: Այսինքն որպես անձի նույնացում օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ գենետիկական ֆոտոռոբոտի ստեղծման և կիրառման արդյունքում ձեռքբերված տեղեկությունները համարվում են պետական գաղտնիք, իսկ պետական գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակման հետ կապված հանցագործությունները սահմանվում են ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ (պետական դավաճանություն), 302-րդ (լրտեսություն), 306-րդ (պետական գաղտնիք հրապարակելը) հոդվածներով:

Պետք է անդրադառնալ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին, որը սահմանում է. «օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել սույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների:» Այստեղից հետևում է, որ ֆոտոռոբոտը՝ որպես անձի նույնացման եղանակ չի հանդիսանում ապացույց, սակայն ծառայում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվող նպատակներին, այն է՝ հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը, դիակի, հանցագործության հետքերի հայտնաբերումը:

Այստեղ անհրաժեշտ է կարևոր դիտարկում կատարել. ֆոտոռոբոտը՝ որպես անձի նույնացում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունք հասկացվում է միայն պատկերը, այդ պատճառով որպես ապացույց չի դիտվում, այլ միայն միջոց է: Գենետիկական ֆոտոռոբոտներին ի տարբերություն սովորական ֆոտոռոբոտների, որոնք միայն պատկերի ձևով են արտահայտվում, կարող են լինել նաև հավանականության աղյուսակի միջոցով: Սրանից հետևում է, որ պատկերի միջոցով արտահայտված ֆոտոռոբոտը վարույթ իրականացնող մարմինը պետք է օգտագործի անձի նույնացման նպատակով՝ նրա դիմանկարը ճանաչման ներկայացնելու միջոցով (ինչպես սովորական ֆոտոռոբոտի դեպքում), իսկ հավանականության աղյուսակի միջոցով ստացված անձի տվյալները պետք է օգտագործվեն այլ եղանակով հանցագործություն կատարած անձանց հավանական շրջնակալը նեղացնելու միջոցով կամ համապատասխան փորձաքննություն կատարելու համար ներկայացվող նյութ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՀԱՆՐԱԳՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հանրագիր ներկայացնելու իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալների առկայությունը կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրում մասնակցային ժողովրդավարության գաղափարի կենսագործման, հանրային նշանակության հարցերում հասարակության մասնակցության մեխանիզմների հետևողական կատարելագործման, պետություն-հասարակություն հարաբերություններում արդյունավետ կապի հաստատման և պահպանման տեսանկյունից: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է հանրագրեր ներկայացնելու ինստիտուտի խթանմանը ուղղված համալիր միջոցառումների ձեռնարկումը: Պետք է նշել, որ ի թիվս հանրագրի ինստիտուտի խթանման այլ գործոնների (հանրագրերի ինստիտուտի նշանակության և ընձեռած հնարավորությունների վերաբերյալ հասարակության իրազեկվածության շարունակական բարձրացում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց կողմից «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով իրենց վերապահված լիազորությունների ամբողջական ծավալով արդյունավետ իրացում և այլն), թվային դարաշրջանում առանձնակի նշանակություն և կարևորություն ունի հանրագրերի ներկայացման էլեկտրոնային գործիքների առկայությունը:

Սրա մասին է վկայում նաև այլ երկրների փորձի ուսումնասիրությունը, որի արդյունքները հանգում են նրան, որ պետությունները հետևողական քայլեր են ձեռնարկում հանրագրերի

ների ներկայացման գործընթացը դյուրինացնելու և խթանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով, որ թվային դարաշրջանում չափազանց կարևոր է հանրագրերի ինստիտուտի կիրառմանն ուղղված թվային գործիքների ստեղծումը: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված բազում երկրներում հանրագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորության առկայությունը (բացառությամբ Ֆրանսիայի, Մալթայի, Հունաստանի, Ավստրիայի)¹: Ընդ որում, այս տեսանկյունից առաջամարտիկ է Շոտլանդիան, որը հանրագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգը ներդրել է դեռևս 1999 թվականին, ինչը, զգալի միջազգային ուշադրության արժանանալով, ճանաչում է ստացել գիտնականների և քաղաքական գործիչների շրջանում: Ուշադրության է արժանի նաև այն, որ հանրագրերի ներկայացման վիճակագրության առումով պատկերը երկրներում ևս տարբեր է: Այսպես, օրինակ Ֆրանսիայում տարեկան կտրվածքով ներկայացվում է 6 հանրագիր (1997-2007թթ.), Գերմանիայում՝ 17.500 հանրագիր (2006-2009թթ.), Շոտլանդիայում՝ 88 (2006-2011թթ.), Պորտուգալիայում՝ 122 հանրագիր (2006-2011թթ.), Բելգիայում՝ 10 (2007-2012թթ.)³:

Հաշվի առնելով վերոնշյալը և կարևորելով հանրագրերի ինստիտուտի լիարժեք գործարկումն ապահովելու անհրաժեշտությունը՝ հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ-ում հանրագրերի ներկայացման էլեկտրոնային հար-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Տե՛ս **Tiago Tiburcio**, The Right to Petition, Directorate-General for internal policies, Policy Department C, Citizens' rights and constitutional affairs, 2015, էջ 6, հասանելի է՝ [http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/519223/IPOL_STU\(2015\)519223_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/519223/IPOL_STU(2015)519223_EN.pdf) հղումով՝ 20.08.2019թ. դրությամբ, էջ 9, էջ 25:
² Տե՛ս **Riehm Ulrich, Knud Bohle, and Ralf Lindner**, «Electronic petitioning and modernization of petitioning systems in Europe.», Technology Assessment Studies Series 6, 2014, էջ 20:
³ Տե՛ս **Tiago Tiburcio**, նշված աշխատությունը, էջեր՝ 26, 34-35:

թակի առկայության, դրա կարևորության և արդյունավետ աշխատանքի կազմակերպման խնդիրներին:

Այսպես, 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության⁴ 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման պահանջը, «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքով⁵ (այսուհետ՝ Օրենք), ի թիվս այլ հարցերի, կարգավորվեցին նաև էլեկտրոնային եղանակով հանրագիր ներկայացնելու և հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի հետ կապված հարաբերությունները:

Ուշադրության է արժանի այն, որ Օրենքի իմաստով էլեկտրոնային եղանակով հանրագրի ներկայացումը չի նույնանում էլեկտրոնային հարթակի միջոցով հանրագիր ներկայացնելու գաղափարի հետ: Մեր այս եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով էլեկտրոնային եղանակով ներկայացվող հանրագիրը դիտարկվում է որպես «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի⁶ պահանջներին համապատասխան ներկայացված հանրագիր: Նշված օրենքի վերլուծությունը (2-րդ հոդված, 16-րդ հոդված և այլն) ցույց է տալիս, որ էլեկտրոնային եղանակով հանրագրի ներկայացումը ենթադրում է էլեկտրոնային փաստաթղթի ներկայացում՝ այլ կերպ ասած էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված տեղեկության ներկայացում (օրինակ էլեկտրոնային փոստի միջոցով վերը նշված վավերապայմաններին համապատասխանող փաստաթղթի ներկայացում): Հարցը գործնական տեսանկյունից դիտարկելիս, ստացվում է, որ անձը կարող է ցանկացած այլ էլեկտրոնային գործիքի միջոցով (e-request.am, e-gov.am) էլեկտրոնային թվային ստորագրությամբ հանրագիր ներկա-

յացնել իրավասու մարմին, որը ենթակա է պարտադիր քննարկման:

Ինչ վերաբերում է հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակին, ապա հարկ է նշել, որ Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (հրապարակային հանրագիր՝ էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձևով ներկայացվող հանրագիր), 7-րդ հոդվածի 3-րդ մասի (կոլեկտիվ հանրագիրը ենթակա է հրապարակման այդ նպատակով ստեղծված համացանցում հասանելի տիրույթում, եթե կոլեկտիվ հանրագրի բոլոր մասնակիցները ներկայացրել են այն հրապարակելու վերաբերյալ իրենց համաձայնությունը), 12-րդ հոդվածի 2-րդ մասի (հրապարակային հանրագիրը ներկայացվում է էլեկտրոնային միասնական հարթակում սահմանված ձևաթուղթը լրացնելու միջոցով), 16-րդ հոդվածի 2-րդ (կոլեկտիվ հանրագրի դեպքում պատասխանը հրապարակվում է նաև էլեկտրոնային միասնական հարթակում) և 3-րդ մասերի (հրապարակային հանրագրի պատասխանը հրապարակում է էլեկտրոնային միասնական հարթակում), 18-րդ հոդվածի 2-րդ (մինչև հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն կոլեկտիվ հանրագրերը հրապարակում են իրենց պաշտոնական կայքերում) մասի վերլուծությունից բխում է, որ հանրագրերի ներկայացման էլեկտրոնային միասնական հարթակը պետք է նախատեսված լինի՝

- 1) հրապարակային հանրագրերի համար,
- 2) կոլեկտիվ հանրագրերի համար, եթե հանրագրի բոլոր մասնակիցները տվել են այն հրապարակելու վերաբերյալ համաձայնություն.

Պետք է նշել, որ չնայած Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ներդրումը նախատեսված էր դեռևս 2019 թվականի հունվարի 1-ից, այնուամենայնիվ մինչ օրս հարթակը չի գործարկվել, ինչը, իր հերթին

⁴ Ընդունվել է 05.07.1995 թվականին, փոփոխվել է 27.11.2005 թվականին (ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426) և 06.12.2015 թվականին (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118):

⁵ Ընդունվել է 21.12.2017թ., ուժի մեջ է մտել 27.01.2018թ., ՀՀՊՏ 2018.01.17/4(1362) Հոդ.33:

⁶ Ընդունվել է 14.12.2004 թ., ուժի մեջ է մտել 27.01.2005 թ., ՀՀՊՏ 2005.01.26/7(379) Հոդ.114:

լուրջ խոչընդոտ է հանրագրերի ներկայացման տեսանկյունից: Կարծում ենք, որ հանրագրերի ներկայացման էլեկտրոնային հարթակի բացակայությունը կարող է հանդիսանալ հանրագրերի ինստիտուտի չկիրառման կարևորագույն դրոշմատուհան: Մենք գտնում ենք, որ արդի ժամանակաշրջանում, հաշվի առնելով էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների կարևորությունը, հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի գործարկումը կհանդիսանա լրացուցիչ խթան հանրագրերի ինստիտուտի արդյունավետ գործունեության երաշխավորման տեսանկյունից:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Օրենքը, անդրադարձ կատարելով հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակին, չի կարգավորում հարթակի տեխնիկական նկարագրի կամ հարթակի վարման կարգի հաստատման հետ կապված հարցերը: Կարծում ենք, որ համանման հարցերը անհրաժեշտ է կարգավորել ենթաօրենսդրական նորմատիվ ակտի միջոցով, և ըստ այդմ, Օրենքում անհրաժեշտ է նախատեսել լիազորող նորմ, որի հիման վրա ՀՀ կառավարությունը լիազորված կլինի հաստատել հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և հարթակի վարման կարգը: Իր հերթին, հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագրի և հարթակի վարման կարգի հարցերը կարգավորող ենթաօրենսդրական ակտում անհրաժեշտ է կարգավորել հարթակի բաժինների, դրա վարման և գործարկման աշխատանքներին մասնակցող լիազոր սուբյեկտների, հարթակի ադմինիստրատորի, վերջինիս հիմնական պարտականությունների հետ կապված և համանման այլ հարցերը: Բացի այդ, հանրագրերի ինստիտուտի պատշաճ կիրառումը ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է մշակել և իրականացնել հանրային իրազեկման մեծածավալ արշավ, սեղմ ժամկետում մշակել և գործարկել հանրագրերի միասնական էլեկտրոնային հարթակը՝ դիտարկելով նաև տարբեր կրթական ծրագրերում հանրագրերի ինստիտուտի վերաբերյալ կոմպոնենտ ներառելու հարցը:

Քննարկելով հանրագրերի էլեկտրոնային հարթակի հետ կապված հարցերը, հարկ ենք համարում անդրադառնալ նաև դրա հետ փոխկապակցված մեկ այլ կարևոր խնդրի՝ մասնավորապես հանրագրերի հրապարակման հիմնահարցին:

Վերը նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ հանրագրերի տեքստի և դրանց քննարկման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հարցի շուրջ պետությունների մոտեցումները տարբեր են: Ուշադրության է արժանի, որ Եվրախորհրդարանի 217 (2) կանոնի համաձայն պառլամենտի՝ հանրագրերի համար նախատեսված բաժնում հասարակության համար պետք է հասանելի լինի հանրագրի անվանումը և հակիրճ բովանդակությունը (ռեեստրում գրանցված), հանրագրի քննարկման հետ կապված կարծիքների տեքստը և առավել կարևոր որոշումները⁷:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ եվրոպական երկրների պառլամենտների մեծ մասը չեն հրապարակում հանրագրի տեքստը (Գերմանիայում թույլատրվում է միայն հանրային նշանակություն ունեցող հանրագրերի հրապարակումը): Դրան հակառակ, օրինակ հանրագրերի ամբողջական տեքստը հրապարակվում է Պորտուգալիայում, Շոտլանդիայում, Լյուքսեմբուրգում, որտեղ քաղաքացիներն ունեն նաև հանրագրերի քննարկման գործընթացին առցանց հետևելու հնարավորություն⁸:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում հանրագրերի հրապարակման հարցին, ապա հարկ է նշել, որ Օրենքի 7-րդ, 12-րդ և 16-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ հրապարակման են ենթակա՝

1. կոլեկտիվ հանրագրերը - այն դեպքում, երբ հանրագրի բոլոր մասնակիցները տվել են այն հրապարակելու համաձայնություն
2. հրապարակային հանրագրերը
3. կոլեկտիվ և հրապարակային հանրագրերի պատասխանները:

⁷ Տե՛ս **Rules of Procedure of the European Parliament N 217 (2)**, հասանելի է՝ http://www.europarl.europa.eu/doceo/document/RULES-8-2019-03-25-RULE-217_EN.html?redirect հղումով՝ 22.08.2019թ. դրությամբ:

⁸ Տե՛ս **Tiago Tiburcio**, նշված աշխատությունը, էջեր՝ 26, 34-35:

Անհրաժեշտ է նաև նշել, որ Օրենքի 7-րդ հոդվածը, սահմանել է կոլեկտիվ հանրագրի մասնակիցների համաձայնության դեպքում այն համացանցում հասանելի տիրույթում հրապարակելու հնարավորությունը: Նախ, Օրենքի դրույթը անհատակություն է մտցնում՝ սահմանելով մի դեպքում «համացանցում հասանելի տիրույթում հանրագրի հրապարակման հարցը, իսկ մյուս դեպքում, Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կոլեկտիվ հանրագրի պատասխանը պետք է հրապարակվի էլեկտրոնային միասնական հարթակում: Ստացվում է, որ կոլեկտիվ հանրագիրը կարող է հրապարակվել օրինակ այն ստացած պետական մարմնի պաշտոնական կայքում, իսկ պատասխանը՝ էլեկտրոնային միասնական հարթակում: Արդյունքում՝ հանրագրերի հետ կապված գործունեության և որոշումների կայացման գործընթացը բավարար չափով թափանցիկ և արդյունավետ չէ: Միևնույն ժամանակ, Օրենքի 7-րդ հոդվածը չի մանրամասնում հանրագրի պատասխանի հրապարակման առանձնահատկությունները՝ մասնավորապես այն, թե արդյոք կոլեկտիվ հանրագրի պատասխանի հրապարակման դեպքում ևս անհրաժեշտ է հանրագրի բոլոր մասնակիցների համաձայնությունը: Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը միայն սահմանում է, որ կոլեկտիվ հանրագրի դեպքում պատասխանը հրապարակվում է էլեկտրոնային միասնական հարթակում: Օրենքի 7-րդ և 16-րդ հոդվածների համադրված վերլուծությունից կարելի է գալ այն եզրահանգման, որ կոլեկտիվ հանրագրի հրապարակման վերաբերյալ մասնակիցների համաձայնության դեպքում գործում է նաև դրա պատասխանի հրապարակման վերաբերյալ հանրագրի մասնակիցների համաձայնության առկայության կանխավարկածը: Բացի այդ, չկարգավորված են մնում նաև այն դեպքերը, երբ կոլեկտիվ հանրագրի մասնակիցների մի մասը տալիս է համաձայնություն դրա հրապարակման համար, իսկ հանրագիրը հրապարակելուց հետո դրան միացած մյուս մասնակիցները չեն տալիս: Այս պարագայում առնվազն անհրաժեշտ է նախատեսել իրավական կարգավորում այն մասին, որ կոլեկտիվ հանրագրի հրապարակման համա-

ձայնությունը պահանջվում է միայն մինչ այն հրապարակելու պահը:

Հարկ է նշել, որ ի տարբերություն կոլեկտիվ և հրապարակային հանրագրերի (այդ թվում՝ դրանց պատասխանների) Օրենքով չի նախատեսվում անհատական հանրագրի՝ այլ կերպ ասած մեկ անձի կողմից ներկայացված հանրագրի էլեկտրոնային հարթակում հրապարակելու հնարավորություն: Նշվածի համատեքստում հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ անհատական հանրագրերի և հրապարակային ու կոլեկտիվ հանրագրերի հարաբերակցությանը՝ դրանց հիմնական տարբերությունները վերհանելու նպատակով:

Այսպես, Օրենքը նախատեսելով հրապարակային հանրագրեր ներկայացնելու ձևաթղթի լրացման միջոցով այն էլեկտրոնային միասնական հարթակում հրապարակելու պահանջ՝ որպես հրապարակային հանրագրի՝ այլ հանրագրերից տարբերակելու հիմք անուղղակի մատնանշում է միայն «գլխավոր նախաձեռնող և հանրագրի աջակիցներ» կառուցակարգը, իսկ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 1218-Ն որոշմամբ⁹ հաստատված՝ հրապարակային հանրագրեր ներկայացնելու ձևաթղթի ուսումնասիրությունը իր հերթին ցույց է տալիս, որ ձևաթղթով ևս չի նախատեսվում հրապարակային հանրագիրը մյուս հանրագրերից տարբերակելու այլ էական առանձնահատկություն:

Սա իր հերթին նշանակում է, որ ներկա իրավակարգավորման պարագայում անհատական հանրագիրը հրապարակային հանրագրից տարբերվում է նրանով, որ անհատական հանրագիրը ներկայացնում է մեկ անձ, իսկ հրապարակային հանրագրի դեպքում գլխավոր նախաձեռնողը և հանրագրի աջակիցները լրացնում են ՀՀ կառավարության կողմից հաստատված հանրագիր ներկայացնելու ձևաթուղթը (տեղադրված հարթակում), իսկ կոլեկտիվ հանրագրից անհատական հանրագիրը տարբերվում է նրանով, որ կոլեկտիվ հանրագիրը ներկայացվում է երկու և ավել անձանց կողմից, և դրանով շոշափում է միևնույն հարցը:

Այսպիսով, հաշվի առնելով անհատական հանրագրերի հարաբերակցությունը հրապար-

⁹ Ընդունվել է 01.11.2018 թ., ուժի մեջ է մտել 01.01.2019թ., ՀՀՊՏ 2018.11.14/84(1442) Հոդ.1163:

րակային և կոլեկտիվ հանրագրերի հետ՝ գտնում ենք, որ օրենսդրությամբ անհատական հանրագրերի հրապարակման հնարավորություն չընձեռելը հիմնավոր չէ, քանի որ էլեկտրոնային հարթակում հրապարակման ենթակա հանրագրերի և անհատական հանրագրերի տարբերակման հիմքում ներկայումս որպես չափանիշ առանձնացված է միայն հանրագիր ներկայացրած անձանց թվաքանակը (կոլեկտիվ և հրապարակային հանրագրերի դեպքում), իսկ կոլեկտիվ հանրագրի դեպքում նաև դրանով միևնույն հարց շոշափելու հանգամանքը, ինչը մեր կարծիքով չպետք է հանդիսանա խոչընդոտ անհատական հանրագրերի՝ հարթակում հրապարակելու հնարավորությունը նախատեսելու տեսանկյունից:

Մենք կարծում ենք, որ անհատական հանրագիր ներկայացրած անձի համաձայնության դեպքում ևս անհրաժեշտ է նախատեսել դրա հրապարակման (այդ թվում՝ պատասխանի) հնարավորություն, ինչը մի կողմից կապահովվի հանրագրերի քննարկման համար պատասխանատու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործունեության հաշվետվողականությունը, թափանցիկությունը, մյուս կողմից լրացուցիչ խթան կհանդիսանա հանրագրերի վերաբերյալ պատշաճ պատասխան տրամադրելու, ինչպես նաև միևնույն հարցի վերաբերյալ կրկնակի հանրագրեր ներկայացնելու դեպքերը կրճատելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, անհատական հանրագրերի մասով օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելիս, կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև նախատեսել այնպիսի հնարավորություն, որ անհատական հանրագիր ներկայացրած անձը այն սահմանի որպես կոլեկտիվ և հնարավորություն ընձեռի այլ անձանց միանալու հանրագրին: Այն դեպքում, երբ մեկ անձի կողմից ներկայացված կոլեկտիվ հանրագրին հրապարակումից հետո օրենքով սահմանած 30-օրյա ժամկետում ոչ մի անձ չմիանա, այն կշրջանառվի որպես անհատական հանրագիր: Առաջարկը հիմնավորվում է նաև նրանով, որ Սահ-

մանադրության 53-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի անհատապես **կամ այլոց հետ մեկտեղ** պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: Գործնականում «այլոց հետ մեկտեղ» հանրագիր ներկայացնելը պետք է ենթադրի նաև մեկ անձի կողմից հանրագիր ներկայացնելու պարագայում դրան այլ անձանց միանալու հնարավորության առկայության և ըստ այդմ, տվյալ անձի կողմից թեթեւաբար եղանակով հանրագիր պատրաստելը, շահագրգիռ անձանց շրջանում «հրապարակելը» և աջակիցների թղթային ստորագրություններ ստանալը, թե՛ էլեկտրոնային եղանակով հրապարակելը և աջակիցների ստորագրությունները ստանալը:

Միևնույն ժամանակ, խոսելով հանրագրերի և մասնավորապես էլեկտրոնային հանրագրերի ինստիտուտի արդյունավետության մասին, պետք է ևս մեկ անգամ հիշատակենք Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված այն կարևորագույն պահանջը, որ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների **արդյունավետ** իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»: Կարծում ենք՝ հանրագրերի դեպքում առկա կառուցակարգերի և ընթացակարգերի, ինչպես նաև հանրագրերի էլեկտրոնային հարթակի արդյունավետության գնահատման համար պետք է ներդնել նաև գնահատման թվային ցուցանիշներ: Ցավոք որևէ իրավական ակտում սահմանված չէ հանրագրերի, դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրություն հավաքագրելու և վերլուծելու պահանջ: Այս առումով առաջարկվում է թե՛ օրենսդրության արդիականացման, թե՛ էլեկտրոնային հարթակի ստեղծման ընթացքում ամրագրել հանրագրերի և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ հավաքագրելու և հրապարակելու պահանջ:

ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հանրային-իրավական հարաբերություններում անհատի կարգավիճակներից status activus-ը¹ կապված է պետության ներքին կյանքին քաղաքական մասնակցություն ունենալու իրավունքների հետ (ընտրելու, հանրաքվեին մասնակցելու, կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու և այլ քաղաքական իրավունքներ, որոնք բխում են անձի՝ պետության հետ ունեցած իրավական կապից ու տրված են բացառապես ՀՀ քաղաքացիներին)²: Իշխանության միակ կրողը ժողովուրդն է, ուստի տեղին է այն տեսակետը, թե ժողովրդաիշխանությունը հանդես է գալիս ժողովրդի ինքնորոշման և ինքնակառավարման ձևով, որին հավասար հիմքերով կարող են մասնակցել բոլոր քաղաքացիները³: Մինչդեռ ծանր հանցագործությունների համար դատապարտված ու պատիժը կրող քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրելու և ընտրվելու իրավունքի բացակայությունը չի տեղավորվում վերոնշյալ սկզբունքի մեջ:

Տրամաբանական հարց է առաջանում, թե արդյոք այս քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակումը լռելյայն չի ծառայում որպես լրացուցիչ պատժի տեսակ:

Հարցի պատասխանը ստանալու համար պետք է ընտրական իրավունքի սահմանափակման հիմնախնդիրը դիտարկել նաև իրավաբանական պատասխանատվության համատեքստում:

Ինչպես սահմանում է հայ ականավոր իրավագետ Վ.Ներսեսյանցը՝ իրավաբանական պատասխանատվությունը խախտված նորմի՝ սանկցիայով նախատեսված և իրավասու պետական մարմնի կողմից պատշաճ դատավարական-իրավական կարգով իրավախախտողի նկատմամբ կիրառվող իրավական հարկադրանքի միջոցն է⁴: Իրավունքի տեսության մեջ տարբերակվում են իրավաբանական պատասխանատվության երկու տեսակ՝ իրավաբանական պատասխանատվություն իրավաչափ գործունեության համար (պոզիտիվ/պերսպեկտիվ պատասխանատվություն) և պատասխանատվություն իրավախախտման համար (նեգատիվ պատասխանատվություն): Վերջինը պետության նեգատիվ արձագանքն է իրավախախտման նկատմամբ, ինչն արատհայտվում է իրավախախտի հակաիրավական արարքի համար վրա հասնող արդարացի հատուցմամբ: «Արդարացի հատուցում» ասվածը տեղի ունի, երբ հատուցվում է պատճառված վնասը և/կամ պատժվում է իրավախախտում թույլ տված անձը: Ինչևէ, իրավաբանական պատասխանատվությունը (նեգատիվ իմաստով) և պատիժը չեն նույնանում: Եթե իրավաբանական պատասխանատվությունը հակաիրավական արարքի համար վրա հասնող ընդհանուր հետևանքն է, ապա պատիժը՝ այդ հետևանքի դրսևորման ձևերից մեկը: Իհարկե, անձին իրավաբանական պատասխանատվության ենթարկելն ինք-

¹ Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Եր. Լուսաբաց հրատ., 2014, էջ 197, Չաքս Միխայել Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքներ: Սուբյեկտիվ հանրային իրավունքը վարչական իրավունքում: Եր.: Տիգրան Մեծ, 2012. էջ 27
² Բացառություն են կազմում Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որոնց կարող են մասնակցել նաև մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք: ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, հ. 2 կետ 2.3
³ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի – Եր.: «Իրավունք», 2010, էջ 55-56
⁴ Իրավունքի և Պետության տեսություն: Վ.Ս.Ներսիսյանց.Երևան, Նաիրի, 2001 էջ 285

նանպատակ չէ և ընդհանուր առմամբ կոչված է վերականգնելու խախտված իրավակարգը՝ գործադրելով իրավունքի պաշտպանության միջոցները: Պատիժը պետական հարկադրանքի ամենախիստ միջոցն է, որ դրսևորվում է մարդու իրավունքների և ազատությունների առավել մեծ ծավալով սահմանափակմամբ, ուստի դրա հետապնդած նպատակները պետք է համապատասխանեն իրավունքի ընդհանուր և ճյուղային սկզբունքներին և ծառայեն քրեական օրենսգրքով նախանշված խնդիրների լուծմանը: Հետևաբար, ընտրական իրավունքի սահմանափակումը ազատագրվման դատապարտված քաղաքացիների համար իրավաբանական պատասխանատվության քրեաիրավական տեսակի համատեքստում քննարկելիս պետք է վեր հանել և խորը ուսումնասիրել այնպիսի դրույթներ, ինչպիսիք են՝ **պատժի⁵ նպատակը և գործառույթները**: ՀՀ Քր. Օր. 48-րդ հոդվածը տալիս է պատժի հետևյալ հասկացությունը՝ *Պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ*: Այդ հոդվածի երկրորդ մասով սահմանվում է քրեական պատժի հետապնդած նպատակները՝ **սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի ուղղումը և հանցագործությունների կանխումը**:

Պատժի նշանակումը պետության արձագանքն է կատարված հանցագործությանը, ուստի բնական է, որ պատմության տարբեր ժամանակշրջաններում պատժի նպատակները փոփոխությունների են ենթարկվել՝ արտացոլելով հասարակության սոցիալ-հոգեբանական վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Պատժագիտության հիմնադիր Չեզարե Բեկարիան օրինակ գտնում էր, որ պատիժը պետք

է ճիշտ համաչափ լինի այն ազատությանը, որի պաշտպանությանն ուղղված է: Իսկ պատժի նպատակին անդրադառնալով, նա գրում է, որ դրա միակ նպատակը մեղավորին և հասարակության մյուս անդամներին հասարակարգին նոր վնաս հասցնելուց ետ պահելն է: Դրա համար անհրաժեշտ է կիրառել պատժի այնպիսի տեսակներ, որոնք մարդու հոգու վրա ամենաուժեղ ու ամենաերկարատև տպավորությունը կգործեն, իսկ հանցանք կատարած անձի մարմնի համար կլինեն նվազ տանջալի⁶:

Իսկ ահա Մոնտեսքյուն իր «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ պնդում է, որ լավ օրենսդիրը պետք է ոչ այնքան մտահոգվի հանցագործությունների համար պատժելու, այլ դրանք կանխելու մասին. նա պետք է ձգտի ոչ թե պատժել, այլ բարելավել բարքերը:

Այս երկու մտածողներն էլ առաջ են քաշում կարևորագույն դրույթ, այն է՝ պատժի կիրառումը որպես հանցագործությունների կանխման գործիք:

Իսկ ինչպիսին էր քրեաիրավական անդրադարձը պատժի նպատակներին հայկական պետականության տարբեր փուլերում:

Այսպես՝ այժմ գործող Քրեական օրենսդրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ պատժի նպատակները մի փոքր այլ էին 1922թ. ՀՍԽՀ Քր. Օրենսգրքով, որպես այդպիսիք նշվում էին՝

- ա. Կանխել ընդհանրապես թե խախտողի, թե հասարակության այլ անկայուն տարրերի նոր խախտումները
- բ. Խախտողին ընտելացնել հանրային կյանքի պայմաններին ուղղիչ-աշխատանքի ներգործության միջոցով
- գ. Հանցավորին զրկել հետագայում նոր հանցանքներ գործելու հնարավորությունից⁷:

Ակնհայտ է, որ 1922թ. օրենսդրությամբ պատժի նախանշված նպատակները երկուսն էին՝ **հանցագործությունների կանխումը** (մի

⁵ Ներկայիս ՀՀ Քրեական օրենսգրքը հանցանք կատարած անձի նկատմամբ նախատեսում է պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների (բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, բռնազանձում) կիրառում:

⁶ Cessare Beccaria. An Essay on Crimes and Punishments. With a Commentary by M. de Voltaire. A New Edition Corrected. (Albany: W.C. Little & Co., 1872). P.26
http://files.libertyfund.org/files/2193/Beccaria_1476_EBk_v6.0.pdf

⁷ Հ.Ս.Խ.Հ Քրեական օրենսգրքը, 22.07.1922թ, հոդ.8

դեպքում հասարակության բոլոր անդամների համար ընդհանրացված ձևով՝ պատասխանատվության անխուսափոլիության սկզբունքի գործադրմամբ (ա կետ), իսկ մյուս դեպքում հենց հանցանք կատարած անձի ֆիզիկական իզոլացման ձևով (գ կետ)), և **հանցանք կատարած անձի ուղղումը**: Փաստորեն, սոցիալական արդարության վերականգնումը, որպես պատժի նպատակ չէր նշվում:

Իսկ ահա 1961թ ՀԽՍՀ Քրեական օրենսգրքում պատժի նպատակներն էին ոչ միայն մեղքի քավումը կատարված հանցագործության համար, այլև դատապարտվածներին ուղղելն և վերադաստիարակելը աշխատանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև նոր հանցագործությունների կատարումը կանխելը ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից⁸: Հողվածի վերլուծությունը փաստում է, որ ընդհանուր առմամբ ինչպես նախորդ Քրեական օրենսգրքում, այնպես էլ քննարկվող օրենսգրքում պատժի հետապնդած նպատակները հանցանք կատարած անձի ուղղումը (վերադաստիարակումը) և հանցագործությունների կանխումն էին: Մի տարբերությամբ, որ այս անգամ օրենսդիրն ավելացնում է շատ կարևոր դետալ, այն է **մեղքի քավումը**, այսինքն պատիժը որպես ինքնանպատակ (ռուս.՝ кара): Թեպետ հողվածի վերջին մասում ամրագրված էր, որ պատիժը նպատակ չունի ֆիզիկական տանջանքներ պատճառել կամ ստորացնել մարդկային արժանապատվությունը:

Արդի ժամանակաշրջանում արդեն նկատելի է իրավագիտության, և մասնավորապես քրեագիտության միտումը «պատժողական արդարադատություն»-ից անցում կատարելու «վերականգնողական»-ի, այսինքն հանցանք կատարած անձի ուղղումը և որպես հետևանք այդ անձի կողմից այլ հանցագործությունների կանխումը նրա վերականգնման/վերափոխման միջոցով առաջնահերթություն է դառնում: Սրա մասին է վկայում նաև ՀՀ-ում վերջերս ներդրված և վերասոցիալիզացիայի ոլորտում հաջողությամբ գործարկված պրոբացիայի ինստիտուտը:

Մարդասիրության և «վերականգնողական արդարադատության» գաղափարների լույսի ներքո անհասկանալի և պատժի հետապնդած նպատակների տեսանկյունից չհիմնավորված է դառնում քաղաքացու քաղաքական իրավունքներից մեկի՝ ընտրելու իրավունքի սահմանափակումը:

Հայկական իրավական պրակտիկայում ընտրական իրավունքի սահմանափակումը և՛ որպես լրացուցիչ, և՛ որպես հիմնական պատիժ ֆորմալ կիրառվել է մինչև «Դատարանով ընտրական իրավունքից զրկելը վերացնելու մասին» ԽՍՀՄ օրենքի ուժի մեջ մտնելը (1958թ.), թեև դրան հաջորդած խորհրդային իրականության մեջ ազատագրկման դատապարտված անձինք, փաստացի, այդպես էլ չէին իրացնում իրենց ընտրական իրավունքը: ՀԽՍՀ 1927թ. Քրեական օրենսգիրքը հանցագործություն կատարած անձանց նկատմամբ կիրառվող «սոցիալական պաշտպանության միջոցները» վերտառությամբ չորրորդ բաժնում անդրադառնում էր իրավունքների սահմանափակմանը՝ դրանց թվում նշելով ակտիվ և պասիվ ընտրական իրավունքների սահմանափակումը: Եթե այն տարիներին դատարանն ամեն առանձին դեպքում քննության էր առնում իրավունքների սահմանափակման հարցը, ապա այժմ ՀՀ Սահմանադրության մակարդակով արդեն ծանր հանցագործություն կատարած և պատիժը կրող քաղաքացիները զրկվում են ընտրելու իրավունքից լռելյայն՝ առանց որևէ դատական ակտի:

Երբ քննարկում ենք ընտրական իրավունքի սահմանափակման խնդիրը քրեական պատասխանատվության նպատակների հարթակում, առաջ է գալիս այդ սահմանափակումը նպատակներից որևէ մեկի առանցքում տեղավորելու հարցը: Քրեական օրենսգիրքը բավարարվում է միայն պատժի նպատակների նշումով՝ չբացահայտելով դրանց էությունը ու չտալով դրանց բնորոշում: Նպատակները, առանց դրանց հետագա հիշատակման, կյանքի են կոչվում քրեական օրենսդրության այլ նորմերի կիրառմամբ: Ուստի կարևոր ենք համարում պատժի նպատակների ու ընտրական իրավունքի սահմանափակման հարաբերակցությունը

⁸ ՀԽՍՀ 1961թ. Քրեական օրենսգիրք, հոդ. 20

քննարկել առանձին-առանձին՝ յուրաքանչյուր պատժի տեսակի նպատակային տիրույթում:

1. Սոցիալական արդարության վերականգնման նշումը, որպես նպատակ, հարաբերականորեն նոր երևույթ է քրեագիտության մեջ ու հակասական կարծիքների ու բազմակողմանի քննարկումների առարկա իրավագետների շրջանում: Բանն այն է, որ «արդարությունն» ինքնին ավելի շատ բարոյական, քան իրավական կատեգորիա է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքում հանդիպում է որպես սկզբունք: Սոցիալական արդարության վերականգնումը պետք է դիտարկել կատարված հանցանքի հետևանքով խախտված հասարակական հարաբերության երկու կողմերի նկատմամբ իրականացվող գործողությունների և նրանց վրա այդ խախտման հետևանքների տեսանկյունից: Այսինքն թե՛ տուժողը, և թե՛ հանցանք կատարած անձը պետք է տեղավորվեն «սոցիալական արդարության» շրջագծում՝ տուժողը հասարակությանը (և անհատապես իրեն) պատճառված վնասի վերականգնման միջոցով, իսկ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձը՝ իր նկատմամբ արդարացի պատժի նշանակմամբ, որի տեսակը և չափը կորոշվեն հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով⁹:

2. Հանցագործությունների կանխումը ՀՀ Քր. Օր.-ում հանդիպում է թե՛ որպես պատժի նպատակ, թե՛ որպես օրենսդրի խնդիր: Հետաքրքրական է, որ ՀԽՍՀ 1961թ. Քր. Օր.-ում այս նպատակը ստացել էր հետևյալ ձևակերպումը՝ կանխել նոր հանցագործությունների կատարումն **ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից**: Այսինքն՝ հանցագործության կանխումը, որպես նպատակ հասցեագրվում էր ինչպես հանցանք կատարած անձին, այնպես էլ հասարակության մյուս անդամներին (*պատժի անխուսափելիության սկզբունք*): Ի տարբերություն վերոնշյալ իրա-

վական ակտի՝ ՀՀ այժմ գործող Քր. Օր.-ը ընդհանուրի և հատուկի այդ տարբերակումը չի դնում: Ավելին, թեպետ «կանխել» բառի բացատրությունը բառարանում «նախօրոք ձեռնարկած միջոցառումների շնորհիվ վերացնել սպառնալիքը, որևէ բանի իրագործվելուն խանգարել, առաջն առնել, արգելակելն» է, այնուամենայնիվ, Քր. Օր.-ում հանդիպում է **«հեղաշա** վնասը կանխել¹⁰» արտահայտությունը, իսկ 1961թ. Քր. Օր.-ում՝ «կանխել **նոր** հանցագործությունները¹¹» արտահայտությունը: Այս իմաստով մեկնաբանությունների տեղիք է տալիս պատժի նպատակի ներկա ձևակերպումը առնվազն հանցանք կատարած անձի մասով. ի վերջո, այդ անձին ազատազարկման հետ կապված պատժի դատապարտելով, ինչ խնդիր է լուծում պետությունը, արդյոք դա արվում է նրա ուղղման, հետևաբար *հեղաշա* հանցագործությունների կանխման նպատակով, թե՛ միայն **«զսպում»** է հանցագործությունների կատարումը պատժի կրման ընթացքում՝ այդ անձին հասարակությունից մեկուսացնելու միջոցով: Եթե պատժի նպատակը հետագա հանցագործությունների կանխումն է թե՛ արդեն հանցանք կատարած անձի, թե՛ հասարակության մյուս անդամների կողմից, ապա կարծում ենք, որ ընտրական իրավունքի սահմանափակման հեռանկարը օբյեկտիվորեն այն զսպիչ գործիքը չէ, որ կարող է վիժեցնել հանցագործության նախապատրաստությունը: Իսկ եթե պատժի նպատակը հանցագործությունների կատարման «զսպումն» է, ապա ընտրական իրավունքի սահմանափակման հարցն ուղղակի դուրս է մնում պատժի այս նպատակի սահմանագծից:

3. Պատժի ենթարկված անձի ուղղումը որպես պատժի նպատակ հստակեցվում է ՀՀ Քրեակատարողական իրավունքում մասնավորապես՝ օրենսգրքի 16-րդ հոդվածում նշվում է, որ դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջիններիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կեն-

⁹ ՀՀ Քրեական օրենսգրք, հոդ. 61

¹⁰ ՀՀ Քրեական օրենսգրք, հոդված 299

¹¹ ՀԽՍՀ Քրեական օրենսգրք 1961թ, հոդված 20

սակերպի ամրապնդման և զարգացման նպատակով: Բացահայտելով պատժի այս նպատակի էությունը՝ օրենսդիրը անդրադառնում է նաև դատապարտյալի ուղղման միջոցներին, ինչը դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների համակցություն է: Վերոնշյալից եզրահանգում ենք, որ ընտրական իրավունքի սահմանափակումը ոչ մի կերպ չի կարող տեղավորվել հանցանք կատարած անձի ուղղման նպատակի շրջանակում: Ավելին, այն դեպքում, երբ բացակայում են փաստափաստ տվյալներ ընտրական իրավունքի սահմանափակման ու ազատազրկված անձի ուղղման միջև կապի մասին, մասնագետ հոգեբանների մի մեծ խումբ պնդում է հակառակը: Անվիճելի է, որ ազատազրկման դատապարտված անձը պատիժը կրելու ընթացքում և դրանից հետո անխուսափելիորեն կրում է որոշակի անձնային փոփոխություններ, որոնք հետագայում խոչընդոտում են նրա՝ հասարակություն վերադառնալու և ինտեգրվելու գործընթացը: Հետևաբար, չսահմանափակելով ազատազրկված անձի ընտրական իրավունքը, պետությունն իր քաղաքացուն չի մեկուսացնում պետության կառավարմանը մասնակցելու գործընթացից, ինչը նպաստում է այդ անձի քաղաքացիական պատասխանատվության և իրավագիտակցության բարձրացմանը: Այդպես չի խզվում կապը ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացու և այն հասարակության միջև, ուր նա վերադառնալու է պատիժը կրելուց հետո:

Այսպիսով եզրահանգում ենք, որ ընտրական իրավունքի սահմանափակումը և այժմ գործող Քրեական օրենսդրությամբ նախատես-

ված պատժի հետապնդած նպատակները ոչ մի կետում չեն հատվում:

Վերոգրյալի հիմնական հակափաստարկը, թերևս, իրավունքի տեսության ոլորտից է: Շատ իրավաբան գիտնականներ ազատազրկված անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը հիմնավորում են հասարակական դաշինքի և իրավունքի գերակայության դեմ վերջինների կատարած ոտնձգություններով: Չարգացնելով հասարակական դաշինքի մասին Ջոն Լոկի արտահայտած գաղափարները՝ որոշ գիտնականներ առաջ են քաշում հետևյալ բանաձևումը՝ այն անձը, ով խախտել է հասարակության բնականոն համակցության կանոնները (օրենքները), չի կարող մասնակցել այդ նույն կանոնների (օրենքների) ստեղծմանը¹²: Այսպես օրինակ՝ ընտրական իրավունքի սահմանափակմանը վերաբերող և անկյունաքարային համարվող *Sauvé v the Attorney General of Canada* գործում դատարանը վեր է հանում ծանր հանցագործությունների հասարակական մերժման և հասարակական դաշինքի և օրենքի գերակայության պաշտպանության հարաբերակցությունը, ինչը կոչված է ամրապնդելու քաղաքացու և հասարակության միջև կապը: Այս դատական գործի շրջանակներում առաջին անգամ խոսվում է ընտրական իրավունքի սահմանափակման **խորհրդանշական** բնույթի մասին, և դատարանը գտնում է, որ քաղաքացիական պատասխանատվության խթանումը կարող է վերացական կամ խորհրդանշական լինել, և որ այդ խորհրդանշական կամ վերացական նպատակները կարող են վավեր լինել և հավակնել որպես պատժի իրավաչափ նպատակ ծառայելուն¹³:



¹² William Cobbett, *Advice to Young Men* (1829), Letter VI, էջ. 287 <https://archive.org/details/cobbettsadvicet00cobbgoog/page/n292>

¹³ <https://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/2010/index.do> (no.2)

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
նույն ամբիոնի հայցորդ

**ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՉՍԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ
(Զարունակություն)**

Եվրոպայում, Լուսավորության դարաշրջանում սկսվեց պառլամենտարիզմի սկզբունքների տեսական իմաստավորումը: Այսպես, Անգլիայում Ջոն Լոքը իր «Երկու տրակտատ կառավարման մասին» աշխատությունում ընդգծում է. «... ժողովուրդը գտավ, որ իր սեփականության անվտանգությունը ապահովված չէ ... և որ ինքը չի կարող օգտվել, ոչ անվտանգությունից, ոչ հանգստից, և ոչ էլ կարող է համարել, թե ապրում է քաղաքացիական հասարակությունում, այնքան ժամանակ, քանի դեռ օրենսդրական իշխանությունը չի հանձնվել կոլեկտիվ մարմնի տնօրինությանը, անկախ այն բանից, թե ինչպես կկոչվի այն՝ սենատ, խորհրդարան, թե մի այլ կերպ»: Անգլիական խորհրդարանական համակարգին դրական գնահատական է տվել Ֆրանսիացի մեծ մտածող Վոլտերը «Փիլիսոփայական նամակներ Անգլիայի մասին» գրքում: Իշխանությունների տարանջատման տեսությունը առավել ամբողջական տեսքով ձևակերպեց Շարլ-Լուի Մոնտեսքյոն, որի կարծիքով օրենսդիր իշխանությունը պետք է իրականացվի ժողովրդի կողմից իր ներկայացուցիչների միջոցով: Միաժամանակ, Ֆրանսիացի մեկ այլ ականավոր գրող Ժան-ժակ Ռուսոն, ըստ էության հերքում էր իշխանության ներկայացուցչական ձևը, պնդելով որ ժողովրդին կարող է ներկայացնել միայն հենց ինքը՝ ժողովուրդը¹:

XVIII դարի սկզբին Հյուսիսային Ամերիկայում ձևավորված բրիտանական գաղութի պայքարը մետրոպոլիայի դեմ հանգեցրեց կառավարման հանրապետական ձև ունեցող նոր պետության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջացմանը: 1787թ. մշակվեց ԱՄՆ-ում մինչ օրս գործող Սահմանադրությունը, որում իրա-

կանություն դարձան Մոնտեսքյոյի՝ իշխանության տարանջատման գաղափարները: Դաշնային մակարդակով օրենսդրական մարմին դարձավ երկպալատանի Կոնգրեսը, որի ստորին՝ Ներկայացուցիչների պալատը ընտրվում է երկու տարով (ներկայացուցիչների քանակը յուրաքանչյուր նահանգից որոշվում է դրա բնակչության թվից ելնելով): Վերին պալատում՝ Սենատում բոլոր նահանգները ներկայացված են հավասար թվով ներկայացուցիչներով (երկուական սենատոր յուրաքանչյուր նահանգից, որոնք ընտրվում են վեց տարի ժամկետով): Մինչև 1913թ. սենատորներն ընտրվում էին նահանգների օրենսդիր մարմինների կողմից, սակայն հետագայում նրանք սկսեցին ընտրվել ուղղակի քվեարկությամբ: Օրենսդիր իշխանության կազմակերպման այս սկզբունքը հետագայում լայն տարածում գտավ բազմաթիվ դաշնային պետություններում, որտեղ խորհրդարանի ստորին պալատը ներկայացնում է ամբողջ բնակչությանը, իսկ վերին պալատը՝ դաշնության սուբյեկտներին: Ընդհանուր առմամբ, ամերիկյան խորհրդարանական համակարգը էական առաջընթաց քայլ է անգլիականի համեմատությամբ. հետագայում այն մեծ ազդեցություն ունեցավ հատկապես Լատինական Ամերիկայում պառլամենտարիզմի զարգացման վրա:

Համաշխարհային պատմության համար վիթխարի նշանակություն ունեցան XVIII դարի վերջին տեղի ունեցած ցնցումային իրադարձությունները Ֆրանսիայում, որն այդ դարաշրջանում Եվրոպայի առաջատարն էր: Կարճ հատվածում երկրում տեղի ունեցավ ֆեոդալական հասարակարգի տապալում, զուգահեռաբար ընթանում էին իշխանության և հասարա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Смъ Парламенты: сравнительное исследование структуры и деятельности представительных учреждений 55 стран мира/ пер. с англ. М.: Прогресс, 1967, 423-431 с.:

կության կազմակերպման նոր ձևերի որոնումները և մշակումները:

Ներկայացուցչական մարմիններն անընդհատ հեղափոխական գործընթացների կենտրոնում էին: Հեղափոխության անմիջական ազդակ հանդիսացավ Լյուդովիկոս XVI-ի կառավարության որոշումը Գլխավոր շտատներ (այսինքն՝ դասային ներկայացուցիչներին) հրավիրելու վերաբերյալ, որի նպատակը ֆինանսական ճգնաժամից դուրսբերելն էր: Պատգամավորների ընտրություններն անցնում էին բնակչության քաղաքական ակտիվության վիթխարի բռնկման պայմաններում, որը պահանջում էր լայնածավալ սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումներ: 1789թ. մայիսի 5-ին բացված Գլխավոր շտատներում քանակական առավելությունը ընդդիմադիր երրորդ դասի պատգամավորների կողմն էր (578 մարդ), որոնց հարում էր նաև ազնվականության պատգամավորների մի մասը (90-ը 270-ից): Ավանդության համաձայն տարբեր դասերի նիստերն անցկացվում էին առանձին-առանձին, և դրանց ներկայացված հարցերի քննարկման ժամանակ յուրաքանչյուր դաս ուներ մեկ ձայնի իրավունք: Սակայն հունիսի 17-ին պատգամավորները մերժեցին դասային սկզբունքը և իրենց հռչակեցին *Ազգային ժողով*, այսինքն՝ դասային բաժանումից զուրկ մարմին, որպես Ֆրանսիայի ամբողջ ժողովրդի ներկայացուցիչ, որը հավակնում էր գերագույն իշխանությանը: Հանդիպելով թագավորի պասիվ դիմադրությանը, հունիսի 20-ին նրանք հանդիսավոր երդվեցին չլուծարվել այնքան ժամանակ, քանի դեռ չի մշակվել սահմանադրությունը: Հուլիսի 9-ին պատգամավորներն իրենց հռչակեցին *Հիմնադիր (սահմանադրական) ազգային ժողով*:

1789թ. օգոստոսի 26-ին Հիմնադիր ժողովն ընդունեց *Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը*² ապագա սահմանադրության ներածությունը (պրեամբուլան): Այս փաստաթղթում հստակ ձևակերպվեցին անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև հռչակվեց ժողովրդական ինք-

նիշխանության սկզբունքը: Այս հռչակագիրը դեռ երկար ժամանակ օրինակ էր ծառայելու աշխարհի շատ երկրների սահմանադրությունների համար: Ֆրանսիայում այն մինչև օրս էլ սահմանադրական օրենսդրության անքակտելի մասն է կազմում²:

1789-1791թթ. Հիմնադիր ժողովը մի շարք բարեփոխումներ իրականացրեց Հռչակագրի ոգով և նախապատրաստեց սահմանադրության տեքստը, որով նախատեսվում էր անցում կատարել դեպի սահմանադրական (դուալիստական) միապետություն, համաձայն որի գործադիր իշխանությունը մնում էր թագավորի ձեռքում, իսկ օրենսդիրը անցնում էր միապալատ խորհրդարանին՝ *Օրենսդիր կորպուսին*, որն ընտրվում էր «ակտիվ», այսինքն՝ որոշակի ցենզային պայմաններին համապատասխանող քաղաքացիների անուղղակի քվեարկությամբ երկու տարի ժամկետով: 1791թ. սեպտեմբերի 3-ին սահմանադրությունը վերջնականապես հավանության արժանացավ Հիմնադիր ժողովի կողմից, իսկ սեպտեմբերի 14-ին սահմանադրության վրա երդվեց թագավորը: Հոկտեմբերի 1-ին կայացավ նոր Օրենսդրական կորպուսի առաջին նիստը: Սակայն, սահմանադրական միապետության կողմնակիցների սպառնալուծներին հակառակ, դրանով հեղափոխությունը չավարտվեց: 1792թ. գարնանը Ֆրանսիան պատերազմ սկսեց առաջին հակաֆրանսիական կոալիցիայի դեմ, ինչն էլ, իր հերթին, հեղափոխական-հայրենասիրական տրամադրությունների հսկայական ալիք բարձրացրեց: 1792թ. օգոստոսի 10-ին Փարիզում տեղի ունեցավ ապստամբություն, որի արդյունքում միապետությունը փաստացիորեն տապալվեց: Միաժամանակ, որոշում կայացվեց հրավիրել *Ազգային կոնվենտ*³՝ նոր սահմանադրություն մշակելու համար: Նոր ներկայացուցչական մարմինն առաջին անգամ ընտրվեց համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա, որը տարածվում էր 21 տարեկանից բարձր, ծառայության մեջ չգտնվող բոլոր տղամարդկանց վրա, չնայած որ ընտրությունները դեռ անուղղակի բնույթ էին կրում: Կոնվենտն իր աշխա-

² Ներկայիս գործող սահմանադրության (1958թ.) պրեամբուլան սկսվում է հետևյալ բառերով. «Ֆրանսիայի ժողովուրդը հանդիսավոր հռչակում է իր հավատարմությունը մարդու իրավունքներին և ազգային ինքնիշխանության սկզբունքներին, որպիսիք սահմանվել են 1789թ. հռչակագրում...»:

տանքը սկսեց 1792թ. սեպտեմբերի 21-ին և արդեն հաջորդ օրն իսկ լուծարեց միապետությունը և Ֆրանսիան հանրապետություն հռչակեց: Հետագա մի քանի տարիների ընթացքում Կոնվենտը ոչ միայն մնաց որպես օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը, այլև իրականացնում էր գործադիր իշխանության բոլոր գործառույթները՝ իր կոմիտեների, և առաջին հերթին՝ Հասարակական փրկության կոմիտեի, միջոցով:

Կոնվենտը դարձավ չափազանց սուր քաղաքական պայքարի թատերաբեմ, ինչը ուղղակիորեն կապված էր այն բուռն իրադարձությունների հետ, որ տեղի էին ունենում ամբողջ Ֆրանսիայում, և առաջին հերթին՝ Փարիզում, որի բնակչությունը որոշիչ դեր խաղաց հեղափոխության բազմաթիվ առանցքային իրադարձություններում: Այսպես, փարիզեցիների ապստամբության արդյունքում 1793թ. մայիսի 31-ից մինչև հունիսի 2-ը Կոնվենտից հեռացվեցին նախկինում գերակա դերակատարում ունեցող ժիրոնդիստները, և իշխանությունն անցավ յակոբիններին, որոնց իշխանավարումը ընդունված է համարել հեղափոխության գագաթնակետը:

1793թ. հունիսի 24-ին յակոբինյան Կոնվենտը ընդունեց Ֆրանսիայի նոր՝ հանրապետական սահմանադրությունը, որով հռչակվում էին լայն ժողովրդավարական ազատություններ: Առաջին անգամ մտցվեց համընդհանուր ընտրական իրավունքը 21 տարեկանից բարձր տղամարդկանց համար: Ըստ սահմանադրության, իշխանության մարմինների համակարգում կենտրոնական տեղը հատկացվում էր խորհրդարանին՝ միապալատ Օրենսդիր կորպուսին, որի պատգամավորները պետք է ընտրվեին ուղղակի ընտրություններով մեկ տարի ժամկետով: Օրենսդիր կորպուսին իրավասություն վերապահվեց նաև ընտրել կառավարության (Գործադիր խորհրդի) 24 անդամներից բաղկացած կազմը այն թեկնածուների թվից, որոնք առաջադրվելու էին յուրաքանչյուր դեպարտամենտի ընտրիչների ժողովի կողմից: Այդ սահմանադրությունը ներկայացվեց ժողովրդի հաստատմանը և հավանության ար-

ժանացավ ձայների ճնշող մեծամասնությամբ: Սակայն, շարունակվող պատերազմի և երկրի ներսում ծայրաստիճան լարված իրադրության պայմաններում Կոնվենտը ստիպված էր հետաձգել այն գործողության մեջ դնելու գործը «մինչև հաշտություն կնքելը» և ինքը մնաց երկրի գլխավոր ղեկավար մարմինը:

Հանրապետության II տարվա թերմիդորի 9-ի³ (1794թ. հուլիսի 27-ի) հեղաշրջումից հետո, որի արդյունքում յակոբինականները հեռացվեցին իշխանությունից, «թերմիդորական» Կոնվենտը որոշում կայացրեց ընդունել Ֆրանսիայի նոր, թվով երրորդ սահմանադրությունը: Այն ընդունվեց հանրապետության III տարվա ֆրյուկտիդորի 5-ին (1795թ. օգոստոսի 22-ին): Երկրում պահպանվում էր կառավարման հանրապետական ձևը, սակայն քաղաքացիների իրավունքները, այդ թվում նաև՝ ընտրական, էապես սահմանափակվեցին: Վերականգնվեց գույքային ցենզը (այսինքն, համընդհանուր ընտրական իրավունքը չեղարկվեց), կրկին մտցվեց ընտրությունների երկաստիճան համակարգը (ընտրողների համար սահմանված ավելի բարձր ցենզով): Բարձրագույն օրենսդիր մարմինը (Օրենսդիր կորպուսը) դարձավ երկպալատ, այն կազմված էր Հինգհարյուրի խորհրդից և Ավագանուց: Օրենսդրական նախաձեռնությունը պատկանում էր Հինգհարյուրի խորհրդին, սակայն նրանց կողմից ընդունված օրենքների նախագծերը ուժի մեջ էին մտնում միայն Ավագանու հաստատումից հետո: Վերջինս նշանակում էր նաև գործադիր իշխանության բարձրագույն մարմին՝ Դիրեկտորիայի անդամներին, Հինգհարյուրի խորհրդի առաջադրված թեկնածուներից: Նման համակարգը պետք է թույլ տար խուսափել ծայրահեղություններից, որոնք նախկինում առաջանում էին ամբողջ իշխանությունը «Նորին Մեծություն Կոնվենտի» ձեռքում կենտրոնացնելու հետևանքով⁴:

III տարվա սահմանադրությունը վավերացվեց, սակայն դրա վրա հիմնված վարչակարգը, որը սովորաբար անվանում են Դիրեկտորիայի վարչակարգ, երկար չգոյատևեց: Այդպես էլ չհաջողվեց հասնել քաղաքական կայու-

³ Ֆրանսիայում 1792 թվից սկսած ներդրվեց նոր թվարկություն, իսկ 1793թ. ընդունվեց հանրապետական օրացույցը:

⁴ См. Саидов А. Х. Национальные парламенты мира: энцикл. Справ. М. Волтерс Клувер, 2005, 407-415 с.:

նության. սահմանադրությունը պարբերաբար խախտվում էր: VIII տարվա բրյունների 18-19-ին (1799թ. նոյեմբերի 9-ին) Փարիզում իրականացվեց ռազմական հեղաշրջում, որի արդյունքում իշխանությունն անցավ Ֆրանսիայի հանրապետության երեք կոնսուլներին, որոնցից մեկը հեղաշրջման գլխավոր դերակատար, գեներալ Նապոլեոն Բոնապարտն էր: Հետին թվով Հինգհարյուրի խորհրդի պատգամավորների մի մասի և Ավագանու կողմից ընդունվեցին դեկրետներ, որոնցով այդ փոփոխությունները ձևակերպվեցին իրավաբանորեն: Այդ պահից սկսած Ֆրանսիայում հաստատվեց Նապոլեոն Բոնապարտի անձնական իշխանության վարչակարգը, որին նախ սկսեցին կոչել առաջին կոնսուլ, իսկ հետո, 1804 թվականից արդեն նա ինքն իրեն հռչակեց կայսր: Նա միաժամանակ պահպանեց հեղափոխական շրջանի հիմնական ձեռքբերումները:

Հանրապետության VIII տարվա ֆրիմերի 22-ին (1799թ. դեկտեմբերի 13-ին) օրենսդրական հատուկ հանձնաժողովների կողմից հաստատվեց երկրի հերթական սահմանադրությունը, որը հետագայում արժանացավ նաև համաժողովրդական հավանության: Այն կտրուկ ընդլայնեց գործադիր իշխանության (առաջին հերթին, առաջին կոնսուլի) իրավասությունները և փաստորեն վերջինիս ենթակայության տակ դրեց օրենսդիր իշխանությունը, որը բաժանվեց չորս հաստատությունների միջև՝ *Պետական խորհրդի*, *Տրիբունալի*, *Օրենսդիր կորպուսի* և *Սենատի*, որոնք ընտրովի չէին չնայած որ Ֆրանսիայում ձևականորեն վերականգնվել էր համընդհանուր ընտրական իրավունքը: Այդ հաստատությունները պահպանվեցին նաև 1804 թվից հետո, թեկուզ և կայսրության դարաշրջանում դրանց նշանակությունը շարունակում էր նվազել:

Պատերազմները, որ Ֆրանսիան վարում էր հեղափոխության, իսկ հետո նաև կոնսուլության և կայսրության ժամանակաշրջանում, ոչ միայն պարզապես վերաձևեցին Եվրոպայի քարտեզը, այլև լրջագույն քաղաքական փոփոխություններ առաջ բերեցին բազմաթիվ եվրոպական երկրներում: Ինչ-որ տեղ դա ֆրանսիական օկուպացիայի հետևանք էր, մեկ այլ

տեղ, ընդհակառակը՝ նախաձեռնությունը բխում էր տեղի իշխանություններից, որոնք ձգտում էին թույլ չտալ, որ իրենց տարածքներում էլ հեղափոխություն տեղի ունենա, և/կամ բնակչությանը մոբիլիզացնում էին ֆրանսիացիների դեմ պատերազմում: Առաջին տարբերակը առկա էր հիմնականում Ֆրանսիայի հարևան երկրներում, առաջին հերթին՝ Ապենինյան թերակղզում, որտեղ 1796-1799թթ. Բոնապարտի առաջին արշավանքից հետո ստեղծվեցին այսպես կոչված դուստր (ավելի ճիշտ՝ «քույր») հանրապետություններ, որոնք ընդունեցին սահմանադրություններ՝ ընդօրինակելով III թվականի ֆրանսիական սահմանադրությունը: **Իտալիայի** պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեցին ընտրովի ներկայացուցչական հաստատություններ: Օրինակ, Ցիզալպինյան հանրապետության 1797թ. սահմանադրության համաձայն իշխանությունը երկրում պատկանում էր անուղղակի քվեարկությամբ ընտրվող *Մեծ խորհրդին* և *Ավագանուն*⁵: Երկրորդ տարբերակն առկա էր **Իսպանիայում**, որտեղ ֆրանսիական ներխուժման դեմ համառ պայքարի պայմաններում 1812թ. ընդունվեց այսպես կոչված Կադիսյան սահմանադրությունը, որով նախատեսվում էր անցում դեպի դուալիստական սահմանադրական միապետություն, որը պահպանել էր իր՝ «կորտեսներ» միջնադարյան անվանումը, ընդ որում, թագավորը իրավասու չէր լուծարել այն կամ փոփոխել իրավիրման ժամանակը): Այս սահմանադրությունն իր ժամանակից առաջ անցավ և շուտով չեղարկվեց բացարձակության կարգերը վերահաստատած Ֆերդինանտ VII թագավորի կողմից:

Եվրոպական պառլամենտարիզմի պատմության մեջ Նապոլեոնական պատերազմների ավարտից (1815թ.) մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը (1914թ.) ընկած ժամանակաշրջանը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Եթե այս ժամանակաշրջանի սկզբում խորհրդարաններ կային եվրոպական ընդամենը մի քանի պետություններում, ապա դրա ավարտին խորհրդարանները ամենուրեք դարձան կարևոր օղակ՝ պետական կառավարման մարմինների համակարգում և քաղաքական գործընթացի ակտիվ մասնակից:

⁵ Stju Comparative Balkan parliamentarism /Ed. By Lyubov Grigorova. Sofia, 1995, 110-118 p.:

Փաստորեն միակ երկիրը, որտեղ պառլամենտարիզմի զարգացումը ընթանում էր էվոլյուցիոն ճանապարհով, Մեծ Բրիտանիան էր, որտեղ ամբողջ XIX դարի ընթացքում մի քանի խորհրդարանական բարեփոխումներ իրականացվեցին: Առաջին բարեփոխման ընթացքում (1832թ.) վերացվեց խորհրդարանում տեղերի բաշխման միջնադարյան համակարգը և որոշ չափով իջեցվեց ընտրական ցենզը (չնայած այն, միևնույնն է, շարունակում էր մնալ շատ բարձր՝ ընտրություններին մասնակցում էր միայն ունևոր խավը): Արդյունքում, համայնքների պալատում էապես ամրապնդվեցին առևտրա-ձեռնարկատիրական շրջանակների դիրքերը, սակայն, լորդերի պալատը մնաց որպես հին հողային արիստոկրատիայի հենարան: 1867թ. անցկացվեց երկրորդ ռեֆորմը, որով էլ ավելի իջեցվեց ընտրական ցենզը, ինչի արդյունքում ընտրողների ընդհանուր քանակը մեծացավ մոտ երեք անգամ: Դրանից հետո խորհրդարանում հայտնվեցին արհմիությունները ներկայացնող առաջին աշխատավոր-պատգամավորները: Որպես երրորդ խորհրդարանական բարեփոխումը սովորաբար անվանվում են 1884-1885թթ. ընդունված օրենքները, որոնցով կանոնակարգվեց և հերթական անգամ իջեցվեց գույքային ցենզը և ներդրվեց երկրում ընտրատարածքների բաժանման նոր սկզբունք (այն հաշվով, որ յուրաքանչյուր 50-55 հազ. բնակչի կողմից ընտրվի 1 պատգամավոր): Ձայնի իրավունք ունեցող անձանց թիվը էապես աճեց, հասնելով մինչև 4,5 մլն. մարդու, սակայն դա դեռ հեռու էր համընդհանուր ընտրական իրավունք հասկացությունից:

Հարկ է առանձնացնել ևս մի քանի կարևոր փոփոխություն: Առաջին հերթին կրոնական սահմանափակումների աստիճանական վերացում էր՝ 1829թ. ընտրելու և ընտրվելու իրավունք ստացան կաթոլիկները, 1858թ. առաջին անգամ համայնքների պալատ թույլատրվեցին հրեաները, իսկ 1888-1891թթ. չեղարկվեց երդման պահանջը ոչ հավատացյալների համար: Բացի այդ, 1872թ. մտցվեց գաղտնի քվեարկության ինստիտուտը, իսկ 1889թ. օրենք ընդունվեց ընտրարշավների համար ծախսվող միջոցների վրա վերահսկողություն սահմանելու վերաբերյալ⁶:

XIX դարում տորիների և վիգերի ամորֆ քաղաքական միավորումների հենքի վրա ձևավորվում են ժամանակակից տիպի քաղաքական կուսակցությունները՝ պահպանողական և ազատական, որոնք հաջորդաբար միմյանց փոխարինում էին բարձրագույն իշխանության մարմիններում: Հենց նրանց ներկայացուցիչների կողմից էլ մշակվեցին խորհրդարանական խմբակցությունների աշխատանքի սկզբունքները՝ խորհրդարանական կարգապահություն, նրա առաջնորդի ղեկավար դերը և այլն: Մշակվեց նաև խորհրդարանական բանավեճերի մշակույթը:

Խորհրդարանական համակարգում կարևոր փոփոխություններ տեղի ունեցան Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: 1909-1910թթ. լիբերալների կառավարության և լորդերի պալատի միջև հակամարտություն բռնկվեց՝ ֆինանսների նախարար Լլոյդ Ջորջի առաջարկված «հեղափոխական բյուջեի» առիթով, որով նախատեսվում էր ռազմական ծախսերի հսկայական ավելացում և ծախսերի որոշակի ավելացում սոցիալական կարիքների համար: Թե՛ մեկը, թե՛ մյուսը նախատեսում էր իրականացնել խոշոր հողային սեփականության վրա հարկեր մտցնել, որոնց թվում քիչ չէին լորդերի պալատի անդամ արիստոկրատները, որոնք էլ հանդես եկան այդ բյուջեի դեմ: Այդժամ կառավարությունը նպատակադրեց սահմանափակել վերին պալատի իշխանությունը: Լլոյդ Ջորջը մեծաքանակ պայծառ ելույթներ ունեցավ, որոնցում այն «ջենտլմեններին, ովքեր իրենք չեն վաստակում իրենց հարստությունը» (խոսքը լորդերի մասին էր) նա հակադրում էր մնացած ողջ ժողովրդին, որը մշտապես աշխատում է (այդ թվում՝ աշխատավորներին և գործարարներին): Արդյունքում՝ բյուջեն մերժեց լորդերի պալատը, որից հետո 1911թ. ընդունվեց նոր ակտ խորհրդարանի մասին, որով էապես կրճատվեցին վերջինիս իրավասությունները, հատկապես բյուջեի ոլորտում: Այժմ համայնքների պալատի ընդունած, սակայն լորդերի պալատի կողմից հավանության չարժանացած ֆինանսական բիլլերը մեկ ամսվա ընթացքում պետք է ուղարկվեին անմիջապես միապետին՝ հաստատման: Թագա-

⁶ Տե՛ս **Garrigues J.** Histoire du Parlement du 1789 a nos jours. Paris: Armand Colin, 2007, 305-312 p.:

վորի հաստատմանն էին ուղարկվում նաև ֆինանսական հարցերի հետ կապ չունեցող այն բիլլեր, որոնք որոշակի ժամանակահատվածում երեք անգամ ընդունվել էին համայնքների պալատի կողմից, սակայն, երեք անգամն էլ մերժվել լորդերի պալատի կողմից: Արդյունքում լորդերի պալատի զսպիչ գործառույթը զգալիորեն թուլացավ, կրճատվեց նաև նրա դերը կուսակցաքաղաքական պայքարում:

Ֆրանսիայում պառլամենտարիզմի զարգացումը սերտորեն կապված էր հեղափոխական ցնցումների հետ, որոնք դեռ շարունակում էին այս երկրում XIX դարի ընթացքում: Ֆրանսիական մեծ հեղափոխության եզրափակիչ փուլը դարձած Նապոլեոնական պատերազմների ավարտից հետո երկրում վերականգնվեց միապետությունը: Սակայն Բուրբոնների միապետության վերահաստատումը, իհարկե, այլևս չէր կարող նշանակել լիակատար վերադարձ դեպի նախահեղափոխական կարգեր: Մասնավորապես, 1814թ. հունիսի 4-ին Լյուդովիկոս XVIII-ը իր հպատակներին նվիրեց Սահմանադրական խարտիան, որով Ֆրանսիայում ներդրվում էին սահմանադրամիապետական կառուցվածքի որոշ տարրեր: Այսպես, օրենսդիր իշխանությունը բաժանվեց թագավորի և երկու պալատների միջև՝ *Պերերի պալատի* և *Պատգամավորների պալատի* (այսինքն, ըստ էության, *երկպալատ խորհրդարանի*, չնայած այդ արտահայտությունն ինքը խարտիայում չէր օգտագործվում): Պերերի (վերին) պալատը նշանակվում էր թագավորի կողմից, (ընդ որում, պերությունը կարող էր լինել ցմահ կամ ժառանգական, իսկ Պատգամավորների պալատն ընտրում էր ժողովուրդը: Ձայնի իրավունք ունեին առնվազն 300 ֆրանկ ուղղակի հարկեր վճարած, 30 տարեկանից բարձր տղամարդիկ, իսկ պատգամավոր կարող էին ընտրվել առնվազն 1000 ֆրանկ ուղղակի հարկեր վճարած, 40-ից բարձր տղամարդիկ: Նման գների պատճառով քաղաքական կյանքում մասնակցելու հնարավորություն էին ստանում խիստ սահմանափակ թվով առավել ունևոր քաղաքացիները, հիմնականում հողատեր ազնվականները: Միաժամանակ, հենց Ռեստավրացիայի դարաշրջանում Ֆրանսիայում սկսեցին ձևավորվել պառլամենտարիզմի ավանդույթները՝ դրա ժամանակակից ընկալմամբ: Պատգամավոր-

ների պալատը, որում գերակշռում էր չափավոր ազատական ընդդիմությունը, որը ձգտում էր պահպանել և ամրապնդել իր դիրքերը պետական իշխանության համակարգում:

1830թ. հուլիսին Ֆրանսիայում տեղի ունեցավ թվով երկրորդ հեղափոխությունը, որի համար անմիջական առիթ ծառայեց Սահմանադրական խարտիայի հիմնական դրույթները խախտելու, օրինական ձևով ընտրված Պատգամավորների պալատը լուծարելու Կառլոս X թագավորի փորձը: Արդյունքում նա ստիպված եղավ հրաժարվել գահից, որը Պատգամավորների պալատի առաջարկությամբ անցավ Բուրբոնների դինաստիայի կրտսեր ճյուղի ներկայացուցիչ հերցոգ Լուի-Ֆիլիպ Օռլեանցուն: Պալատը վերանայեց Սահմանադրական խարտիայի մի շարք դրույթներ, և նոր խարտիայի վրա էլ 1830թ. օգոստոսի 9-ին երգվեց թագավորը:

Հուլիսյան հեղափոխության հետևանքը եղավ լիարժեք սահմանադրամիապետական վարչակարգի հաստատումը և պառլամենտարիզմի ամրապնդումը Ֆրանսիայում: Օրենսդիր իշխանությունը պատկանում էր թագավորին և երկու պալատներին, ընդ որում, վերջիններս օժտված էին օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Անգլիայի օրինակով ստորին պալատին իրավունք էր վերապահված ընդունել հարկերի վերաբերյալ օրենքներ: Գուքային և տարիքային ցենզերը որոշ չափով նվազեցվեցին, ինչի արդյունքում ընտրություններին մասնակցելու հնարավորություն բարձրագույն խավի հետ միասին ստացավ նաև միջին խավի մի մասը: Պատգամավորների պալատի ընտրություններն անցնում էին սուր մրցակցային պայքարում: Սակայն խորհրդարանական մեծամասնության հիման վրա կառավարության ձևավորումը Հուլիսյան միապետության օրոք այդպես էլ սովորույթ չդարձավ, չնայած որ գործադիր իշխանությունը ձևավորելիս հաշվի էր առնվում ուժերի հարաբերակցությունը Պատգամավորների պալատում և այնտեղ տիրող տրամադրությունները:

1840-ականների կեսերից Հուլիսյան միապետության վարչակարգը հայտնվեց ճգնաժամային փուլում, որն էլ իր հերթին հանգեցրեց նոր հեղափոխության: Այն սկսվեց 1848թ. փետրվարին, երբ տապալվեց միապետությունը և հո-

չակվեց հանրապետություն: Իշխանությունն իր ձեռքը վերցրած ժամանակավոր կառավարությունը արագ կարգով մի քանի արմատական բարեփոխումներ անցկացրեց՝ մարտի 4-ին Ֆրանսիայում մտցվեց համընդհանուր ընտրական իրավունք 21-ից բարձր տարիքի տղամարդկանց համար: Այդ ժամանակների եվրոպական երկրների համար դա աննախադեպ երևույթ էր: Ապրիլի 23-ին անցկացվեցին *Հիմնադիր ժողովի* ընտրություններ, որն իր առաջին իսկ աշխատանքային օրը ամրագրեց կառավարման հանրապետական ձևը:

Ոչ Հիմնադիր ժողովին, ոչ էլ նրա կողմից նշանակված Գործադիր հանձնաժողովին չհաջողվեց վերացնել ծայրագույն սոցիալական լարվածությունը, ինչն ի վերջո, հանգեցրեց Փարիզի հունիսյան ապստամբությանը: Այն ճնշելուց հետո 1848թ. աշնանը Հիմնադիր ժողովը ընդունեց երկրի նոր սահմանադրությունը, որում մի կողմից շարունակվում էին դեռ Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանից եկող ֆրանսիական սահմանադրական ավանդույթները, մյուս կողմից՝ օգտագործված էր ամերիկյան կոնստիտուցիոնալիզմի փորձը (որն այդ ժամանակաշրջանում համարվում էր առավել հաջողվածը):

1848թ. սահմանադրության մեջ հստակ ամրագրված էր իշխանությունների տարանջատման սկզբունքը: Օրենսդիր իշխանությունը պատկանում էր միապալատ խորհրդարանին՝ Օրենսդիր ժողովին, որի կազմում ընդգրկ-

ված 750 պատգամավորներն ընտրվում էին երեք տարի ժամկետով, համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա, որը տարածվում էր 21-ից բարձր տարիքի տղամարդկանց վրա: Պատգամավոր կարող էր ընտրվել 25 տարին լրացած ցանկացած քաղաքացի: Գործադիր իշխանությունը փոխանցվում էր նախագահին, որի իրավունքներն ու իրավասությունները շատ բանով նման էին ԱՄՆ նախագահի իրավունքներին⁷: Ըստ որում, Ֆրանսիայում նախագահը ընտրվում էր ուղղակիորեն: Ֆրանսիայի պատմության մեջ առաջին նախագահական ընտրությունները տեղի ունեցան 1848թ. դեկտեմբերի 10-ին: Շատերի համար անսպասելի համոզիչ հաղթանակ տարավ արքայազն Լուի-Նապոլեոն Բոնապարտը (Նապոլեոն կայսեր զարմիկը): Օրենսդիր ժողովի առաջին ընտրություններում (1849թ. մայիսի 13) առաջատարը այսպես կոչված Կարգուկանոնի կուսակցությունն էր՝ տարբեր ուղղվածության միապետականների պահպանողական խմբավորումը:

Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում երկար կյանք չունեցավ: Լուի-Նապոլեոն Բոնապարտը բացահայտորեն ձգտում էր դիկտատուրա հաստատել և խորհրդարանը չկարողացավ նրան դիմակայել՝ 1851թ. դեկտեմբերի 2-ին նախագահը լուծարեց Օրենսդիր ժողովը և ժողովրդին ուղղված իր Ուղերձում հայտարարեց քաղաքական համակարգի բարեփոխումների մասին: 1852թ.



⁷ Տե՛ս Carstairs A. A Short History of Electoral Systems in Western Europe. London: Routledge, 2013, 118-131 p.:

ԱԿ ԶԱՏՐՅԱՆ

Аспирант кафедры теории права и конституционного права
Российско-Армянский университет
Институт Права и Политики

ПОСТОЯННЫЕ КОМИССИИ ПАРЛАМЕНТА КАК ОСОБЫЕ СУБЪЕКТЫ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ

Сама функция парламентского контроля характерна практически для всех государств, не зависимо от формы правления, которая может повлиять лишь на объем этих полномочий, а основным предметом контроля является деятельность органов исполнительной власти. Контрольная функция законодательного органа, как и другие функции, вытекает из самой сущности Парламента¹. В частности, в данном органе представлены разнообразные социальные и территориальные интересы. Он работает, как правило, открыто, на виду у избирателей и находится в постоянном и более тесном (по сравнению с другими органами государственной власти) контакте с гражданами благодаря работе депутатов в избирательных округах, лоббизму и прочим формам взаимодействия с институтами гражданского общества. Таким образом, выполняя возложенные на него задачи представительства граждан, Парламент также осуществляет контроль от их имени.²

Парламентский контроль, среди все видов государственного контроля имеющих публично-правовой характер, основанного и одновременно обеспечивающего систему «сдержек и противовесов», определяется как одна из форм государственного контроля либо как функция парламента, которая носит в основном общий

политический и реже административный характер³. Именно поэтому при конституционном закреплении института парламентского контроля и определении круга субъектов его осуществления необходимо давать достаточно четкие определения, так как именно контроль, как обособленная форма управленческой деятельности, обеспечивает обратную связь⁴.

Следует учесть, что в Концепции конституционных изменений Респблики Армения определяла, что роль Парламента РА нуждается в повышении в соответствии с существующими требованиями, в целях продуктивного осуществления законодательной функции, контрольного назначения, а также формировании органов государственной власти и государственного управления. Однако реализации поставленных целей на конституционном уровне требует закрепления гарантий осуществления контрольной деятельности Парламента РА в полном объеме.⁵

В данном случаи, основная противовесная функция законодательной ветви власти в отношении исполнительной заключается именно в контроле. В частности, поэтому усиление контрольной деятельности Парламента в РА со стороны вышеупомянутой Концепции стало рассматриваться в качестве основной задачи, продуктивное решение которой заключается соз-

¹ См. например: Стенина В.К. Парламентский контроль и парламентское расследование в президентских и полупрезидентских республиках // Юридический мир, 2007, №4

² Автономов А.С. Процедуры парламентского контроля в Российской Федерации // Парламентские процедуры: проблемы России и зарубежный опыт : материалы науч. конф., г. Москва, 21-23 марта 2002 г. М. : Изд-во МГУ, 2003. С. 154.

³ Юридический словарь. М., 2000. Энциклопедический словарь. 2009. [http:// dic.academic.ru/dic.nsf/es/85072](http://dic.academic.ru/dic.nsf/es/85072)

⁴ Горшенев В. М., Шахов И. Б. Контроль как правовая форма деятельности. М., 1987. С.14

⁵ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջեր 25, 43-46:

дании эффективных правовых механизмов парламентского контроля, позволяющих “достаточно оперативно реагировать на вызывающие широкий общественный резонанс события”⁶.

Таким образом, полномочие парламентского контроля проистекает из самой сути разделения государственной власти на ветви, и в том числе из такого важного момента этого разделения, как признание верховенства за законодательной ветвью власти народовластия, что в свою очередь обязывает Парламент, участвуя в создании законов, не оставаться равнодушным к их исполнению и осуществлять контроль за их исполнением⁷. И хотя сам Парламент РА, как государственный орган законодательной ветви власти, на конституционном уровне получил должный статус, соответствующий парламентской форме правления, однако следует учесть, что ему не был предоставлен тот полноценный спектр механизмов реализации своих контрольных полномочий с учетом системы сдержек и противовесов.

Известно, что Парламент осуществляет контрольную деятельность не только непосредственно, но и через свои органы, что в свою очередь обусловлено тем обстоятельством, что осуществление законодательных и иных функций требует больше времени и ресурсов. Кроме того парламентский контроль охватывает значительно широкий круг деятельности исполнительной власти, следовательно в процессе формирования эффективной системы контроля Парламент ввиду такой необходимости должен обращаться также и к поддержке своих органов, среди которых особое место занимают постоянно действующие комиссии⁸. В составе последних включаются депутаты, имеющие соответствующую профессию или интерес к определенной

области, которые получают возможность более подробно рассматривать задачи соответствующей области. Кроме того, при участии соответствующих специалистов и экспертов постоянно действующих комиссий осуществляются более глубокое и всестороннее рассмотрение вопросов, при этом, обсуждения в комиссиях Парламента проводятся по большей части в неофициальном порядке, нежели на слушаниях Парламента в полном составе. Все эти обстоятельства создают благоприятную обстановку для осуществления парламентского контроля со стороны постоянно действующих комиссий Парламента в отношении деятельности исполнительной власти.

Таким образом, учитывая вышеуказанные обстоятельства в редакции от 2015 года Конституции Республики Армения, среди целей создания постоянно действующих комиссий Национального Собрания, впервые было предусмотрено также осуществление парламентского контроля, на что указывает часть 1 статьи 106 Конституции РА, в соответствии с которой “Национальное Собрание для предварительного обсуждения проектов законов, иных вопросов, входящих в его компетенцию, и представления заключений по ним в Национальное Собрание, а также для осуществления парламентского контроля создает постоянные комиссии”⁹.

Как видно, указанная конституционная норма ограничилась лишь закреплением полномочия парламентского контроля постоянных комиссий Парламента, не определив границы контроля, которые должны быть включены. В свою очередь, часть 1 статьи 10 конституционного закона Республики Армения “Регламент Национального Собрания Республики Армения”¹⁰ дословно воспроизводит содержание вышеуказанной статьи Конституции РА, и также не обращает внимания

⁶ См., напр.: Гранкин И. В. Основные признаки законодательных органов // Конституционное и муниципальное право. 2007. № 5.

⁷ Арутюнян Г.Г. Конституционная культура: уроки истории и вызовы времени. Переиздание с дополнениями. Ереван, “Нжар”, 2016, 203-204, стр.

⁸ См. например: Коврякова Е.В. Парламентский контроль в зарубежных странах (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2002, стр. 60 (https://new-dissert.ru/product_info.php?products_id=956189)

⁹ Конституция Республики Армения от 22.12.2015г.

¹⁰ В соответствии с частью 1 статьи 10 конституционный закон Республики Армения “Регламент Национального Собрания Республики Армения” постоянные комиссии создаются для предварительного рассмотрения проектов законов, других входящих в компетенцию Национального Собрания вопросов и представления по ним заключений в Национальное Собрание, а также для осуществления парламентского контроля.

на статус постоянных комиссий и круг вопросов парламентского контроля, входящих в его пределы.

Для пояснения обсуждаемого вопроса необходимо обратиться к некоторым положениям Конституции Республики Армения и конституционного закона “Регламента Национального Собрания Республики Армения”, лишь по итогам системного анализа которых можно будет сформировать определенное представление относительно статуса постоянных комиссий и пределов осуществления последними парламентского контроля.

Следует отметить, что в юридической литературе постоянные комиссии рассматриваются как субъекты парламентского контроля, а особый статус, обосновывая собственно составом, который является одним из важнейших его признаков¹¹. Тем не менее, в данном случае необходимо в первую очередь учитывать то место и роль, которые на законодательном уровне отведены постоянным комиссиям, и каковы законодательно определенные пределы их полномочий, как субъектов парламентского контроля.

Как было показано выше, соответствующая статья Конституции РА непосредственно не указывает, какой статус имеют постоянные комиссии НС, а определенный порядок их формирования изложенный в части 2 статьи 10 конституционного закона Республики Армения “Регламент Национального Собрания Республики Армения” лишь указывает, что постоянные комиссии создаются постановлением Национального Собрания, что, на первый взгляд, характеризует их как особые структурные элементы Парламента, и хотя последние имеют свое конституционное назначение, а также установленные конституционным законом определенные полномочия, все же не рассматриваются на конституционном уровне как государственные органы и, соответственно, не могут выступать как самостоятельные субъекты парламентского контроля.

В этом контексте особенно примечательны части 1 и 2 статьи 6 Конституции РА, которые указывают, что “государственные органы, органы местного самоуправления и должностные лица правомочны выполнять только те действия, на которые они уполномочены Конституцией или законами, а органы, предусмотренные Конституцией, на основе Конституции и законов и в целях обеспечения их осуществления могут быть уполномочены законом на принятие подзаконных нормативных правовых актов. Уполномочивающие нормы должны соответствовать принципу правовой определенности, а в соответствии с частью 2 статьи 106 места в постоянных комиссиях распределяются пропорционально числу депутатов, включенных во фракции. Должности председателей постоянных комиссий распределяются между фракциями пропорционально числу депутатов, включенных во фракции¹²”.

Анализируя и сопоставляя указанные положения, можно сделать вывод о том, что хотя постоянные комиссии условно не относятся к традиционным органам, предусмотренным Конституцией или государственным органам вообще, тем не менее, данное обстоятельство не умаляет их возможности выступать в качестве особых субъектов парламентского контроля, поскольку, во-первых, в их составе включаются должностные лица, уполномоченные непосредственно конституционным законом на осуществление парламентского контроля, и, во-вторых, возможность их создания не просто предусматривается на конституционном уровне, но и является полномочием предусмотренного Конституцией органа, основой конституционного статуса и одной из основных функций которого является осуществление парламентского контроля в отношении исполнительной власти.

Говоря о пределах осуществления конституционного контроля постоянными комиссиями Парламента РА следует отметить, что в соответствии с частью 2 статьи 10 конституционного закона Республики Армения “Регламент Нацио-

¹¹ См. например Лапатухина Е. С. Парламентский контроль как вид государственного контроля // Вестник РГГУ. 2012. № 8. С. 31-37, Молокаева О.Х.: Конституционно-правовой статус комитетов и комиссий палат Федерального Собрания Российской Федерации (Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук), М. 2015, стр 57-70

¹² Конституция Республики Армения от 22.12.2015г.

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹³ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹⁴ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹³ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹⁴ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹³ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹⁴ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹³ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

նախնական Սահմանադրական Դատարանի Կարգադրությունը»¹⁴ Սահմանադրական Դատարանի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրած որոշման հիմամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹³ Конституционный закон Республики Армения «Регламент Национального Собрания Республики Армения» от 16 декабря 2016г.

¹⁴ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 03.04.2002թ.) 36-րդ հոդվածի (4-րդ մաս) համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:

ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՄԱՅՐԳԱՄԱՔԱՅԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒՆԵՐԸ**

Մայրցամաքային Եվրոպայի ընդհանուր իրավունքի և իրավական մշակույթի հիմքերը ձևավորվել են միջնադարյան համալսարանական ավանդույթի հիման վրա, որի կայացման և զարգացման պատմության մեջ կարելի է գտել գլոսատորների և մեկնիչների (կոմենտատորներ) «դպրոցներով»¹ ներկայացված միջնադարյան շրջանը, իրավաբանական մտածողության (ռացիոնալիստական), մարդասիրական «դպրոցի» ծագմամբ նշված Նոր ժամանակը և շրջան, որն ընդգրկում է XIX հարյուրամյակի գիտական իրավագիտությունը, որի ժամանակ կոնտինենտալ իրավաբանական դոգմատիկական զարգանում էր «հասկացությունների իրավագիտության» ներկայացուցիչներ՝ գերմանական կոնցեպտուալիստների և իրավաբանների պատմական դպրոցի ջանքերով:

Դիֆերենցված իրավական համակարգի ձևավորման պատմական առաջին նախադեպ հանդիսանում է հռոմեական իրավունքը, որտեղ առաջին անգամ ծագել են որպես մտածողության հատուկ ոճի կրողներ մասնագետ իրավաբաններ, զարգացած իրավաբանական գործընթացներ և կառուցակարգեր, իրավաբանական մասնագիտական տեքստեր և կրթության կանոնավոր դասագրքեր: Որպես Հռոմում իրավունքի ինքնուրույն սոցմշակույթային ինստիտուտի ձևավորման պայման հանդիսացան բնական օբյեկտների հետ գործառնությունների պայմանական փոխարինիչները, հռոմեացիների հասարակական գիտակցության բարձր ինժեներական, կազմակերպչական բնույթը:

Այս առումով կարելի է պնդել, որ ռոմանագերմանական ընդհանուր իրավունքի «ծառը» աճում է հին հռոմեական իրավունքի հիմքերի վրա:

Առաջինը, հռոմեական և միջնադարյան իրավաբանական մշակույթների միջև գոյություն ունի տրամաբանական հաջորդականություն, երբ XI-XII դդ. սկսում է ձևավորվել մայրցամաքային ընդհանուր իրավունքի տեսականը, տեսական և գործնական առումով հիմք է հանդիսացել հռոմեական դասական իրավունքը:

Երկրորդը, մայրցամաքային Եվրոպական իրավական ավանդույթը հենված է հին հռոմեական և միջնադարյան իրավունքի դպրոցների բարձրակարգ հեղինակավոր իրավաբանների աշխատությունների վրա, որոնք ունեին թե տեսական և թե գործնական զգալի նշանակություն:

Երրորդը, չնայած, որ սկզբունքորեն տարբեր են հին հռոմեական և միջնադարյան իրավաբանների մտածելակերպերը, այդուհանդերձ նրանց կապող ընդհանրականը խորը իրավաբանական գիտելիքներն էին և իրավական մշակույթը, ինչպես նաև իրավաբան-մասնագետի պատասխանատվության գիտակցումը: Հատկանիշներ, որոնք անհրաժեշտ ու արդիական են բոլոր ժամանակների համար: Մասնավորապես, միջնադարյան իրավաբանների մտածողության աճը բնութագրվում է դեդուկտիվ կազմակերպմամբ, ելնում է իրավունքի ընդհանրացված նորմերում ամրագրված վերացական մոդելներից, գործում դատական պրակտիկայի հետ անմիջականորեն չկապված իրավաբանական հասկացություններով և սկզբունքներով, կողմնորոշվում իրավունքին որպես տրամաբանական համակարգ: Հռոմեացի իրավաբանների համար՝ իրավունքը, ամենից առաջ, հասարակական կյանքում ծագող կոնֆլիկտային իրավիճակների լուծման գործիք է, միջնադարյան գլոսատոր-իրավաբանների համար իրավունքն ընդհանրացված նորմատիվ նմուշ է,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Տե՛ս Муромцев С. А. «Рецепция римского права на западе» М., 1886

որն իրենից ներկայացնում է հիմքում ընդհանուր իրավական հասկացություններ և սկզբունքներ ունեցող տրամաբանական հաջորդական համակարգ²: Մայրցամաքային իրավական ընտանիքում գերակայող համոզմունքը, որ դրա մշակութային և հատուկ-իրավաբանական հիմք է հռոմեական իրավունքը, բազմադարյա դոգմատիկ ավանդույթի արդյունք, վերջինիս ներկայացուցիչները համարում էին, որ միայն ձևափոխում, մեկնաբանում և կանոնավորում են հռոմեական իրավաբանական ժառանգությունը, երբ իրականում այն ենթարկում էին սկզբունքային վերամշակման, ինչի արդյունքում փոխվում էր ոչ միայն դրա բովանդակությունը, այլ նաև կազմավորման ձևը, դրա բովանդակության յուրացման համար պահանջվող մտածելակերպը:³

«Աշխարհի պատկերը», որի շրջանակներում ձևավորվել է մայրցամաքային իրավունքը և իրավական մշակույթը, հանդիսանում է նաև միջնադարյան աստվածաբանությունը (Երանելի Ավգուստին, Թովմա Աքվինացի) և կանոնական իրավունքը: Միջնադարյան ինտելեկտուալ էլիտայի համար բնորոշ էր հեղինակային տեքստերի որպես *radio scripta*, գիտելիքի ավարտուն համակարգ, ճշմարիտը ընդգրկող անփոփոխ և համապարփակ ուղի ընկալումը: Իրավաբան-սխոլաստների համար իրավունքի ճշտությունը հաստատվում է դրա գրավոր տեքստային ձևով և բովանդակային ռացիոնալությամբ, իրական իրավունքի աշխարհը՝ սոցիալական իրականություն չէր, այլ իմացական մտքի, մարդուն Աստծուն մերձեցնող իրականությունը⁴: Սխոլաստիկ մշակույթի կրողների համար ճշմարիտ իրականությամբ օժտված էր ոչ թե փորձը, ոչ թե կոնկրետ էմպիրիկ երևույթը, այլ երևույթի էությունը սահմանող ռացիո-

նալիստական գաղափարը: Միջնադարյան դպրոցների իրավաբաններն անկասկած համոզված էին նրանում, որ Հուստինիանոսի կոդիֆիկացիայի ամբողջ տեքստը ներծծված է միասնական նպատակով, *ratio legis*, որը իրենք կոչված են բացահայտել և արտահայտել իրավաբանական բովանդակությունը մեկնաբանության և տրամաբանական համակարգման միջոցով⁵: Այդ իսկ պատճառով որպես տրամաբանական համակարգ իրավունքի ընկալումը բխում է «աշխարհի սխոլաստիկ պատկերից»:

Հետազոտական գործիքակազմը, որը կիրառվում էր գլոսատորների դպրոցի կողմից *Corpus Luris Civilis* ուսումնասիրության համար, համապատասխանում էր սխոլաստիկ մշակութային կանոններին: Սկզբում Հուստինիանոսի օրենքների մտքի ընկալման համար կիրառվում էր օրինական էկզեգեզա⁶ (մեկնաբանություն), հետագայում՝ քննադատական էկզեգեզա, որոնք հնարավորություն էին տալիս ներառել գրավոր տեքստերը միջնադարյան ինտելեկտուալ էլիտայի հոգևոր «հորիզոնում»⁷, ձևավորել իրավաբանական նյութի տերմինաբանական միասնությունը, իրականացնել նյութի առարկայական համակարգում, ստեղծել իրավական ավանդույթի զարգացմանը ծառայող դոկտրինային տեքստեր⁸: Գլոսատորների կողմից հունական և հռոմեական ստոիկներով ընկալված դիալեկտիկ մեթոդը հնարավորություն էր ընձեռում ստեղծել իրավաբանական դոգմայի մտովի միասնություն վերացական հասկացությունների ձևավորմամբ, տրամաբանական շարքերում իրավաբանական հասկացությունների միավորմամբ, հասկացությունների հարակից դասակարգումների կառուցմամբ, ինչը Հուստինիանոսյան ձևավորումներում հիմ-

² Տե՛ս Բերման Գ. Ժ. *Западная традиция права: эпоха формирования.* М., 1998. С. 152, Полдников Д. Ю. *Договорные теории глоссаторов.* М., 2008, С. 65, Честов И.Л. *История политических и правовых учений: теоретико-методологическое введение.* СПб., 2009. стр. 146

³ Տե՛ս Муромцев С. *Рецепция римского права на западе* М., 1886, стр 23-24

⁴ Տե՛ս Честов И.Л. *Актуальные проблемы теории государства и права. Эпистемология государства и права.* Учебное пособие. СПб. 2004, стр. 32-33.

⁵ Տե՛ս Моддерман В. *Рецепция римского права.* СПб. 1888, С. 23, Томсинов Б.А. *Рецепция права // Общая теория государства и права. Академический курс в 3 т. Отв. ред. М.Н. Марченко. Т. 2. М. 2001. стр. 310*

⁶ Տե՛ս Иоффе О.С. 1) *Цивилистическая доктрина феодализма // О.С. Иоффе Избранные труды по гражданскому праву.* М. 2003 стр. 48. 2) *Идеология права// О.С. Иоффе Избранные труды. В 4 томах. Том IV.* СПб, 2010. стр. 313.

⁷ Տե՛ս Муромцев С.А. *на Западе.* М. 1886. стр. 27

⁸ Տե՛ս Пухта Г.Ф. *Курс римского права.* М. 1874. Том I стр. 22

նականում հնարավորություն էր ընձեռում համաձայնեցնել հակասությունները և հաստատել միջնադարյան իրավաբաններին այն մտքում, որ Corpus Iuris Irbենից ներկայացնում է ավարտուն կուռ տրամաբանական համակարգ⁹:

XIII հարյուրամյակի կեսերին գլոսատորների փոխարինած կոմենտատորների (մեկնիչներ) դպրոցն իրավաբանական դոգմատիկայում զարգացնում է ինչպես էկզեգետիկ, այնպես նաև համակարգված գործունեությունը: Կոմենտատորները ձևավորում են իրավաբանական տեքստերի ուսումնասիրության «իտալական մեթոդը», ինչը հնարավորություն է տալիս առավել դետալային վերլուծել գլոսացված դրույթները, պատճառների արհեստոտեյան կատեգորիաների միջոցով համեմատել հասկացությունները, միավորող դրույթների տարբերակման, ընդլայնման և սահմանազատման տեխնիկաների միջոցով հարթեցնել հակասությունները¹⁰: Սխոլաստիկ դիալեկտիկայի միջոցները և եղանակները հասնում են սեփական զարգացման ծաղկունքին, վերածվում իրավագիտական գիտելիքի հոմանիշի: Կոմենտատորները գլոսատորների աշխատություններում զատում էին «հիմնական հատվածները», որոնց ընդհանրացված միտքը հնարավորություն էր ընձեռում ձևավորել համապարփակ և անփոփոխ բնական-իրավական հիմքերով ստեղծված հասարակական ելակետային սկզբունքներ (մաքսիմումներ): Իրավական մաքսիմումների վերաբերյալ նման պատկերացումները հիմք են տալիս դրանք դիտարկել որպես իրավական գիտելիքի ճշտության (լեգիտիմության) չափորոշիչ, ինչն էլ հնարավորություն է տալիս մաքսիմումներից դեդուկտիվ զատել նոր իրավահասկացություններ¹¹: Այսպիսով, ունի-

վերսալների ճշտության վերաբերյալ սխոլաստիկ պատկերացումների գերակայման հիման վրա և ստիկների դիալեկտիկայի միջոցով կոմենտատորներն էական ձևով վերամշակում են հռոմեաբյուզանդական իրավաբանական նյութը, ձևավորում այն որպես նոր իրավական դրույթներ ծնող իրավունքի սկզբունքներին և ընդհանուր հասկացություններին հենված ներքին կոգերենտ դեդուկտիվ համակարգ¹²: Կոմենտատորների կողմից իրավական նյութի արդյունավետ դեդուկցիոնացումը հանդիսացավ նրա պատճառ, որ XIX հարյուրամյակի երկրորդ կեսում նրանց սկսեցին համարել կոնստենտալ իրավաբանական գիտության հիմնադիրներ¹³: Բացի դրանից, սեփական բարձր սոցիալական կարգավիճակի արդյունքում կոմենտատորները քաղաքական իշխանության ներկայացուցիչների խորհրդականների պոստերի զբաղեցմամբ սկսում են կառուցվող դոգմատիկայի միջոցով «փորձագիտական եզրակացությունների» տրամադրմամբ, փաստացի jus publice respondendi ստացմամբ նորմավորել իրավաբանական գործնականը¹⁴:

Միջնադարյան դոգմատիկ իրավագիտության ռացիոնալ հիմք հանդիսացավ ստիկների դիալեկտիկան, ինչը հնարավորություն ընձեռեց ձևավորել դատողությունների առավել ընդհանուր հիմքեր և դրանց միջոցով համաձայնեցնել հռոմեացի իրավաբանների սենտենցիաների (ուսուցումներ) միջև հակասություններ՝ լրացնելով սկզբնաղբյուրների «թվացյալ» բացերը: Սխոլաստիկան սովորեցրեց գլոսատորներին և կոմենտատորներին հավատալ իրավական տեքստերի ռացիոնալությանը և միասնության ճշտությանը, իսկ միջնադարյան դիալեկտիկան ստիկների ոճային մեկնաբա-

⁹ Տե՛ս Բերման Գ. Դժ. Սոց. սոց. ժ. 127, Սոլոմոնով Դ.Յ. Սոց. սոց. ժ. 65, Չեստով Ի.Լ. Ակտուալնե փրոբլեմե տեորի ցոսուդարստվա և փրա. ժ. 35.

¹⁰ Տե՛ս Շերշենևիչ Գ. Փ. Իստորիա փիլոսոփիա փրա ՏՓԵ. 2001. §18,

¹¹ Տե՛ս Մյուրոմցև Տ.Ա. Օչերկի օբշեյ տեորի ցրաժդանսկոցո փրա // Տ. Ա. Մյուրոմցև Իզբրաննե տրուդե փո Րիմսկոմու և ցրաժդանսկոմու փրա. Մ. 2004. ժ. 232, Սոկրովսկի Ի.Ա. Եստեստենո փրաւոյե տեչենիա վ Իստորիա ցրաժդանսկոցո փրա. ՏՓԵ. 1909, ժ.17, Դոժդև Դ.Յ. Րիմսկոյե ժաստոյե փրա. Սոց. սոց. ժ. 15

¹² Տե՛ս Մյուրոմցև Տ.Ա. Օչերկի օբշեյ տեորի ցրաժդանսկոցո փրա, ժ. 239

¹³ Landseberg E. Die Clossse des Accurius and Ihre Lehre Vom Eigenthum Leipzig. 1883. S. 65-66. Kaufmann G. Die Geschichte der deutschen Universitäten. Bd. I. Stuttgart, 1888. p. 78, Enigelmann W. Die Schuldlehe=re der Postglossatoren und ihre Fortentwicklung. Leipzig, 1895. S.1, Sohm R. Institutiones des rom. Rechts. Aufl. 1903. p. 145-150

¹⁴ Տե՛ս Սոլոմոնով Գ.Փ. Նշվ. աշխ. էջ 9, Սոլոմոնով Բ. Նշվ. աշխ. էջ 24-25, Սոկրովսկի Ի.Ա. Իստորիա Րիմսկոցո փրա. ՏՓԵ. 1999. ժ. 258, Օոփֆե Օ.Տ. Ըիվիլիստիկեսկայա Դոկտրինա փեոդալիզմա. Տ. 48, Cappelletti M., Merryman J.H., Perillo J.M. The Italian Legal System. Stanford, 1967 էջ 37

նությամբ համոզում է սկզբնաղբյուրների բացարձակ ճշտության մեջ, վերջիններս սկսեցին հանդես գալ որպես եվրոպական ընդհանուր իրավունքի և իրավական մշակույթի հիմնային կետեր: Իրավական տեքստի տրամաբանական մշակումը հանգեցրեց *doctores juris* ընդհանուր հասարակական սկզբունքների և հանրային իրավունքի նորմերի ձևավորմանը, վերջիններս մինչ այսօր հանդիսանում են ռոմանագերմանական իրավական ընտանիքի «այցեքարտ»:

Գլոսատորների և կոմենտատորների դպրոցները հիմնեցին մայրցամաքային իրավաբանական դոգմատիկայի հիմքը. հաստատեցին դոգմատիկ հետազոտությունների օբյեկտի սահմանները, սահմանեցին դրա գոյաբանական և իմացաբանական առումները, ձևավորեցին իրավագիտության հատուկ լեզուն, ուսուցանեցին հեղինակային տեքստին իրավաբանների համակարգային վերաբերմունքը, մասնագիտական իրավագիտությունում ձևավորեցին և արմատավորեցին իրավունքի ընդհանուր սկզբունքների վերաբերյալ պատկերացումներ, հռոմեական իրավունքի միջոցով որպես «ընդհանուր իրավունք» (*jus commune*) հաստատեցին իրավագիտության գաղափարական միասնությունը: Միջնադարյան իրավաբանները (գլոսատորները, մեկնիչները) սահմանեցին Արևմուտքում իրավագիտության բնույթը, նպաստեցին նրան, որ իրավունքը ձեռք բերեց միասնական մասնագիտական տերմինաբանություն և մեթոդ, ձևավորվեցին «ճշմարիտ օրենքների» գիտելիքով տիրապետող գիտական-իրավաբանների հատուկ դաս, ինչը ևս իրավագիտությանը համապարփակություն էր հաղորդում, իսկ իրավական դոկտրինաները քննարկվում և գնահատվում էին ընդհանուր ճշմարտությունների լույսով, այլ ոչ որպես արվեստ կամ միջոց¹⁵:

XVI հարյուրամյակում իրավաբանների նոր մարդասիրական դպրոցի ձևավորումը պայմանավորված էր մի շարք պատճառներով: Առա-

ջին, Վերածննդի դարաշրջանի ընդհանուր ինտելեկտուալ մթնոլորտն իրավագիտություն ներածեց որպես Հռոմի հոգևոր մշակույթի պատմական զարգացող հատված կազմող՝ հռոմեական իրավունքի վերաբերյալ պատկերացումները, ինչն էլ հանգեցրեց նրա գիտակցմանը, որ միջնադարյան իրավագիտության կիրառած ոչ ամբողջ իրավական նյութն ունի հռոմեական մշակույթի համար աուտենտիկ բնույթ¹⁶: Երկրորդ, իտալական մեթոդի վերլուծական եղանակները հանգեցնում էին դոկտրիալ գլոսների միմյանց հետ բազմաթիվ անհամաձայնությունների ծագման, ինչն էլ բացասական էր արտահայտվում իրավաբանական պրակտիկայի վրա և էական հեռացնում ակադեմիական ու պրակտիկ գործունեությունը միմյանցից: Երրորդ, կոմենտատորական դոկտրինայի բազմաթիվ դրույթներ չէին համապատասխանում XVI հարյուրամյակի հասարակական իրավագիտակցությանը, *doctores juris* արհեստական «դիալեկտիկ ստեղծագործումը» ծնեց տարբեր սոցիալական խմբերի սուր և աճող քննադատություն, ինչն էլ պահանջեց իրավագիտության մեթոդի փոփոխություն: Հումանիստական դպրոցի իրավաբանները մայրցամաքային եվրոպական իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ իրավունքը դիտարկեցին պատմական և մշակութային համատեքստում, սկսեցին դիտարկել իրավունքը որպես սոցիալ-մշակութային ինստիտուտ, իսկ նրանց գործունեության մեջ նախահուստիանային շրջանի իրավական աղբյուրները և անտիկ գրական տեքստերը վերածվեցին վերակառուցվող մշակույթի իրական պատմական հոգու բացահայտմանը կոչված գործիքների: Հումանիստ-իրավաբանները ձևավորում էին դոգմատիկ ավանդույթների պատմական քննադատությանը հենված հետազոտման «ֆրանսիական մեթոդը»՝ չընկալելով սխոլաստիկ հակաթեզերը և մեթոդաբանական հիմունքները որպես անբեկանելիություն¹⁷: Հետազոտման նման մեթոդական դրույթի արդյունքում XVI

¹⁵ Shtu Берман Г. Дж. Западная традиция права. стр. 161-163, Скакун О.Ф. Общее сравнительное правоведение. Академический курс. Киев, 2008, стр. 78-79.

¹⁶ Shtu Стоянов А.Н. Методы разработки положительного права и общественного значения юристов от глоссаров до конца XVII столетия. Харьков, 1862. стр.17, 20-21. Покровский И. А. Естественно-правовые течения в истории гражданского права. стр. 24.

¹⁷ Shtu Коркунов Н.М. История философии. М, 2010. стр. 102.

հարյուրամյակի իրավաբանությունում ստեղծվում են իրավաբանական դոգմատիկայի շարադրման առավել ազատ համակարգեր, որոնք կառուցվում են ոչ թե ըստ Դիգեստի օրենքի, այլ ըստ առարկայի¹⁸: Միևնույն ժամանակ բազմաթիվ հումանիստ-իրավաբանների մոտ իրավունքի դոգմայի հասկացությունների հետ քննադատական էկզեգեզան, տեսակային դասակարգումները, դիալեկտիկ գործառնությունները մնում են որպես դոգմատիկ հետազոտությունների առաջատար տեխնիկաներ: Ի շնորհիվ պատմական դրույթի իրավաբանների հումանիստական դպրոցը ձևավորեց «իրավունքի հնության» առարկան, իրավագիտությանը համադրեց իրավունքի «արտաքին պատմությունը», սակայն չկարողացավ սկզբունքորեն փոխել դոգմատիկ իրավագիտության գործիքակազմը և հիմքերը¹⁹:

Որպես Նոր ժամանակների բնագիտությամբ կատարված առաջին գիտական հեղափոխության արդյունք դրա իմացաբանական գաղափարները սկսվեցին համապարփակ կերպով ընկալվել XVII հարյուրամյակի իրավագիտության գիտնականների կողմից: Յուսնատուրալիստները (բնահրավագետները) մերժում էին դոգմատիկ իրավագիտության հեղինակային տեքստերը և կենտրոնացնում սեփական ուշադրությունը ոչ թե իրավունքի վերաբերյալ դոգմատիկ պատկերացումների, այլ իրավունքի երևույթի վրա, օբյեկտիվ գոյություն ունեցող, համապարփակ և անփոփոխ «ըստ բնույթի», ինչի արդյունքում XVII- XVIII դդ. երկրորդ կեսին իրավագիտությունը փաստացի բաժանվեց երկու ճամբարների՝ իրավական-դոգմատիկ (պոզիտիվ դպրոց) և փիլիսոփայական-իրավական (բնագիտաիրավական դպրոց)²⁰: Բնագիտական իրավունքի դպրոցը՝ դասական գիտական ռացիոնալության գաղափարներին լիարժեք համապատասխանությամբ, պայքարում էր իրավագիտության «մաթեմատիկացման», իրավաբանների հետազոտական գործունեության «տեխնոլոգիկացման», դեդուկ-

տիվ-ցուցադրական մեթոդի կիրառության համար: Աքսիոմա, ամենաակնհայտ ճշմարտություն, որից ելնում էր դեդուկտիվ-ցուցադրական մեթոդը, հանդիսանում էր ապացուցում չպահանջող և նույնիսկ չապացուցվող տարրական հասկացության սահմանումը: Հետագայում նման պարզ ակսիոմատիկ դատողություններից ձևավորվեցին մի շարք եզրահանգումներ (դեդուկցիաներ), որոնցից յուրաքանչյուրը ենթակա է հատուկ ապացուցման: Նման կերպ բնահրավագետների պատկերացմամբ կառուցվում էր սուբյեկտիվ կարծիքներին, իրավաբան-դոգմատիկների «գրավոր իրավունքին» հակադրվող «ճշմարտության անթերի ճշտության» նրբագեղ համակարգը: Միևնույն ժամանակ իրավունքի հետազոտություններում բնահրավագետները՝ մի շարք օբյեկտիվ պատճառների ուժով, չկարողացան բնագիտական դեդուկտիվ-ցուցադրական մեթոդը հաջորդական ներածել իրավագիտության մեջ²¹:

Չնայած, որ բնահրավական ռացիոնալիզմը մեկ ու կես դար «կիսեց» մայրցամաքային իրավական ավանդույթի իրավագիտությունը և չկարողացավ մշակել նոր իրավական հասկացություններ, այն իրավագետ-գիտնականներին առաջին անգամ տրամադրեց հաջորդական կիրառվող մեթոդի արժեքի հասկացությունը, հաստատեց գրավոր օրենքի տառի նկատմամբ ռացիոնալ հիմնավորված սկզբունքների առաջնությունը, ինչը հետագայում դոգմատիկ իրավագիտությանը հնարավորություն ընձեռեց ազատվել բազմաթիվ մահացած կառուցվածքներից և հասկացություններից: Ձևավորելով իրավունքի սպեկուլյատիվ կառուցված համակարգերը՝ բնահրավագետները ստեղծում էին մտածողական մոդելներ՝ պանդեկտիստների գիտակցված կառուցված, ավարտական համակարգերի նախատիպերը: Իրավագիտության մեջ մաթեմատիկական մեթոդի էքստրապոլացումը խիստ կանոնավորեց իրավական միտքը, իրավաբաններին ուսանեց մեթոդի նկատմամբ նորմատիվ և ռեֆլեքսային վերաբեր-

¹⁸ Shtu Berman H. J. Law and Revolution II. The Impact of the Protestant Reformations on the Western Legal Tradition. L., 2003, p. 116

¹⁹ Shtu Стоянов А. X. նշվ. աշխ. էջ 265

²⁰ Shtu Тарасов Н.Н. Методологические проблемы юридической науки. Екатеринбург, 2001. стр. 114

²¹ Shtu Алексеев Н.Н. Очерки по общей теории государства. Основные предпосылки и гипотезы государственной науки. М., 2008. стр. 82, Коркунов Н.М. История философии права. Пособие к лекциям. СПб, 1915. С. 166.

մունք, դատողությունների հիմքերի իմաստավորման և յուրաքանչյուր դեղուկտիվ մոտեցման ապացուցում: Բացի դրանից, հատկապես բնագիտաիրավական դպրոցի իրավաբաններն առաջինն են արդիականացրել իրավունքի քաղաքականության խնդրայնությունը, ձևավորել իրավաբանական հասարակության գիտակցված վերաբերմունքը իրավական կարգավորման նպատակների նկատմամբ, ինչով էլ հիմնադրեցին XIX հարյուրամյակում Գերմանիայում և Ֆրանսիայում իրավունքի համակարգերի (կոդիֆիկացիաներ) «ուսուցման», իրավունքի որպես նոր սոցիալական իրականության կառուցման հզոր գործիքի ընկալման հիմքերը²²:

XIX դ. սկզբի փիլիսոփայական իդեալիզմը, ամենից առաջ ներկայացված Ֆ. Շելինգի ուսուցմամբ, սահմանելով աշխարհաստեղծումը որպես օրգանական միասնություն, որում մետաֆիզիկական գաղափարն արտահայտվում է պոզիտիվ երևույթների միջոցով, հնարավորություն տվեց բացատրել բնագիտաիրավական դպրոցի իրավագիտական ռացիոնալիզմը դրան նախորդած պոզիտիվ իրավագիտության դոգմատիկ ավանդույթների հետ համատեղ: Փիլիսոփայական իդեալիզմը բուժում էր գիտնականներին, այն ոչ միայն լեգիտիմացրեց պոզիտիվ-իրավական իրականությունը և պոզիտիվ իրավագիտությունը, այլ նաև լրջորեն խթանեց իրավաբաններին գտնել իր հետևում ծառայած և իրեն պայմանավորած հոգևոր սկզբնաղբյուրները: Հռոմեական իրավունքի դոգման իրավաչափ չափանիշ հանդիսացավ իրավաբանների հետագա սերունդների համար, դարձավ իրավունքի այն մտահանգումային հիմք, որը վերջիններս ձգտում են վերակառուցել և արտահայտել դոկտրինալ գիտելիքի ավարտուն և կոգնիտիվ համակարգի ձևով:

Փիլիսոփայական «առաջին» պոզիտիվիզմը ևս խթանել է մայրցամաքային եվրոպական

իրավաբանության դոգմատիկան: Առաջին, պոզիտիվ երևույթների հետազոտության սեփական դրույթով, գիտության առարկայից մետաֆիզիկական հասկացությունների բացառմամբ իրավաբանների աչքերում փիլիսոփայական պոզիտիվիզմը լեգիտիմացրել է ոչ թե լուսավորման սպեկուլյացիաներին, այլ իրավունքի աղբյուրների, դոկտրինալ տեքստերի հետազոտությանը հենված դոգմատիկ գործունեությունը²³: Երկրորդ, փիլիսոփայական պոզիտիվիզմը իրավաբան-գիտնականներին նոր ուժով ընկնեց գիտության մեջ. իրավաբանական դոգմատիկան, սոցիոլոգիային հետևելով, առաջադրում է իրավունքի առաջընթաց զարգացման օրինաչափությունների²⁴, իրավաբանական երևույթների օրենքների բացահայտման նպատակներ, ինչն էլ կհանդիսանա ոչ միայն «հասկացությունների իրավագիտության», այլև իրավունքի ընդհանուր տեսության ձևավորման նախադրյալ:

Մայրցամաքային իրավաբանական դոգմատիկայի զարգացման ժամանակակից մակարդակը սկսում է XIX հարյուրամյակի 10-40-րդ թթ. իրավունքի գերմանական պատմական դպրոցից, քանի որ հատկապես «պատմաբանները» ձևակերպել են ժամանակակից մասնավոր իրավունքի դոգման, իրականացրել գլոսատորական հռոմեական իրավունքի հաջորդական պատմական վերակառուցում: Իրավաբանների պատմական դպրոցի մեթոդաբանական դրույթների հիմքում ընկած է փիլիսոփայական իդեալիզմը, այդ իսկ պատճառով Ֆ. Կ. Սավինին և նրա իրավահաջորդներն առաջադրում են իրական հռոմեական իրավունքի «մաքրման», աուտենտիկ տեքստերից իրավունքի նախնական գաղափարի դուրս բերման և որպես ավարտուն տրամաբանական համակարգ հռոմեական իրավունքի դոգմայի վերակառուցման խնդիրներ²⁵: Մետաֆիզիկական գաղափարը, տեղակայված իրավունքի անբեկանելի զարգացման հիմքում, գտնվեց «ժողովրդի հո-

²² Տե՛ս Покровский И. А. 1) Естественно-правовая течения в истории гражданского права. стр. 31, 2) История римского права. стр. 266, Давид Р., Жозеффе-Спинозы К Основные правовые системы современности. М. 2009, стр. 46
²³ Տե՛ս Алексеев Н.Н. Основы философии права. СПб. 1999, стр. 20, Туманов В. А. Буржуазная правовая идеология. К критике учений о праве // В.А. Туманов Избранное. М., 2010. стр. 30
²⁴ Տե՛ս Пахман С. В. О современном движении в науке права. СПб. 1882
²⁵ Տե՛ս Начаев В.М. Пандекты в римском праве// Энциклопедический словарь Ф. А. Брокгауза и И.А. Ефрона (hett://dic.academic.ru/dic.nsf/brokgauz_efron/137473).

գով»: Հռոմեական իրավունքի դոգմատիկ ավանդույթին համապատասխան ընդունվեց համընդհանուր նմուշի որակով, ինչն էլ անտեսանելի որդեգրվեց գերմանական ազգության ոգով²⁶: «Պատմաբանների» կողմից իրավունքի ընկալման օբյեկտիվիզմը կայանում է այն համոզվածության մեջ, որ դրանք միայն վերակառուցվում են սեփական անխուսափելիության մեջ, ինչպես սերմից ծառի, իրավունքի օբյեկտիվ և անհետադարձելի հասունացման սպիրիտուալիստիկ գործընթացը²⁷: XIX դ. 40-ական թթ. իրավաբանների պատմական դպրոցը փոփոխում է «մաքուր» հռոմեական իրավունքի պատմական վերակառուցման դրույթը դոգմատիկ իրավագիտության հասկացությունների տրամաբանական-դոգմատիկ համակարգի կառուցմամբ: Իրավունքի միասնական դոգ-

մայի ձևավորման և համակարգման խնդիրը, առաջադրված Ֆ.Կ. Սավինի կողմից, հետազոտություններում շեշտադրությունը տեղափոխեց պատմական մեթոդի միջոցով բացահայտված հռոմեական իրավական նյութի արդյունավետ տրամաբանական զարգացմանը: Վերջնական արդյունքում, պատմական դպրոցն աստիճանական անցնում է պանդեկտիկ դպրոցի, վերջինիս շրջանակներում հիմնական շեշտադրությունը կատարվում է ոչ թե «մաքուր» հռոմեական իրավունքի պատմական վերակառուցմանը, այլ իրավաբանական հասկացությունների տրամաբանական ավարտուն համակարգի ստեղծմանը, որն էլ կայուն նախադրյալներ ստեղծեց ժամանակակից մայրցամաքային եվրոպական իրավունքի իրավաբանական եզրաբանության զարգացման համար:



²⁶ Տէս Աннерс. Э. История европейского права. М. 1996, стр. 300.

²⁷ Տէս Муромцев С. А. К учению об образовании гражданского права// С.А. Муромцев. Избранные труды по римскому праву и гражданскому праву. М. 2004, стр. 426.

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
Արևմտյան մաքսատուն-վարչության մաքսային տեսուչ-իրավաբան

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ» ԵԶՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Գիտագործական չափանիշներով առանցքային նշանակություն ունեցող եզրույթների բնորոշումը ձեռք է բերում արդիական նշանակություն, երբ ոչ միայն պարզապես առկա են շփոթի տեղիք տվող տարամեկնաբանություններ, այլև դրանց ոչ լիարժեք բնորոշումները անհարկի ունենում են իրավական կարգավորման և կիրառական հարթությամբ բացասական հետևանքներ: Նախ, այս տեսանկյունից է «վարչական ակտ» եզրույթի բնորոշումը ներկայումս ձեռք բերել արդիական գիտագործական նշանակություն: Նշված եզրույթի բնորոշման, մասնավորապես վերջինիս բովանդակության բացահայտման արդյունքներով է պայմանավորված ոչ միայն վարչական ակտերի շրջանակին, այլև վարչարարության առանձնահատկությունների սահմանների կանխորոշմանը, վարչական ակտերի բողոքարկմանն ու նմանաբնույթ այլ հարցադրումների պատասխանը:

Մեր համոզմամբ, քննարկվող հարցադրումներին առնչվող խնդիրների կտրվածքով ներկայումս օրենսդրությունը ձևավորվել և ընթանում է միջազգային իրավական չափանիշներին ոչ համահունչ վեկտորով, ինչն էլ հանգեցրել է վարչական վարույթի և վարչարարության մի շարք հիմնադրույթների անհամարժեք ընկալմանն ու կիրառմանը, ինչպես նաև վարչարարության ոլորտում մարդու իրավունքների երաշխավորվածության խաթարմանը:

«Վարչական ակտ» եզրույթը համեմատատաբար նոր է հայրենական իրավական համակարգում և, ըստ էության, ներկայումս համարվում է դեռևս բավարար խորությամբ չուսումնասիրված, իսկ վերջինս ավադաբար տրվող բնորոշումները չեն համապատասխանում վար-

չական ակտի բնորոշման միջազգային չափանիշներին: Վերջինս իր օրենսդրական բնորոշումը ստացավ և շրջանառության մեջ դրվեց «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի¹ ընդունմամբ, որը վարչարարության համակարգը մեկ միասնական իրավական ակտով կարգավորելու առաջին փորձն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018թ. մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքում² տրված է անհատական իրավական ակտի բնորոշումը, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ անհատական իրավական ակտը նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտն է, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային մեկնաբանությունից ելնելով և հիմք ընդունելով ներպետական օրենսդրությամբ վարչական ակտին տրված սահմանումը՝ կարող

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2004/18(317), 31.03.2004թ., ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ.:
² Տե՛ս ՀՀՊՏ 2018/23(1381), 28.03.2018թ., ընդունվել է 21.03.2018թ., ուժի մեջ է մտել 07.04.2018թ.:

ենք եզրակացնել, որ հայրենական իրավական համակարգում վարչական ակտը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

1) վարչական ակտի կարևորագույն հատկանիշը վարչական մարմնի կողմից ընդունված լինելու հանգամանքն է: Վարչական ակտն ընդունվում է հանրային իշխանությամբ օժտված իրավասու մարմնի (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի) կողմից օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված իրավասությունների շրջանակներում³:

Գերմանացի իրավագետ Հ. Մաուրերի այնուամենայնիվ վարչական մարմնի կողմից ձեռնարկված միջոցները, որոնք իրականացվում են վարչաիրավական ընթացակարգերում, պետք է, նախ և առաջ, ուղղված լինեն արտաքին ներգործությունն ունենալուն: Ընդհանուր առմամբ վարչական ակտը կատարում է օրենքը կիրառողի դեր, այսինքն՝ յուրաքանչյուր առանձին դեպքում կոնկրետ ձևակերպված անհատական իրավական ակտի միջոցով իրավունքի համընդհանուր և վերացական նորմերն իրենց կիրառությունն են ստանում: Եթե այն իրավական հիմքը, որի վրա հիմնվում է վարչական ակտը, որակվում է որպես հանրային իրավունքի նորմ, ապա այդպիսի ակտը համարվում է հանրային իրավունքի ոլորտում ընդունված⁴: Որպեսզի իրավունքի նորմը որակվի որպես հանրային-իրավական, անհրաժեշտ է հաշվի առնել վարչական մարմնի գործունեության իրավական ձևը և կամքը⁵:

2) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի լուծման նպատակով, կրում է անհատական բնույթ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձանց: Այն վերաբերում է որոշակի ֆիզիկական կամ իրավա-

բանական անձի, այսինքն ունի հստակորեն որոշված հասցեատեր⁶: Վարչական ակտը վերոնշյալ հատկանիշով տարանջատվում է նորմատիվ իրավական ակտից, որը նույնպես հանդիսանում է հանրային իրավունքի բնագավառում հանրային իշխանության մարմինների գործունեության արդյունք և օժտված է վարչական ակտին բնորոշ բոլոր հատկանիշներով, սակայն այն, ի տարբերություն վարչական ակտի, ուղղված է անձանց անորոշ շրջանակի,

3) վարչական ակտը վարչական մարմնի կողմից ընդունվում է միակողմանիորեն, այսինքն՝ վարչական ակտի հասցեատերը վարչական մարմնի կամարտահայտության վրա փոխազդելու որևէ հնարավորություն չունի: Դրա փոխարեն վերջինս կարող է օրենքով սահմանված կարգով վիճարկել վարչական ակտի իրավաչափությունը⁷,

4) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն: Արտաքին ներգործության հասկացության ներքո նկատի է առնվում այն հանգամանքը, որ վարչական ակտով շոշափվում են այն անձանց իրավունքներն ու պարտականությունները, ովքեր տվյալ ակտն ընդունած վարչական մարմնի հետ ներգերատեսչական հարաբերությունների մեջ չեն գտնվում,

5) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում: Տվյալ դեպքում նկատի են առնվում այն հարաբերությունները, որոնք բացառապես առնչվում են իմպերատիվ նորմերով կարգավորվող և քաղաքացիաիրավական ոլորտից դուրս գտնվող բնագավառին⁸,

6) վարչական ակտն ընդունվում է իրավաբանական նշանակություն ունեցող տարբեր փաստաթղթերի՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ այլ իրավական ակտի տեսքով⁹:

³ Տե՛ս **Россинский Б. В., Стариков Ю. Н.**, Административное право. 4-ое изд., пересмотр, и доп.-Москва., Норма, 2009. էջ 437.

⁴ Տե՛ս **H. Maurer**, Allgemeines Verwaltung srecht, էջ 548-551, https://bibliothek.beck.de/?vpath=bibdata/komm/MauHdbAllgVerwR_18/cont/MauHdbAllgVerwR.Inhaltsverzeichnis.htm (04.09.2019).

⁵ Տե՛ս **J. Ipsen**, Allgemeines Verwaltungsrecht էջ 91, <http://www.vahlen.de/productview.aspx?product=13987261>(04.09.2019).

⁶ Տե՛ս «Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ», «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2015թ., էջ 138:

⁷ Տե՛ս **Россинский Б. В., Стариков Ю. Н.**, Административное право. 4-ое изд., пересмотр, и доп.-Москва.: Норма, 2009. էջ 439.

⁸ Տե՛ս **Դանիելյան Գ. Բ.**, Վարչական վարույթն և պատասխանատվություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2011, էջ 86:

⁹ Տե՛ս **Россинский Б. В., Стариков Ю. Н.**, Административное право. 4-ое изд., пересмотр, и доп.-Москва.: Норма, 2009. էջեր 438-439.

Վարչական ակտի վերոնշյալ հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար:

Անդրադառնալով վարչական ակտի հատկանիշների բնորոշման հարցի իրավական մեկնաբանմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/2659/05/14 վարչական գործով 22.04.2016թ. որոշմամբ վարչական ակտին վերագրել է վերոնշյալ բոլոր իրավական հատկանիշները¹⁰:

Ամփոփելով ներպետական օրենսդրությամբ վարչական ակտին տրված սահմանումը և այն համադրելով իրավակիրառ պրակտիկայում վերջինիս տրած իրավական մեկնաբանման հետ՝ կարող ենք եզրակացնել, որ օրենսդիրը վարչական ակտի ներքո նկատի է ունեցել միայն համապատասխան հատկանիշներով օժտված անհատական իրավական ակտերը՝ բացառելով վարչական ակտի՝ նորմատիվ իրավական ակտ հանդիսանալու հնարավորությունը:

Այն, որ վերը նշված հատկանիշներով օժտված է ոչ միայն անհատական, այլև նորմատիվ իրավական ակտը, խնդրահարույց չէ, ավելին, հենց նորմատիվ իրավական ակտերն են հաճախ առավելապես բնութագրվում որպես արտաքին ներգործություն ունեցող, հանրային իրավունքի բնագավառում հարաբերությունների կարգավորման նպատակով անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն ուղղված իրավական ակտեր¹¹:

Վարչական իրավունքի տեսության մեջ «վարչական ակտ» եզրույթին տրվում են տարբեր բնորոշումներ: Մասնավորապես, ռուս կանաձոր իրավագետ Ա. Ի. Ստախովի կարծիքով վարչաիրավական ակտը վարչական մարմնի որոշակի ֆորմալ-փաստաթղթային ձև ունե-

ցող միակողմանի իմպերատիվ ենթաօրենսդրական որոշումն է, որը տվյալ մարմնի կողմից ընդունվում է իր իրավասությունների շրջանակներում և օրենքով նախատեսված իրավական ընթացակարգերով: Դրանով սահմանվում են վարքագծի համընդհանուր կանոններ սուբյեկտների անորոշ շրջանակի համար (իրավական նորմ) կամ նյութական իրավունքի տարբեր ճյուղերի հիման վրա ողջվում և հաստատվում են սուբյեկտների անորոշ շրջանակի կամ անհատապես որոշված ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սուբյեկտիվ իրավունքները, պարտականությունները (...)¹²:

Միաժամանակ, Յու. Մ. Կոզլովը նշել է, որ վարչական ակտն իրենից ներկայացնում է հանրային կառավարման որոշման իրավաբանական ձևը, որի ստեղծման միջոցով գործադիր մարմինը (պաշտոնատար անձը) լուծում է իր գործունեության ընթացքում գործադիր իշանության գործառույթներից և խնդիրներից բխող հարցերը (ընդհանուր կամ անհատական)¹³:

Ըստ գերմանացի իրավագետ Օ. Մայերի՝ վարչական ակտն իշխանության իմպերատիվ որոշումն է, որով յուրաքանչյուր առանձին դեպքում որոշվում են ենթակայական հարաբերությունների մեջ գտնվող անձի իրավունքները¹⁴:

Իրավագետներ Յու. Ն. Ստարիլովի և Բ. Վ. Ռոսսինսկիի բնորոշմամբ վարչական ակտն իրավական ակտ է, որը ընդունվում է հանրային կառավարական հարաբերությունների կարգավորման կամ կոնկրետ վեճի (գործի) լուծման նպատակով, իրավունքի սուբյեկտների համար ամրագրում է նոր իրավական կարգավիճակ, օժտված է պետա-իշխանական բնույթով, ընդունվում է իրավասու հանրային կառավարման սուբյեկտների կողմից սահմանված

¹⁰ ՀՀ վճռաբեկ դատարանը համանման իրավական դիրքորոշումներ է արտահայտել նաև թիվ ՎԴ/0090/05/16 վարչական գործով 07.04.2018թ., թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով 30.04.2015թ., թիվ ՎԴ/3/0283/05/09 վարչական գործով 25.06.2010թ. որոշումներում:

¹¹ Տե՛ս **Դանիելյան Գ. Բ.**, Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 64:

¹² Տե՛ս **Стахов А. И.**, Административное право России, Москва, 2009, էջ 306, https://studme.org/86798/pravo/ponyatie_priznaki_vidy_administrativno-pravovyh_aktov_publichnoy_administratsii (14.09.2019).

¹³ Տե՛ս **Алехин П. А., Кормолицкий А. А., Козлов М. Ю.**, Административное право Российской Федерации: учебник для вузов, 2-е изд., испр. и доп. – Москва, Зерцало, 1997թ., էջ 672.

¹⁴ Տե՛ս **Майер О.**, Немецкое административное право, 1895, էջ 93.

իրավական ընթացակարգին համապատասխան՝ կառավարման խնդիրների և գործառնությունների իրականացման համար¹⁵:

Վարչական իրավունքի տեսության մեջ «վարչական ակտ» եզրույթին տրված բնորոշումներից հետևում է, որ իրավագետների գերակշիռ մասի գնահատմամբ «վարչական ակտ» եզրույթի ներքո ներկայացվում են վարչական մարմինների կողմից հանրային իրավունքի բնագավառում օրենքով սահմանված կարգով ընդունված ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական իրավական ակտերը:

Ներպետական օրենսդրությամբ վարչական ակտի բնորոշման հիմնախնդիրների քննարկման համատեքստում կարևորագույն նշանակություն ունի նաև «վարչական ակտ» եզրույթի սահմանումը Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից: Հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում իրականացված մոնիտորինգի արդյունքները, ինչպես նաև 2000 թվականի հունվարի 12-ին կայացած 693-րդ նիստի ընթացքում ընդունված «Վարչական ակտերի վերանայման սահմանների և հնարավորությունների վերաբերյալ որոշումը» և նպատակ ունենալով անդամ երկրներում ապահովել արդյունավետ հանրային կառավարում և հավասարակշռություն վարչական իրավահարաբերության կողմերի օրինական շահերի միջև՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն դեռևս 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» թիվ R(2004)20 հանձնարարականը¹⁶ (այսուհետ՝ նաև Հանձնարարական): Հանձնարարականի համաձայն՝ «վարչական ակտ» են համարվում՝

ա) իրավական ակտերը՝ անհատական և նորմատիվ (ընդգծումը մերն է), ինչպես նաև վարչական մարմինների ֆիզիկական գործողությունները, որոնք իրականացվել են հանրային իշխանությամբ իրենց վերապահված գործառնություններն իրականացնելիս և որոնք կարող են ազդել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների վրա,

բ) որոշակի գործողություն կատարելուց հրաժարվելու կամ անգործություն դրսևորելու իրավիճակներ, երբ վարչական մարմինը պարտավոր է կիրառել ընթացակարգ համապատասխան պահանջի առկայության դեպքում:

Ներպետական օրենսդրությամբ «վարչական ակտ» եզրույթին տրված սահմանումները համադրելով ՀՀ իրավական համակարգի մասը կազմող միջազգային իրավական ակտերով տրված բնորոշումների հետ՝ եզրակացնում ենք, որ ներպետական օրենսդրությամբ նեղացվել է վարչական ակտերի շրջանակը՝ սահմանափակվելով բացառապես անհատական իրավական ակտերով, ինչը հակասում է վարչական ակտի բնորոշման միջազգային չափորոշիչներին և խաթարում է վարչարարության և վարչական ակտի բուն էությունը:

Վարչական իրավունքի զարգացման հարուստ փորձ ունեցող երկրների վարչական իրավունքի ուսումնասիրությունը և դրա հիման վրա կատարված եզրահանգումները կարող են արդյունավետորեն կիրառվել ներպետական օրենսդրության կատարելագործման գործում:

Վարչական իրավունքի տեսության զարգացման գործում առանձնակի մեծ ներդրում ունեն գերմանացի իրավագետները: Ներկայումս Գերմանիայում վարչական իրավունքն այնքան է զարգացել, որ պրակտիկորեն բոլոր սոցիալ-տնտեսական «կառավարչական» հարաբերությունները կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով: «Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքը¹⁷ տարբերակում է վարչական մարմնի վարչաիրավական գործունեության երկու տեսակներ՝ վարչական ակտերի ընդունում և կառավարման նորմատիվ ակտերի ընդունում: Նույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը հրաման, որոշում կամ այլ միակողմանի իմպերատիվ գործողություն է, որն ունի արտաքին ներգործություն և ընդունվում է իրավասու մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ հարաբերությունների կարգավորման նպատակով:

¹⁵ Տե՛ս **Российский Б. В., Старилов Ю. Н.**, Административное право, 4-е изд., испр. и доп., Норма, 2009թ., էջ 437.

¹⁶ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016805db3f4. (27.09.2019):

¹⁷ Տե՛ս *Verwaltungs verfahren Bundcsgesetzblatt*. 1976. T. 1. S. 1253.

Ավստրիացի հետազոտողներ L. Ադամովիչը և Բ. Ֆունկը, ուսումնասիրելով Գերմանիայի վարչական իրավունքը, վարչական ակտը բնորոշում են որպես կառավարման մարմնի ակտ, որն ունի իշխանական բնույթ և դրանով միակողմանիորեն սահմանվում են պարտադիր կանոններ այն անձանց համար, ովքեր գտնվում են այդ մարմնի կառավարման ներքո¹⁸:

Համեմատականներ անցկացնելով Գերմանիայի վարչական իրավունքում և մեր ներպետական իրավական համակարգում վարչական ակտին տրված բնորոշումների միջև՝ կարող ենք եզրակացնել, որ հայրենական իրավական համակարգում «վարչական ակտ» եզրույթի սահմանումը և վերջինիս ներկայացվող պահանջներն գրեթե նույնն են Գերմանիայի վարչական իրավունքում վերջինիս տրված բնորոշման հետ, ինչը թերևս կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական իրավունքի զարգացման գործում իրենց ավանդն ունեն նաև գերմանական իրավական կազմակերպությունները:

Ի տարբերություն Գերմանիայի վարչական իրավունքի՝ Ավստրիայի վարչական իրավունքում վարչական ակտի բնորոշումը տրված չէ նման ձևով: Ինչ ձևով և որ դեպքերում կարող է անձը դիմել վարչական արդարադատությանը և ստանալ իրավական պաշտպանություն, մեծապես կախված է նրանից, թե կոնկրետ ինչպիսի վարչական ակտի մասին է խոսքը: Ցանկացած որոշում, այսինքն՝ վարչական մարմնի կողմից մասնավոր անձանց հետ հարաբերություններում ընդունված պաշտոնական իմպերատիվ որոշում (այլ կերպ այն կոչվում է նաև «պաշտոնական վարչական ակտ») կարող է բողոքի հիման վրա բողոքարկվել վարչական դատարանում, ընդ որում վարչական վարույթի օրինականությունը կարող է հաստատվել միայն Բարձրագույն սահմանադրական դատարանի

կողմից հաստատված որոշակի չափանիշների հիման վրա: Այսինքն՝ ի տարբերություն վարչաիրավական պաշտպանության գերմանական համակարգի, որում տրված է վարչական ակտի սահմանումը և առկա են իրավունքների պաշտպանության երաշխիքներ, Ավստրիական մոդելի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարևորագույն տեղ զբաղեցնում են որոշումները¹⁹:

«Վարչական վարույթի մասին» Ավստրիայի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածը ամրագրում է վարչական ակտի կառուցվածքը, 60-րդ հոդվածը՝ վարչական ակտի պարտադիր հիմնավորման պահանջը, որոնք գրեթե նույնական են ՀՀ օրենսդրությամբ նրկայացվող պահանջներին:²⁰

«Վարչական վարույթի մասին» Ավստրիայի Հանրապետության օրենքում վարչական որոշմանը տրված սահմանումը չի համապատասխանում Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքում որոշման բնորոշմանը: Մասնավորապես՝ Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 130-րդ հոդվածի²¹ վերլուծության արդյունքում կարող ենք հետևություն անել, որ Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքը վարչական որոշմանն առավել տարածական բնորոշում է տվել՝ վերջինիս ներքո ընկալելով վարչական մարմնի ինչպես կոնկրետ-անհատական, այնպես էլ նորմատիվ ակտերը կամ այլ գրավոր փաստաթղթերը, որոնք ուղղված են տվյալ վարչական մարմնի ենթակայության ներքո չգտնվող անձին, այսինքն՝ վարչական մարմնի ցանկացած գործողություն, որի միջոցով կարգավորվում են կոնկրետ վարչաիրավական հարաբերություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այն համապատասխանում է «Վարչական վարույթի մասին» Ավստրիայի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածով սահմանված պահանջներին, թե ոչ:²² Այսինքն՝ որպեսզի գրավոր փաստաթուղթը համարվի վարչական որոշում, էական նշանակություն ունի ոչ թե «Վարչական վա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 115 2020

¹⁸ Sfin Adamovkh L.K, funk Д-С Op. clt. էջ 322.
¹⁹ Sfin Квоста П., Предпосылки (оофициального) административного акта в Австрии, Ежегодник публичного права. Административный акт 2016, «Инфотропик медиа», Москва, 2016, էջ 21.
²⁰ Sfin https://www.ris.bka.gv.at/Dokumente/Erv/ERV_1991_51/ERV_1991_51.html, (01.11.2019).
²¹ Sfin https://www.ris.bka.gv.at/Dokumente/Erv/ERV_1930_1/ERV_1930_1.html, (27.09.2019).
²² Sfin Квоста П., “Предпосылки (оофициального) административного акта в Австрии”, Ежегодник публичного права. Административный акт 2016, «Инфотропик медиа», Москва, 2016, էջ 22:

րոյթի մասին» օրենքով վարչական որոշմանն առաջադրված պահանջների բավարարումը, այլ տվյալ գրավոր փաստաթղթի բովանդակությունը: Ասվածի վառ վկայությունը Ավստրիայի սահմանադրական դատարանի 15.10.1981թ. թիվ 244/1981 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն են²³:

Ի տարբերություն Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական իրավունքի, որում օրենսդրական մակարդակով հստակորեն տրված է «վարչական ակտ» եզրույթի սահմանումը, Ռուսաստանի Դաշնության վարչական իրավունքում «վարչական ակտ» եզրույթի օրենսդրական բնորոշումը բացակայում է²⁴: Օրենսդրական սահմանման բացակայության պայմաններում տեսաբանները «վարչական ակտ» եզրույթի բնորոշման ժամանակ հղում են կատարում վարչական ակտի տեսությանը՝ մատնանշելով վարչական ակտի՝ տեսությունում ընդունված հիմնական հատկանիշները:

Վարչական իրավունքի տեսության մեջ ռուս իրավագետների կողմից ՌԴ օրենսդրության մեկնաբանության համատեքստում «վարչական ակտ» եզրույթին տրված բնորոշումների վերլուծության արդյունքում եզրահանգում ենք, որ Ռուսաստանի Դաշնության վարչական իրավունքում վարչական ակտը բնորոշվում է որպես ենթաօրենսդրական, պաշտոնական, իմպերատիվ ակտ, որն ընդունվում է գործադիր իշխանության մարմնի (կամ պետական կառավարման այլ մարմնի) կողմից, օրենքով սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում, համապատասխանում է օրենքով սահմանված ձևին և առաջացնում է իրավական հետևանքներ վարչաիրավական նորմերի կամ իրավահարաբերությունների տեսքով²⁵:

Հիշյալ սահմանման բովանդակությունից բխում է, որ ՌԴ վարչական իրավունքում վարչական ակտն, ի թիվս ՀՀ վարչական իրավուն-

քում վարչական ակտի բնորոշման հատկանիշների, ունի նաև ենթաօրենսդրական բնույթ, այսինքն՝ ընդունվում է օրենքի հիման վրա, համապատասխանում է օրենքին, իրավական ակտերի հիերարխիայում օժտված է նվազ իրավաբանական ուժով, ի համեմատություն օրենքի:

Վարչական ակտերի դասակարգումն անհատականի և նորմատիվի ունի գիտագործնական կարևոր նշանակություն, քանի որ դրանից են կախված վարչական ակտին ներկայացվող պահանջները, դրանց ընդունման և բողոքարկման կարգը:

Վրաստանի Հանրապետությունում վարչաիրավական ակտերի ընդունման և կատարման, վարչական բողոքների, դիմումների քննարկման, վարչական մարմինների կողմից վարչական գործարքների պատրաստման, կնքման և կատարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Վրաստանի Հանրապետության ընդհանուր վարչական օրենսգրքով²⁶, որի 2-րդ հոդվածում տրված են օրենսգրքում օգտավորվող հիմնական հասկացությունների սահմանումները: Մասնավորապես. նույն հոդվածի 1-ին մասի «գ», «դ» և «ե» կետերում տրված են համապատասխանաբար վարչաիրավական ակտ, անհատական վարչաիրավական ակտ և նորմատիվ վարչաիրավական ակտ հասկացությունների սահմանումները:

Վրաստանի Հանրապետության օրենսդրությամբ վարչական ակտն օրենքի հիման վրա վարչական մարմնի կողմից ընդունված իրավական ակտն է:

Անհատական վարչաիրավական ակտն վարչական օրենսդրության հիման վրա վարչական մարմնի կողմից ընդունված անհատական իրավական ակտ է, որով սահմանվում, փոփոխվում, թույլատրվում կամ հաստատվում են անձի, անձանց սահմանափակ խմբի կամ-

²³ Տե՛ս **Квоста П.**, “Предпосылки (оофициального) административного акта в Австрии”, Ежегодник публичного права. Административный акт 2016, «Инфотропик медиа», Москва, 2016, էջ 23.

²⁴ Տե՛ս **Мицкевич Л.**, Административно-правовые акты в России и Германии: сравнительно-правовой аспект, Ежегодник публичного права. Административный акт 2016, «Инфотропик медиа», Москва, 2016, էջ 67.

²⁵ Տե՛ս **Мицкевич Л.**, Административно-правовые акты в России и Германии: сравнительно-правовой аспект, Ежегодник публичного права. Административный акт 2016, «Инфотропик медиа», Москва, 2016, էջ 67.

²⁶ Տե՛ս **Пуделька Й.**, «Сборник законов об административных процедурах», «Инфотропик медиа», Москва, 2016, էջեր 185-263:

կազմակերպությունների իրավունքներ և պարտականություններ: Անհատական վարչաիրավական ակտ է համարվում նաև վարչական մարմնի՝ իր իրավասությունների շրջանակներում դիմումը մերժելու վերաբերյալ որոշումը, ինչպես նաև վարչական մարմնի կողմից ընդունված կամ հաստատված փաստաթուղթը, որը կարող է առաջացնել իրավական հետևանքներ:

Նույն հոդվածի «ե» ենթակետի համաձայն՝ նորմատիվ վարչաիրավական ակտը օրենսդրական ակտի հիման վրա իրավասու վարչական մարմնի կողմից ընդունված իրավական ակտ է, որը պարունակում է մշտական, ժամանակավոր կամ բազմակի կիրառման վարքագծի ընդհանուր կանոններ:

Վրաստանի Հանրապետության ընդհանուր վարչական օրենսգրքի վերոնշյալ իրավական ակտերի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ Վրաստանի վարչաիրավական օրենսդրությամբ ըստ իրավաբանական բովանդակության՝ վարչական ակտերը տարբերակված են 2 տեսակի՝ անհատական և նորմատիվ:

Համանման իրավական կարգավորում է նախատեսված նաև Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությամբ, որով վարչական ակտերը դասակարգվում են երկու տեսակի՝ միակողմանի (իմպերատիվ) ակտեր և պայմանագրեր: Ընդ որում միակողմանի (իմպերատիվ) ակտերն ունեն իրենց ենթատեսակները՝ նորմատիվ և անհատական²⁷:

ՀՀ-ում վարչական ակտի սահմանման հետ գրեթե նույնական բնորոշում են նախատեսում «Վարչական վարույթի մասին» Լատվիայի Հանրապետության²⁸, «Վարչական վարույթի մասին» Էստոնիայի Հանրապետության²⁹, «Վարչական վարույթի մասին» Ադրբեջանի Հանրապետության³⁰ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքները³¹:

Վարչական ակտի բնորոշման հիմնախնդիրն ուսումնասիրելով միջազգային իրավական համակարգերի համատեքստում՝ կարող ենք հստակորեն փաստել, որ հայրենական իրավական համակարգում վարչական ակտի սահմանումն անհարկիորեն նեղացվել է՝ սահմանափակվելով բացառապես անհատական իրավական ակտերով, միջոցով միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ այն երկրներում, որտեղ վարչական իրավունքը զարգացման բավականին հասուն ճանապարհ է անցել, վարչական ակտի սահմանները բավականին ընդարձակ են և ներառում են ոչ միայն անհատական, այլև նորմատիվ վարչական ակտերը:

Ընդ որում, հարկ է նշել, որ վարչական ակտերը բնորոշվում են որպես բացառապես անհատական իրավական ակտեր հիմնականում հետխորհրդային երկրների ներպետական օրենսդրությամբ՝ (բացառությամբ Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի Հանրապետության):

²⁷ Տե՛ս Michel Fromont, Typen staatlichen Verwaltungsrechts in Europa in: Ius Publicum Europaeum, Band III: Verwaltungsrecht in Europa: Grundlagen / hrsg. von Armin von Bogdandy, Sabino Cassese, Peter Michael: Müller, 2010, էջեր. 551-576, http://dpp.mpil.de/01_2012/01_2012_315_353.pdf (05.10.2019).

²⁸ Տե՛ս Пуделька Й., «Сборник законов об административных процедурах», «Инфотропик медиа», Москва, 2016, էջեր 315-385.

²⁹ Տե՛ս Пуделька Й., «Сборник законов об административных процедурах», «Инфотропик медиа», Москва, 2016, էջեր 385-435.

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջեր 1-45.

³¹ Տե՛ս նույն տեղում, էջեր 263-315.

ԳԵՎՈՐԳ ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

Երևան քաղաքի դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԳՈՐԿԱՐ ԱՂՈՆՑ

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն
վարչական շրջանների դատախազության դատախազ

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԵՏԱՊՆԴԻՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Հոդվածը նվիրված է անչափահասների նկատմամբ կատարված՝ մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունների վերաբերյալ վարույթը հանրային կարգով իրականացնելու գիտագործնական խնդիրին:

Վերլուծելով տուժողի օրինական ներկայացուցչի դատավարական կարգավիճակը՝ հոդվածում փաստվում է, որ վերջինս անչափահասի փոխարեն հանցանք կատարած անձի հետ հաշտվելու իրավունք չունի: Հեղինակներն արձանագրում են միաժամանակ, որ անչափահաս տուժողը կարող է չգիտակցել իր նկատմամբ հանցագործություն կատարված լինելու հանգամանքը, չկարողանալ արտահայտել իր կամքը հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ այդ կապակցությամբ անչափահասի դիրքորոշումը կարող է չհամապատասխանել դատական իրավունքում սահմանված չափանիշներին:

Անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար, առկա իրավակարգավորումների և դրանց դատական մեկնաբանությունների վերլուծությամբ հեղինակներն առաջարկում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել տարիքային անօգնականության գաղափարը և սահմանել այդ դեպքերում, և եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահը, անչափահասների նկատմամբ կատարված մասնավոր հետապնդման ենթակա հանցագործությունների դեպքերով վարույթը հանրային մեղադրանքի կարգով սկսելու և շարունակելու դատախազի իրավասությունը: Հեղինակները նաև ներկայացնում են այն չափանիշները, որոնցով պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատվի «երեխայի լավագույն շահը»:

Բանալի բառեր. անչափահաս, երեխա, լավագույն շահ, մասնավոր մեղադրանք, հանրային մեղադրանք, տարիքային անօգնականություն:

ГЕВОРГ БАГДАСАРЯН

Прокурор города Еревана,
кандидат юридических наук

ГОАР АДОНЦ

Прокурор прокуратуры административных округов
Ачапняк и Давташен

ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ИНТЕРЕСОВ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ПОТЕРПЕВШИХ ПО ДЕЛАМ ЧАСТНОГО ОБВИНЕНИЯ

Статья посвящена научно-практическим проблемам публичного преследования по делам о преступлениях частного обвинения, совершенных в отношении несовершеннолетних.

Анализируя процессуальное положение законного представителя несовершеннолетнего, в статье устанавливается, что законный представитель не имеет право примирения с лицом, совершившим преступления вместо несовершеннолетнего.

Одновременно, авторы отмечают, что несовершеннолетний потерпевший может не осознать факт совершения преступления против него, не иметь возможности выразить свою волю о привлечении к ответственности лица, совершившего преступление, или же об этом выраженная позиция может не соответствовать критериям, установленным в судебном законодательстве.

В целях защиты прав несовершеннолетних потерпевших, авторы, анализируя существующие правовые нормы и их судебные толкования, предлагают в Уголовно-процессуальном кодексе Республики Армения установить идею возрастной беспомощности и, в данных случаях, и если того требует наилучшие интересы ребенка, предусмотреть право прокурора инициировать и продолжить публичное преследование по делам о преступлениях частного обвинения, совершенных в отношении несовершеннолетних.

Авторы также представляют те критерии, по которым в каждом конкретном случае должны оцениваться наилучшие интересы ребенка.

Ключевые слова: несовершеннолетний, ребенок, наилучшие интересы, частное обвинение, публичное обвинение, возрастная беспомощность.

GEVORG BAGHDASARYAN

Prosecutor of Yerevan City,
candidate of legal sciences

GOHAR ADONTS

Prosecutor in the prosecutor's office of
Ajapnyak and Davtashen administrative districts

THE ISSUE OF PROTECTING THE INTERESTS OF JUVENILE VICTIMS IN PRIVATE PROSECUTION CASES

The article is dedicated to the scientific and practical problems of the implementation of public prosecution for the crimes of private prosecution against juveniles. Analyzing the procedural status of the victim's legal representative,

the article states that the latter has no right to reconcile with the person who committed the crime instead of the minor.

At the same time the authors also state that the juvenile victim may not be aware of the fact that a crime has been committed against him, may not be able to express his/her will about the prosecution of the offender or in this regard the juvenile's position may not comply with the standards laid down in judicial law.

In order to ensure the protection of the rights of juvenile victims, the authors, by analyzing the existing legal regulations and their judicial interpretations, suggest to stipulate the idea of age helplessness in the Criminal Procedure Code of RA and determine in those cases and, if it requires the child's best interests, the right of the prosecutor to initiate and continue public prosecution for the crimes of private prosecution against juveniles.

The authors also present those criterias by which in each case the best interest of the child should be assessed.

Keywords: juvenile, child, best interest, private prosecution, public prosecution, age helplessness.

* * *

ՆԱՆԵ ՄԵԼԲՈՆՅԱՆ

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող,
ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջատար մասնագետ

ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սույն հոդվածի նպատակն է վեր հանել գործող օրենսդրության պայմաններում պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման դատավարական կարգը սահմանող իրավակարգավորումներում առկա հնարավոր թերություններն ու բացթողումները, որոնք իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են խնդիրների: Ուսումնասիրվել են ինչպես Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումները, այնպես էլ արտասահմանյան երկրների փորձը: Վերոնշյալի հիման վրա կատարվել են համապատասխան առաջարկություններ, որոնք կարող են նպաստել օրենսդրության բարելավմանը:

Բանալի բառեր՝ Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում, հարկադրանքի միջոց, հանրային ծառայող, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն, կասեցման ժամկետ, աշխատանքի ազատ ընտրություն, աշխատանքի վարձատրություն

НАНЭ МЕЛКОНЯН

магистрант 2-ого курса юридического факультета ЕГУ
Ведущий специалист отдела развития антикоррупционной и пенитенциарной политики аппарата Министерства юстиции РА

ВРЕМЕННОЕ ПРЕКРАЩЕНИЕ ПОЛНОМОЧИЙ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА. НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ

Целью данной статьи является выявление возможных недостатков и упущений в правовых нормах, устанавливающих процессуальный порядок временного прекращения полномочий, в условиях действующего законодательства, которые на практике приводят к проблемам. Изучены не только правовые урегулирования в проекте нового Уголовно-процессуального кодекса РА, а также опыт зарубежных стран. По результатам проведенного нами исследования были сделаны соответствующие предложения, которые могут способствовать совершенствованию Законодательства.

Ключевые слова: Временное прекращение полномочий, мера пресечения, государственный служащий, судебный контроль за досудебным производством, период приостановления, свободный выбор работы, оплата труда, прекращение полномочий.

NANE(H) MELKONIAN

YSU, Law Department, second year master's student,
Leading specialist at the Department of Anti-Corruption and
Penitentiary Policy Development, RA Ministry of Justice

**TEMPORARY TERMINATION OF POWERS IN THE CRIMINAL PROCEEDINGS
OF THE REPUBLIC OF ARMENIA. SOME PROBLEMS**

The aim of this article is to highlight the possible shortcomings and gaps in the legal regulations that define the procedural order for the temporary duty suspension of the current legislation, which, in practice, lead to problems. The regulations of the Draft New Code of Criminal Procedure of the RA, as well as the experience of foreign countries have been studied. Thereon, practical recommendations have been made, which can contribute to the improvement of the legislation.

Keywords: Temporary duty suspension, coercion, civil servant, judicial supervision of pre-trial procedures, suspension period, free choice of work, remuneration, termination of powers.

* * *

ՋՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, Փաստաբան
իրավ.գիտ.թեկնածու

**ԶԵՐԲԱԿԱԿԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Սույն գիտական հոդվածի սահմաններում քննարկման առարկա է դարձվում ձերբակալված և կալանավորված անձանց հաղորդակցության ազատության սահմանափակմանը վերաբերող խնդիրները: Աշխատանքի ծավալում ներառված են հիշատակված սահմանափակման սահմանադրականության հարցի ուսումնասիրությունը, ինչպես նաև գործող իրավակարգավորումների բարեփոխման առաջարկությունները:

Բանալի բառեր. Հաղորդակցության ազատություն, ազատության սահմանափակում, որոշակիություն, հիմքեր:

ЗОРАЙР АРУТЮНЯН

Адвокат, Член Палаты Адвокатов Республики Армения
канд.юрид.наук

**СВОБОДА КОММУНИКАЦИИ ЗАКЛЮЧЕННЫХ И АРЕСТОВАННЫХ ЛИЦ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ЕЕ
ОГРАНИЧЕНИЯ**

В рамках настоящей научной статьи обсуждаются проблемы относимые к ограничению свободы коммуникации задержанных и арестованных лиц. В объем работы включены анализ конституциональности упомянутого ограничения, а также предложения по реформированию действующих правовых регуляций.

Ключевые слова: Свобода коммуникаций, ограничения свобод, определенность, основания.

ZORAYR HARUTYUNYAN

Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia
PhD in Law

**FREEDOM OF COMMUNICATION OF PRISONED AND ARRESTED PERSONS AND
BASIC PROBLEMS OF ITS RESTRICTION**

In the frames of the current scientific article issues concerning the limitation of the freedom of communication of detained and arrested persons, are being discussed. Analysis of the constitutionality of the mentioned limitation, as well as reform proposals of the currently existing legal regulations are presented in the work.

Keywords: Freedom of communication, limitation of freedom, distinctness, grounds.

ՋՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հայաստանի Ֆրանսիական Համալսարանի դասախոս,
Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր
իրավասության դատավոր, իրավագիտության թեկնածու

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Ֆրանսիական Համալսարանի
ուսանող

ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՖՈՏՈՐՈԲՈՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գենետիկական ֆոտորոբոտների օգտագործումը քննչական գործողություններում թույլ կտա ավելի արագ, օբյեկտիվ և ճշգրիտ նույնականացնել հանցագործին՝ հիմնվելով հանցագործության վայրում կամ տուժողի վրա հայտաբերված հետքերի ԴՆԹ վերլուծության վրա: Մարդու ԴՆԹ-ն պարունակում է նրա արտաքին ֆիզիկական առանձնահատկությունների մասին տեղեկատվություն: Գենետիկական ֆոտորոբոտները կարող են օգտագործվել հնարավոր հանցագործի դեմքի պատկերը կառուցելու համար՝ թույլ տալով ստեղծել ավելի ճշգրիտ կերպար, քան վկայի հիշողության հիման վրա՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մի շարք երկրներում գենետիկական ֆոտորոբոտի օգտագործումն արգելվում է, սակայն Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառման համար որևէ օրենսդրական սահմանափակում չկա, ինչը հնարավորություն է տալիս այս տեխնիկայի միջոցով նույնականացնել հանցագործին:

Բանալի բառեր: գենետիկական ֆոտորոբոտներ, ԴՆԹ, քննչական գործողություններ, նույնականացնել:

ДЖОН АЙРАПЕТЯН

Преподаватель Французского Университета Армении,
Судья суда первой инстанции общей юрисдикции
области Ширак, Кандидат юридических наук

АННА ХАЧАТРЯН

Студент французского университета в Армении

ИСПОЛЬЗОВАНИЕ ГЕНЕТИЧЕСКИХ ФОТОРОБОТОВ В СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЯХ

Использование генетических фотороботов в следственных действиях позволит быстрее, объективнее и точнее идентифицировать преступника на основе анализа ДНК из следов, обнаруженных на месте преступления или жертвы. ДНК человека содержит информацию о его внешних физических особенностях. Генетические фотороботы могут быть использованы для построения изображения лица потенциального преступника, позволяя создавать более точные образы, чем при помощи компьютерных программ на основе воспоминаний свидетелей. Использование генетического фоторобота запрещено в ряде стран, но в Республике Армения отсутствует законодательный предел для его применения, что позволяет идентифицировать преступников с помощью этой техники.

Ключевые слова генетические фотороботы; ДНК; следственные действия; идентифицировать.

JOHN HAYRAPETYAN

Lecturer of French University of Armenia,
Judge of First Instance Court of General Jurisdiction of
Shirak province, PhD

ANNA KHACHATRYAN

Student of French University in Armenia

USE OF GENETIC PHOTOROBOTS IN INVESTIGATIVE ACTIONS

The use of genetic photorobots in investigative actions will allow faster, more objective and accurate identification of a criminal on the basis of DNA analysis from traces found at the crime scene or victim. Human DNA contains information about its external physical characteristics. Genetic photorobots can be used to build an image of the face of a potential criminal, allowing you to create more accurate images than with computer programs based on the memories of witnesses. The use of a genetic photorobot is prohibited in a number of countries, but there is not legislative limit for its application in the Republic of Armenia, which makes it possible to identify criminals using this technique.

Keywords: genetic photorobots; DNA; investigative actions; to identify.

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

ՀՀ փոխվարչապետի խորհրդական,
ի.գ.թ

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՀԱՆՐԱԳՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում քննարկվել են հանրագրերի ներկայացման միասնական էլեկտրոնային հարթակի՝ այդ թվում դրա գործարկման կարևորության, հանրագրերի հրապարակման առանձնահատկությունների հիմնահարցերը, ինչպես նաև ներկայացվել են առկա խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Բանալի բառեր. Հանրագիր, էլեկտրոնային հանրագիր, հանրագիր ներկայացնելու իրավունք, հանրագրերի էլեկտրոնային հարթակ, էլեկտրոնային ժողովրդավարություն

СУРЕН КРМОЯН

Советник Заместителя Премьер-министра РА,
Кандидат юридических наук

ШУШАНИК ГУКАСЯН

Преподаватель кафедры гражданского права ЕГУ
Кандидат юридических наук

ВНЕДРЕНИЕ ЭЛЕКТРОННЫХ ИНСТРУМЕНТОВ В КОНТЕКСТЕ ПРОДВИЖЕНИЯ ИНСТИТУТА ПЕТИЦИЙ

В статье рассматриваются вопросы важности единой электронной платформы для подачи петиций, в том числе важность ее запуска, публикации петиций, а также представлены предложения по решению существующих проблем.

Ключевые слова: Петиция, электронная петиция, право на петицию, электронная платформа, электронная демократия

SUREN KRMOYAN

Adviser to Deputy Prime Minister,
PhD in law

SHUSHANIK GHUKASYAN

Lecturer of YSU Chair of Civil Law
PhD in law

INTRODUCTION OF ELECTRONIC TOOLS IN THE CONTEXT OF PROMOTING THE INSTITUTE OF PETITIONS

The article discusses the issues of the importance of a unified electronic platform for the submission of petitions, including the importance of its launch, the publication of petitions, as well as suggestions for solving existing problems were presented.

Keywords: Petition, electronic petition, the right to petition, electronic petition platform, e-democracy.

* * *

ԼԻԼԻԹ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄԸ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է պատժի՝ որպես իրավաբանական պատասխանատվության դրսևորման ձևերից մեկի նպատակներին՝ փորձելով դրանցում տեղավորել ծանր և առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումը: Զուգահեռներ են տարված ՀՄԽՀ, ՀԽՍՀ և այժմ գործող քրեական օրենսգրքերում պատժի նպատակների միջև:

Բանալի բառեր. ընտրական իրավունք, սահմանափակում, ազատագրկում, պատիժ, նպատակ

ЛИЛИТ СУКИАСЯН

Европейский университет, аспирант Департамента права

ОГРАНИЧЕНИЕ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА В КОНТЕКСТЕ ЮРИДИЧЕСКОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

В статье рассматриваются цели наказания как одной из форм юридической ответственности в попытке вменить туда ограничения избирательного права лиц, осужденных за тяжкие и особо тяжкие преступления и

отбывающих наказание. Проводятся параллели между целями наказания в АССР и в действующем уголовном кодексе.

Ключевые слова: избирательное право, ограничение, лишение свободы, наказание, цель

LILIT SUKIASYAN

European University, Law department, PhD student

DISENFRANCHISEMENT IN THE CONTEXT OF LEGAL LIABILITY

The article addresses the purposes of punishment as one of the forms of legal responsibility in an attempt to place the disenfranchisement of persons convicted of grave and particularly grave crimes serving their sentences. Parallels are drawn between the purposes of punishment in the ASSR and the current criminal code.

Keywords: disenfranchisement, suffrage, restriction, imprisonment, punishment, purpose.

* * *

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
նույն ամբիոնի հայցորդ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻՉՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Հոդվածը նվիրված է եվրոպական երկրներում պառլամենտարիզմի ծագման և զարգացման պատմությանը: Լուսաբանվել են պառլամենտարիզմի էությունն ու հասկացությունը, դրա ձևերը Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և այլն:

Եվրոպական պետությունների պատմական փորձի ուսումնասիրությունն անհրաժեշտություն է՝ պառլամենտարիզմի էությունը հասկանալու համար: Սույն հոդվածը վերաբերում է 18-19-րդ դարերում Անգլիայում, ԱՄՆ-ում և Ֆրանսիայում պառլամենտարիզմի էվոլյուցիոն զարգացմանը և բովանդակում է կարևոր տեղեկատվություն՝ պառլամենտարիզմի հիմնական տարրերի զարգացման վերաբերյալ:

Բանալի բաներ. Պառլամենտարիզմ, խորհրդարանական, դասական-ներկայացուցչություն, միապետություն, վարչակարգ:

МАРТИН МАНУКЯН

Преподаватель юридического факультета
Международного университета Евразия,
заявитель той же кафедры

ПАРЛАМЕНТАРИЗМ В ИСТОРИИ: ЕВРОПЕЙСКИЙ ОПЫТ:

Изучение исторического опыта европейских стран необходимо для понимания сути парламентаризма. Эта статья относится к эволюционному развитию парламентаризма в Англии, США и Франции в 18-9 веках и содержит важную информацию, касающуюся развития основных элементов парламентаризма.

Ключевые слова: Парламентаризм, парламентский, классический, монархия, режим

MARTIN MANUKYAN

Lecturer in the Law Department of Eurasia International University,
applicant of the same chair

PARLIAMENTARISM IN THE HISTORY: EUROPEAN EXPERIENCE

Studying of the historical experience of European countries is essential for understanding the essence of parliamentarism. This article refers to the evolutionary development of parliamentarism in England, USA and France in the 18-19th centuries and includes important information concerning the development of the main elements of parliamentarism.

Keywords: Parliamentary, parliamentary, classical, monarchy, regime

ՀԱՅԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ
 Հայ-Ռուսական համալսարան
 Իրավունքի և Քաղաքականության Ինստիտուտ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

Տվյալ հոդվածում ուսումնասիրվել են Խորհրդարանի մշտական հանձնաժողովների որպես խորհրդարանական վերահսկողության հատուկ սուբյեկտների կարգավիճակի սահմանման որոշ հիմնահարցեր, հետազոտվել են խորհրդարանական վերահսկողության տեսական հիմքերը, ինչպես նաև վերլուծված են ներպետական օրենսդրության իրավական ակտերի դրույթները Հայաստանի Հանրապետությունում Խորհրդարանի մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող խորհրդարանական վերահսկողության սահմանների (շրջանակների) սահմանման մասով:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում հատկորոշվել են մշտական հանձնաժողովների որպես խորհրդարանական վերահսկողության հատուկ սուբյեկտների կարգավիճակը սահմանող գործոնները, ինչպես նաև հիմնավորվել է վերջիններիս խորհրդարանական վերահսկողության լիազորությունների սահմանների (շրջանակների) հստակեցման և ընդլայնման անհրաժեշտությունը, գոյություն ունեցող սահմանադրական և օրենսդրական հակասական դրույթների պայմաններում՝ խորհրդարանական վերահսկողության արդյունավետ և գործուն համակարգի ձևավորման նպատակով:

Բանալի բառեր. խորհրդարան, մշտական հանձնաժողովներ, լիազորությունների սահմաններ (շրջանակ), խորհրդարանական վերահսկողություն, զսպման և հակակշիռների համակարգ

АЙК ЦАТУРЯН

Аспирант кафедры теории права и конституционного права
 Российско-Армянский университет
 Институт Права и Политики

ПОСТОЯННЫЕ КОМИССИИ ПАРЛАМЕНТА КАК ОСОБЫЕ СУБЪЕКТЫ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ

В данной статье рассматриваются некоторые вопросы, связанные с определением статуса постоянных комиссий Парламента как особых субъектов парламентского контроля, исследованы общетеоретические основы института парламентского контроля, проанализированы положения правовых актов внутринационального законодательства в части определения пределов осуществления парламентского контроля постоянными комиссиями Парламента в Республике Армения.

По результатам проведенного исследования были определены факторы, определяющие особый статус постоянных комиссий как субъектов парламентского контроля, а также установлена необходимость уточнения и расширения пределов полномочий парламентского контроля последних для формирования эффективной и действенной системы парламентского контроля в целом, в условиях существующих противоречивых конституционных и законодательных положений.

Ключевые слова: парламент, постоянные комиссии, пределы полномочий, парламентский контроль, система сдержек и противовесов.

HAYK TSATURYAN

PhD Student of The Department of Theory of Law and Constitutional Law
 Russian-Armenian University
 Institute of Law and Politics

STANDING COMMISSIONS OF PARLIAMENT AS A SPECIAL SUBJECTS OF PARLIAMENTARY CONTROL

This article describes issues related to definition of the status of the standing commissions of the Parliament as special subjects of parliamentary control, explored the theoretical foundations of the parliamentary control, analyzed the provisions of legal acts of the domestic legislation related to the definition of the limits of parliamentary control by standing commissions of the Parliament in the Republic of Armenia.

According to the results of the study were identified the factors defining the special status of standing commissions as subjects of parliamentary control, and also established the need of clarifying and expanding the limits of their powers of parliamentary control, in order to form an effective and efficient system of parliamentary control, under existing conflicting constitutional and legislative provisions.

Keywords: parliament, standing commissions, limits of power, parliamentary control, system of checks and balances.

ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Սույն հոդվածում հանգամանորեն լուսաբանված են մայրցամաքային եվրոպական ընդհանուր իրավունքի (jus commune) ձևավորման և զարգացման հիմնական փուլերը, որի հիմքում ընկած են հռոմեական իրավունքը և իրավական մշակույթը, եվրոպական կաթոլիկ եկեղեցու կանոնական իրավունքը և աստվածաբանական աշխարհընկալումը:

Հոդվածում նկարագրված է նաև Միջնադարյան իրավաբանների (գլոսատորները, մեկնիչները) դերակատարությունը իրավագիտության զարգացման հարցում, մասնավորապես, այն, որ նրանք սահմանեցին Արևմուտքում իրավագիտության բնույթը, նպաստեցին նրան, որ իրավունքը ձեռք բերեց միասնական մասնագիտական տերմինաբանություն և մեթոդ, ձևավորվեցին «ճշմարիտ օրենքների» գիտելիքին տիրապետող գիտական-իրավաբանների հատուկ դաս:

Բանալի բառեր. Հռոմեական իրավունք, եվրոպական ընդհանուր իրավունք, կանոնական իրավունք, կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսություն, հռոմեական իրավունքի ռեցեպցիա (ընդօրինակում):

ՏԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ

Соискатель Института Философии,
социологии и права НАН РА

ОСНОВНЫЕ ЭТАПЫ РАЗВИТИЯ ОБЩЕГО ПРАВА КОНТИНЕНТАЛЬНОЙ ЕВРОПЫ

В этой статье подробно освещены основные этапы формирования и развития континентального европейского общего права (jus commune), в основе которых лежат римское право и правовая культура, каноническое право европейской католической церкви и богословское мировоззрение.

В статье также описывается роль средневековых юристов (гlossators, толкователи) в развитии юриспруденции на Западе, в частности, что они определили характер юриспруденции на Западе, способствовали, чтобы право приобрело единую профессиональную терминологию, сформировали особый класс ученых-юристов со знанием "истинных законов".

Ключевые слова: Римское право, европейское общее право, каноническое право, идеология католической церкви, «рецепция» римского права.

SARGIS ARMENAKYAN

Phd student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

THE MAIN STAGES OF THE DEVELOPMENT OF THE COMMON LAW OF CONTINENTAL EUROPE

This article describes in detail the main stages of formation and development of continental European common law Jus commune, which are based on Roman law and legal culture, Canon law of the European Catholic Church and the theological worldview:

The article also describes the role of medieval lawyers (glossators, interpreters) in the development of jurisprudence in the West, in particular, that they determined the nature of jurisprudence in the West, contributed to the fact that the law acquired a unified professional terminology, formed a special class of legal scholars with knowledge of "true laws".

Keywords: Roman law, European common law, Canon law reception, the ideology of the Catholic Church, the reception of Roman law.

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
Արևմտյան մաքսատուն-վարչության
մաքսային տեսուչ-իրավաբան

«ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ» ԵԶՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Գիտական հոդվածում վերլուծվել է «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004թ. փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքում «վարչական ակտ» եզրույթի բնորոշումը՝ զուգահեռներ անցկացնելով արտասահմանյան երկրների վարչական իրավունքի տեսության մեջ վերջինիս տրված սահմանման հետ: Հայրենական իրավական համակարգում վարչական ակտի սահմանումն անհարկիրեն նեղացվել է՝ սահմանափակվելով բացառապես անհատական իրավական ակտերով, ինչը հակասում է վարչական ակտի բնորոշման միջազգային չափորոշիչներին և խաթարում է վարչարարության և վարչական ակտի բուն էությունը:

Բանալի բառեր. վարչական ակտ, վարչարարություն, անհատական իրավական ակտ, վարչական մարմին, հանրային իրավունք:

МАРГАРИТА ГАЗАРЯН

Таможенник-юрист
Западное таможенное управление
комитета государственных доходов РА

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ОПРЕДЕЛЕНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНЫХ И МЕЖДУНАРОДНЫХ ПРАВОВЫХ СИСТЕМ

В научной статье анализируется определение термина "административный акт" в Законе Республики Армения "Об основах административного действия и административном судопроизводстве", в то же время проводя параллель с определением термина в теории административного права зарубежных стран. Определение административного акта в национальной правовой системе ограничено индивидуальными правовыми актами, что противоречит международным стандартам характеристики административного акта и искажает суть администрации и административного акта.

Ключевые слова: административный акт, администрация, индивидуальный правовой акт, административный орган, публичное право.

MARGARITA GHAZARYAN

Customs officer-layer of
the Western Customs House Department
of the State Revenue Committee of RA

COMPARATIVE ANALYSIS OF THE TERM "ADMINISTRATIVE ACT" IN CONTEXT OF NATIONAL AND INTERNATIONAL LEGAL SYSTEMS

The following scientific article analyzes the definition of the term "administrative act" according to the Law of The Republic of Armenia "On Fundamentals of Administrative Action And Administrative Proceedings" at the same time drawing parallels with the definition given in the theory of administrative law of foreign countries. The definition of "administrative act" in the national legal system has been restricted to the extent of being limited to individual legal acts, which contradicts international standards for the characterization of an administrative act and distorts the very essence of administration and administrative act.

Keywords: administrative act, administration, individual legal act, administrative body, public law.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: